

16.

Հ. ԳԱԼԻԿՅԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ

ՅԵՎ

ԸՆՏԱՆԻՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ



Հ. ԳԱԼԻԿՅԱՆ

347.6

20567

43


ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ

Յ Ե Վ

ԸՆՏԱՆԻՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

A 38267

□ □ □





Գ Լ Ո Ի Խ Ա.

Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Ընտանեկան հարաբերությունները սխտեմն անմիջականորեն կախված ե հասարակութեան սոցիալ-տնտեսական տվյալ կառուցվածքից:

Պատմութեան մեջ նկատված առաջին դասակարգային հակասութեանն արտահայտված ե անհատական ամուսնութեան պայմաններում աղամարդու և կնոջ շահերի հակադրութեան մեջ, իսկ առաջին դասակարգային կեղեքումը՝ աղամարդ սեռի կողմից կին սեռի ստրկացման մեջ:

Անհատական ամուսնութեանն ինքնին հանդիսանում ե պատմական խոշոր առաջադիմութեան, բայց դա ստրկութեան և մասնավոր հարստութեան պայմաններում միաժամանակ հետադիմութեան ե:

Ժամանակակից (բուրժուական) ընտանիքը, ինչպես ճշտորեն վերլուծել ե Կ. Մարքսը, իր մեջ պարփակում ե մանրանկարն այն հակադրութեանների, վորոնք լայնորեն զարգացել են հասարակութեան և պետութեան մեջ:

Ինչի՞ վրա յե հիմնված բուրժուական ընտանիքը—կապիտալի, մասնավոր ճնշման վրա:

Սեռերի անհավասարութեանը, վոր գոյութեանն ունի կապիտալիստական հասարակարգում, վորը նվիրագործված ե յեկեղեցու և բուրժուական որենսդրութեան կողմից, ժառանգութեան ե մնացել նախկին հասարակական հարաբերութեաններից, արդյունք ե մասնավոր սեփա-

կանութեան սխտեմի և ինքնին հանդիսանում և վոչ թե պատճառը, այլ միայն հետևանքը կնոջ անտեսական կեղեքման:

Կնոջ ազատագրութեան հարցով զբաղվել են անցյալում վոչ միայն բուրժուական արմատական, այլև սոցիալիստական կուսակցութեաննները: Յեմինիստական շարժումը, վորտես կնոջ «ազատագրութեան» շարժում, միջանի տանյակ տարիների պատմութեան ունի, բայց հակառակ այդ բոլորին կապիտալիստական հասարակակարգում շարունակվում և կնոջ իրավազրկութեանը՝ թե քաղաքական և թե անտեսական տեսակետից՝ հտարակութեան մեջ և ընտանիքի ներսում:

Բուրժուական յերկրներում աշխատավոր կինը շարունակում է հեծել կրկնակի՝ անտեսական, դասակարգային և ընտանեկան, ամուսնական լծի տակ:

Լենինը «Յորհրդային իշխանութեանը և կանանց զրութեանը» վերնագրած իր հոդվածում ընդգծել է, վոր Շուստովորութեան, կուլտուրա, քաղաքակրթութեան, ազատութեան, — բոլոր այդ վիճակն խոսքերն աշխարհիս բոլոր կապիտալիստական բուրժուական հանրապետութեանններում միացած են անլուրորեն ստոր, զգվելիորեն կեղտոտ և գաղանորեն կոպիտ այն որենքների հետ, վորոնք նվիրագործում են կանանց անհավասարութեանը ամուսնութեան իրավունքի և ամուսնալուծութեան գծով, վորոնք սրբագործում են արտամուսնական և «որինածին» յերեխաների անհավասարութեանը, տղամարդու արտոնութեանններն ու կանանց ստորացումն ու ստրկացումը»:

Կանանց այս իրավազուրկ գրութեանը գոյութեան ուներ նաև ցարական Ռուսաստանում, նվիրագործված դարերի պատմութեամբ և սրբագործված յեկեղեցու կողմից:

Փետրվարյան հեղափոխութեանից հետո, Կերենսկու

ժամանակավոր կառավարութեան տիրապետութեան ամբողջ ժամանակաշրջանում վոչ մի արմատական փոփոխութիւն չկատարվեց կնոջ իրավագրկումը վերացնելու:

Կնոջ ազատագրութեան միակ ուղին դասակարգային պայքարի ուղին է: Հեղափոխական պրոլետարիատն իր դասակարգային պայքարի և հաղթանակի միջոցով միայն կարող եր արմատապես և վերջնականապես լուծել նաև կանանց ազատագրութեան պատմական հարցը:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխութեանը տապալելով բուրժուազիայի տիրապետութեանը և հաստատելով պրոլետարիատի իշխանութեանը, հիմնովին և լիովին լուծեց նաև կանանց հարցը, լիակատար իրավահավասարութեան ասպանովելով աշխատավոր կնոջ՝ քաղաքական, տնտեսական և ընտանեկան իրավունքների գծով:

Այժմ քննենք, թե Հոկտեմբերյան հեղափոխութեանն ինչպես կարգավորեց ամուսնական, ընտանեկան և խնամակալական փոխհարաբերութեանները:

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ ՓՈՆԱՐԵՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՄՈՒՍ- ՆՈՒԹՅՈՒՆ

Գրեթե բոլոր բուրժուական յերկրներում, Յեվրոպայում թե Ամերիկայում, վաղուց է, վոր յեկեղեցական իշխանութեանը կորցրել է միջնադարում ունեցած իր ազդեցութեանը: Այդ պատմական փաստն իր արտահայտութեանն ունեցել է նաև կրոնական կամ յեկեղեցական ամուսնութեան վրա: Մի շարք կապիտալիստական յերկրներում քաղաքացիական ամուսնութեան հետ միաժամանակ շարունակում է գոյութեան ունենալ նաև յեկեղեցական ամուսնութեանը:

բայց այդ յեկեղեցական ամուսնությունը չունի անցյալում
ունեցած իր հզորությունը, իր բացառիկ նշանակությունը:

Բուրժուազիան իշխանության գլուխ անցնելուց հետո
կրոնն սպառազործում է այն չափով, ինչ չափով դա նպաստում
է իր դասակարգային շահերին. բուրժուազիան կրոնի միջո-
ցով աշխատում է մթության, գերության մեջ պահել աշ-
խատավորական մասսաներին, աշխատում է թմրեցնել
նրանց դասակարգային գիտակցությունն ու ինքնաճանա-
չողությունը, իր դասակարգային տիրապետությանն սպառ-
նացող մոտալուս վտանգից խուսափելու հուսով: Այդ է
պատճառը, վոր նույնիսկ այն յերկրներում, որինակ Ֆրան-
սիայում, վորտեղ միայն քաղաքացիական ամուսնություն
գոյություն ունի, քաղաքացիական այդ ամուսնությունն
ըստ եյության ունի կրոնական բովանդակություն: Նախա-
հոկտեմբերյան շրջանում յեկեղեցական ամուսնությունն
եր միայն, վոր իշխանության կողմից որինական եր ճա-
նաչվում, իսկ քաղաքացիական ամուսնությունը համարվում
էր ամուսնացողների ներքին մասնավոր գործը, ուրիշ
խոսքով՝ վոչ-յեկեղեցական ամուսնությունը փոխադարձ
իրավունքներ ու պարտավորություններ չեր ստեղծում
ամուսինների համար:

Առաջին մահացու հարվածը, վորը Հոկտեմբերյան
հեղափոխությունը հասցրեց կրոնական իշխանությանը,
հետևաբար նաև յեկեղեցական ամուսնությանը, դա յեկե-
ղեցին պետությունից բաժանելու պատմական դեկրետն եր:

1918 թվի դեկտեմբերին հրատարակված քաղաքացի-
ական կացության ակտերի որենսագրքով (վորը Սորհրդային
Հայաստանում գործադրության դրված է 1920 թվի դեկ-
տեմբերի 21-ից) պրոլետարիատի իշխանությունը ամուս-
նական հարաբերությունների ամբողջ կարգավորումը վերջ-
նականապես վերցրեց կրոնական իշխանությունից և հանձ-

նեց քաղաքացիական իշխանության, այսինքն Ջազսի որ-
գաններին: Այդ թվականից հետո այլևս խորհրդային բո-
լոր հանրապետություններում իշխանության կողմից որի-
նական ճանաչված միակ ամուսնությունը Ջազսում տո-
մարադրված ամուսնությունն էր. իսկ յեկեղեցական ամուս-
նությունը համարվում է միայն ամուսնացողների ներ-
քին անձնական գործը, ճիշտ այնպես, ինչպես նրանց
կրոնական համոզումները:

Ի՞նչ է հետևում սրանից—այն, վոր Հոկտեմբերյան հե-
ղափոխությունից հետո մենք ժխտում ենք կրոնական կամ
յեկեղեցական ամուսնության իրավական նշանակությունը,
վոր յեկեղեցական ամուսնության փաստը կամ այդ մասին
տրվող փաստաթղթերը իշխանության վորևե որգանի,
նույնպես և դատարանների համար վոչ մի ուժ չունեն
և հետևաբար նման ամուսնությունից որենքով նախա-
տեսված իրավունքներ և պարտականություններ չեն
բղխում:

Ի՞նչ վերաբերմունք ցույց տվեց խորհրդային իշխա-
նությունը նախախորհրդային շրջանում տեղի ունեցած
ամուսնություններին: Քանի վոր նախկին ցարական իշխա-
նության ժամանակ որինավոր ճանաչված միակ ամուս-
նությունը յեկեղեցական ամուսնությունն էր, բնակա-
նաբար խորհրդային իշխանությունը հարկադրված պետք է
լիներ հաշտվել այդ պատմական փաստի հետ և իրավա-
կան պաշտպանության տակ առներ նախկին կրոնական
ամուսնություններից բղխող իրավահարաբերությունները,
վորոնք հիմնականում շոշափում էին տնտեսապես թույլ
կնոջ, այլև յերեխաների կենսական շահերը:

2. ՏՈՄԱՐԱԳՐՎԱՆԻ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ, ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒ-
ԹՅՈՒՆԸ

Ժխտելով յեկեղեցական ամուսնութեան իրավական նշանակութիւնը, խորհրդային իշխանութիւնը հաստատեց քաղաքացիական ամուսնութիւնը, այլ խոսքով՝ Ձազսի որդաններում տոմարազրվող ամուսնութիւնը:

Ի՞նչ նպատակ է հետապնդում ամուսնութեան տոմարազրութիւնը:

Յեթե մենք, ընդունում ենք, վսր ամուսնութիւնը քաղաքացիների ներքին անձնական գործն է, ապա ինքնին հարց է ծագում, թե ամուսնութեան տոմարազրութիւնը պետական և հասարակական, այլև մանկութեան և մայրութեան շահերի պաշտպանութեան տեսակետից վորևէ անհրաժեշտութիւն կամ առավելութիւն ներկայացնում է թե վոչ:

Այս կարևոր հարցին պատասխան է տալիս 1927 թվից գործադրութեան մեջ գտնվող ներկա «Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսդրքի» 1 հոդվածը, վորն ասում է. «Ամուսնութեան տոմարազրութիւնը սահմանվում է ինչպես պետական և հասարակական շահերի տեսակետից, այնպես էլ ամուսինների և զավակների անձնական և ստացվածքային իրավունքների պաշտպանութիւնը դյուրացնելու համար»:

Ի՞նչ պետական և հասարակական նպատակ է հետապնդում ամուսնութեան տոմարազրութիւնը:

Ճիշտ է այն հանգամանքը, վոր ամուսնութիւնն ինքնին պատմական մի փաստ է, մի ինստիտուտ, վորն ապագա կոմունիստական հասարակակարգում կորցնելու յե իր նշանակութիւնը: Բայց այնքան, վորքան մենք դեռ ասլրում ենք փոխանցման ժամանակաշրջանում, պետութիւնը կարող է

արդյոք ամուսնական հարաբերութիւններէ վրա նայել վորպէս տղամարդու և կնոջ անձնական սեռային կյանքի մոմենտի, անուշադրութեան մատնելով այն վիաստը, վոր ամուսնական հարաբերութիւններէ ձևը կազմում է հասարակական հարաբերութիւններէ կարևոր մի բնագավառը, շողկապիւծ մի շարք բարդ կենցաղային յերեվութիւններէ հետ:

Ամուսնութեան տոմարագրութեան պետական-հասարակական պատմականորեն կարևոր մեկ նշանակութիւնը, հատկապէս խորհրդային իշխանութեան սկզբնական շրջանում, կայանում է նրանում, վոր դրանով հեղափոխական պրոլետարիատը վերջնականապէս նսեմացնում, քայքայում էր յեկեղեցին, նրա ազդեցութիւնը, նրա հակահեղափոխական դերը: Ամուսնութեան տոմարագրութիւնը քաղաքացիական և կրօնական իշխանութիւններէ պատմական պայքարի գործոններէց մեկն է, վորի միջոցով աշխատավորական լայն մասսաներին խորհրդային իշխանութիւնը ազատագրելով յեկեղեցու կապանքներից և նրա հետ կապիւծ կենցաղային հիվանդադին յերևութիւններէ, սովորութիւններէ և տրադիցիաների ազդեցութիւնից, նրանց անմիջականորեն կապում էր պետական որգանի հետ, առնելով այդ մասսաներին իր անմիջական ազդեցութեան տակ և այդպիսով ճանապարհ հարթելով դեպի նոր—հեղափոխական կենցաղը:

Մական բացի այս պատմական քաղաքական նշանակութիւնից, ամուսնութեան տոմարագրութիւնը պետութեան և հասարակութեան համար ներկայացնում է հետևյալ մի շարք կարևոր շահագրգռութիւնները.

ա) Ամուսնացողներէ տարիքի և առողջութեան հարցն անմիջապէս շոշափում է ապագա սերնդի կենսական շահերը և այդ տեսակետից հրամայականորեն պետք է արժանա-

նա իշխանության ուշադրութեանն ու կենտրոնին, սոցիալիզմի կառուցման պատմական գործն ավարտելու կոչված վաղվա սերունդն առողջ, կենսունակ ու առևան զարճելու համար:

բ) Ամուսնութունն իր անմիջական ազդեցութեանն ունի նաև ընտրական իրավունքի վրա, քանի վոր ձայնագուրկ ամուսնու խնամքի տակ դանխոդ մյուս ամուսինը նույնպես չի կարող սգտվել ակտիվ և պասսիվ ընտրական իրավունքից:

գ) Բնակարանային որենսդրութիւնը բնակելի տարածութեան բաշխման, վտարման և բնակվարձի խնդիրներում հաշվի յե առնում ամուսնական հարաբերութիւնները:

դ) Հողային հարաբերութիւնները բնագավառում, հատկապես ծխի բաժանութեան հարցում, ամուսնութիւնը խաղում ե կարևոր դեր:

Ի՞նչ նպատակ ե հետապնդում ամուսնութեան տոմարագրութիւնը մայրութեան և մանկութեան շահերի պաշտպանութեան գծով:

Ամուսնութիւնը կողմերի համար ստեղծում ե մի շարք իրավունքներ ու պարտականութիւններ վոչ միայն իրար հանդեպ, այլ ամուսնութիւնից ծնվող զավակները նկատմամբ:

Բացի նյութական այն ոժանդակութիւնից, վոր ամուսիններից մեկը պարտավոր ե ցույց տալ մյուսին որենքով սահմանված դեպքերում և չափով, ամուսնութիւնը կողմերի համար ստեղծում ե նաև ընդհանուր սեփականութիւն և այդպիսով վորոշ ապահովութիւն ե ստեղծում տնտեսապես թույլի, անաշխատունակ և գործազուրկ ամուսնու համար:

Տարակույս չկա, վոր իշխանութիւնը, վոր կոչված ե սոցիալական ապահովութիւն ցույց տալ անաշխատունակներին, այլև գործ հայթայթել գործազուրկներին, նյութական տեսակետից շահագրգռված ե ամուսինների ստաց-

վածքային հարաբերութիւնները կարգավորելու և սոցիալական ապահովագրական որդաններէ հոգան ըստ հասարակութեան թեթևացնելու խնդրում¹։

Յերեխաներէ անձնական և ստացվածքային շահերէ պաշտպանութիւնը թե անապաստանութեան սոցիալական չարիքի դեմ կռիւնը ուղղութեամբ և թե յերեխաներին առողջ հեղափոխական դաստիարակութիւնն ապահովելու տեսակետից, միանգամայն շահադրողութիւնն ներկայացնող հասարակական, պետական մի խնդիր է, իսկ ամուսնութեան տոմարադրութիւնը կոչված է մեծապես նպաստելու այդ հարցի բարվոք լուծմանը, կոչված է դյուրացնելու մանկութեան կենսական շահերի պաշտպանութիւնը։

Ի՞նչ ձևով. Զազար տոմարադրութիւնն, ինչպես ճիշտ ձևակերպված է Որենսգրքի 2 հոդվածում, ամուսնութեան փաստի անվիճելի ապացույցն է հանդիսանում և հետևաբար ասլըուստի ոժանդակութիւնն զգացող ամուսինը կամ յերեխայի գոյութիւնը նյութապես ապահովելու կարիքն ունեցող ծնողը հեշտութեամբ կարող է պահանջել և ի հարկին դատական կարգով պարտադրել,

¹ Սորհրդային իշխանութիւնն արդեն վոչ միայն վերջնականապես լուծել է գործադրկութեան հարցը, վոր այժմ կըրծում է կապիտալիզմի որդանիզմն սմբողջ աշխարհում, այլ հրահայական և աննախընթաց տեւպերով զարգացող մեր սոցիալիստական տնտեսութիւնն ամեն տարի միլիոնավոր ձեռքերէ նոր պահանջ է առաջադրում։

Ամուսնութեան ներկա որենսդրութիւնը ընդունված լինելով մեր ժողովրդական տնտեսութեան վերակառուցման սկըզբնական շրջանում (1927 թվին), բնականաբար հաշվի պետք է առնել այդ ժամանակաշրջանում դեռևս մեղ մտտ գոյութիւն ունեցող մասսայի գործադրկութիւնը և հետևաբար ամուսնական իրավունքի գծով ևս պետք է կարգավորել գործադրկ ամուսինների ստացվածքային (հատկապես ասլըուստի) փոխհարաբերութիւնը։

վոր մյուս ամուսինը իր և յերեխայի հանդեպ կատարի որենքով սահմանված պարտավորությունները: Այն դեպքում, յերբ ամուսնությունը չի տոմարագրված, խիստ բարդանում և ոժանդակության կարոտ ամուսնու կամ ծնողի դրությունը, քանի վոր նա պարտավոր և ապացուցել, վոր ավյալ անձը իր ամուսինն և կամ իրենից ծնված յերեխայի հայրը, մի խնդիր, վոր ընդհանրապես միայն դատական վճռով կարող և լուծվել և վորպիսի հարցի լուծումը կամ լուծման ճշգրտումը կարող և բացասաբար անդրադառնալ ապրուստի կարոտ անձերի դրության վրա: Յե՛վ քանի վոր ընդհանուր առմամբ կլինն և, վոր նյութապես անապահով դրության մեջ և դռնվում և հիմնականում նրա վրա յե ծանրանում անչափահաս յերեխաների անձնական խնամքը, ապա ինքնին հասկանալի յե, վոր ամուսնության տոմարագրությունը վորպես պետական իշխանության մի որգանի կողմից տեղի ունեցած պաշտոնական ակտ, մեծապես դյուրացնում և մայրության և մանկության շահերի պաշտպանությունը:

3. ՓԱՍՏԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Ռուսաստանում 1918 թվի դեկտեմբերից, այսինքն «Քաղաքացիական կացության ակտերի որենսգրքի» գործադրության մեջ զրվելուց հետո մինչև 1927 թվի հունվարի 1-ը որինական եր համարվում Ջագսի որգաններում տոմարագրված ամուսնությունը միայն, իսկ այդ թվականից հետո, յերբ գործադրության զրվեց «Ընտանիքի, ամուսնության և խնամակալության» ներկա որենսգիրքը, տոմարագրված ամուսնությունից զատ ընդունվեց նաև այսպես կոչված փաստական ամուսնությունը: Փաստական ամուսնությունը Խորհրդային Հայաս-

տանում իր որենադրական ձևակերպումն ստացավ ՀՄՍ
Հանրապետության 5-րդ գումարման Կենտրոնական գոր-
ծադիր կոմիտեյի 2-րդ նստաշրջանի կողմից, 18 սեպ-
տեմբերի 1927 թվին ընդունված «Ամուսնութեան, ընտանիքի
և խնամակալութեան որենադրքով», վորը կիրարկման մեջ
դրվեց նույն թվի նոյեմբերի մեկից:

Ամենից առաջ անհրաժեշտ է հիմնավորումը տալ փաս-
տական ամուսնութեան, հասկանալու համար, թե ինչ
դրդասպատճառներով իրավական պաշտպանութեան տակ առ-
նվեց նաև այդ խնամատուտը:

Պետք է ընդգծել, վոր ամուսնութեանից բղխող իրա-
վաբանական հետևանքները (իրավունքներ և պարտակա-
նութեաններ) ըստ եյուլթեան բղխում են վոչ թե ամուս-
նութեան արձանագրութեան փաստից, այլ ամուսնութեան
փաստից, և հետևաբար Զադսի տոմարագրութեանը վոչ
այլ ինչ է, յեթե վոչ գոյութեան ունեցող ամուսնութեան
փաստը հաստատող մի ակտ: Բայց վորպեսզի հնարավոր լի-
նի փաստական ամուսնութեանը, վորը կողմերի համար
սակզոնում է նույն իրավունքներն ու պարտականութեան-
ները, վորոնք որենքով նախատեսված են տոմարագրված
ամուսնութեան համար, տարբերել մարդկանց պատահական
սեռային կենսակցութեանից, վորը նման ձևով կենսակցող-
ների համար վորևե իրավական հետևանք չի առաջաց-
նում, անհրաժեշտ է լուսաբանել փաստական ամուսնու-
թեանը ընտրող հանգամանքները:

Նախքան այս հարցին պատասխանելը կարևոր է
արձանագրել այն հանգամանքը, վոր փաստական ամուս-
նութեանը թելադրվեց կյանքի կողմից, քանի վոր ուսում-
նասիրութեանը ցույց տվեց, վոր բանվորական և աշխա-
տավորական մասսաների մեջ բավական զգալի թիվ էյին
կազմում այն ամուսնութեանները, վորոնք տեղի ունեցել

եյին առանց Ջադսում տամարազրվելու և վորպիսի փաստական ամուսնական հարարերու թյունների մեջ դանվողները բնավ ել անհրաժեշտ չեյին համարում պաշտոնական վավերացման յենթարկել իրենց ամուսնության փաստը:

Մյուս կողմից Ջադսի տամարազրության միջոցով յեկեղեցական պսակի դեմ կովելու շահազրդությունը ժամանակի ընթացքում կորցնում եր իր սկզբնական կարևորությունը, քանի վոր հեղափոխության առաջին տասնամյակի ընթացքում մեր ձեռք բերած քաղաքական և կուլտուրական հսկա նվաճումներից հետո բանվորական, աշխատավորական լայն մասսաներն արդեն վերջնականապես ճրջանել էյին իրենց բացասական վերարբերմունքը դեպի հակահեղափոխական այդ հաստատությունը՝ յեկեղեցին և ազատազրվելով նրա թմրեցնող ազդեցությունից, այլև առհասարակ հին կենցաղի հիվանդաղին յերևույթները, վրձնական քայլեր էյին արել դեպի նոր՝ հեղափոխական կենցաղը:

Այս տեսակետից փաստական ամուսնությունը անցյալի հետ համեմատած սկզբունքորեն առաջդիմական մի նորություն եր հանդիսանում, և որենսդիրը չեր կարող սանկցիայի չենթարկել մասսաների ձեռք բերած հասարակական-կենցաղային այդ նվաճումը և պաշտպանության տակ չառնել փաստական ամուսնությունից բղխող իրավունքները:

Փաստական ամուսնության հատկանիշները մի ընդհանուր հայտարարի դժվար ե վերածել, բայց յեթե կան սովյալներ այն մասին, վոր կինն ու տղամարդը փոխադարձ համաձայնությամբ կամովին կենակցում են իրար հետ և այդ կենակցությունից բղխեցնում են անձնական և տնտեսական-աշխատավորական (ստացվածքային) հարարերություններ, վոր նրանք իրար ճանաչում են վորպես

ամուսիններ և վորպես այդպիսին ներկայանում են յերրորդ անձնավորությունների խորհրդային հասարակայնության առաջ, ապա նման տվյալներից կարելի յե յեզրակացության դալ, վոր նրանք փաստական ամուսնության մեջ ինչ Զագսում տոմարադրության բացակայությունը, ուրիշ խոսքով՝ ամուսնության պաշտոնական ձևակերպման չդոյությունը ըստ եյության չի կարող ժխտել ամուսնության փաստը:

Ինչպես խորհրդային մյուս հանրապետությունները որենսդրությունը, նույնպես և խորհրդային Հայաստանի «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսդիրքը» թվում ե մի շարք հատկանիշներ, վորոնք համարվում են փաստական ամուսնության ապացույցներ:

Որենսդրքի 12 հոդվածը նախատեսում ե. «Մյն դեպքում, յերբ ամուսնությունը տոմարադրված չե, ամուսնական կենակցության ապացույց են հանդիսանում դատարանի համար՝ նայած հանդամանքներին — միատեղ կենակցելու փաստը, յերբ կենակցության պահին դոյություն տնի ընդհանուր տնտեսություն, ամուսնական հարաբերությունների արտահայտությունը յերրորդ անձանց առջև, անձնական զրադրության մեջ և այլ փաստաթղթերում կամ փոխադարձ նյութական ոժանդակությունը, զավակներին միատեղ դաստիարակելը և այլն»:

Որենսդիրը վերոհիշյալ թվարկումով չի սահմանափակում փաստական ամուսնությունն ապացուցող նշավակները, քանի վոր դատական պրակտիկան կարող ե տալ նաև մի շարք այլ ապացույցներ՝ նույնքան համոզեցուցիչ, հիմնավոր ու կենդանի, ինչ վոր թված ե Որենսդրքում: Սրանից հետևում ե, վոր դատարանները, վորոնք կոչված են լուծելու փաստական ամուսնության վերաբերյալ վիճերը, անհրաժեշտ ձեռներեցություն և աչալրջություն ի հայտ

պետք է բերեն փաստական ամուսնութիւնը պատահական սեռային կենսակցութեան փաստից տարբերելու համար, վորպէսզի կարենան՝ ա) որինական պաշտպանութիւնը ջուրջ տալ փաստական ամուսնութեան մեջ յեզոզ անձնավորութիւններին, և բ) թույլ չտան, վոր պատահական սեռային կենսակցութիւնը վարագուրվի փաստական ամուսնութեան շղարշով և դարձվի նյութական միջոցներ կորզելու շանտաժի մի միջոց:

Ավելորդ չէ ավելացնել, վոր ներկա որենսդրութիւնը վոչ միայն ճանաչում է փաստական ամուսնութիւնը, այլ ըստ ելութեան, նրանից բզխող իրավունքների և պատահանութիւնների տեսակետից վոչ մի տարբերութիւն չի դնում տոմարագրված և չտոմարագրված փաստական ամուսնութեան միջև: Մնում է, հետևաբար, վոր քաղաքացիներն ըստ իրենց հայեցողութեան ընտրեն վերտիշյալ յերկու ձևի ամուսնութիւններից մեկը, մոռացութեան չտալով միայն այն գործնական առավելութիւնը, վոր ներկայացնում է տոմարագրված ամուսնութիւնը՝ ամուսնինների և զավակների անձնական և ստացվածքային իրավունքների պաշտպանութիւնը դյուրացնելու տեսակետից:

Որենսդիրը հնարավորութիւն է տալիս փաստական ամուսնութեան մեջ յեզոզներին ուզած ժամանակ տոմարագրելու Ձազում իրենց հարաբերութիւնները, հիշատակելով, թէ իրենք փաստորեն վորքան ժամանակ են միասին ապրում: (Տես Որենսդրքի 3 հոդվածը):

4. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ամուսնութեան համար պահանջվում են մի շարք պայմաններ վորոնցից զլիսավորները հետևյալներն են.

II
38267


տ. Տարիք կամ ամուսնական չափաճասութիւն

«Ամուսնութեան, ընտանիքի և ինամակալութեան որենսդրքի» նախադէժն ինչպէս խորհրդային մյուս հանրապետութեաններում, նույնպէս և մեզ մոտ՝ Խորհրդային Հայաստանում, հասարակական լայն մասսաների քննութեանն առաջադրվելիս ամենից ավելի մտքերի լայն փոխանակութիւն և տարածայնութիւն առաջ յեկալ ամուսնական չափահասութեան հարցի շուրջը:

Ընդհանուր տրամադրութիւնն այն էր, վոր ամուսնական տարիքը պետք է բարձրացնել. մինչ այդ ինչպէս Խորհրդային Ռուսաստանում, նույնպէս և մեզ մոտ, ամուսնական տարիքը սահմանված էր տղամարդու համար՝ 18, իսկ կանանց համար՝ 16: Ամուսնական չափահասութեան համար յերկու սեռի համար ևս տարիքի բարձրացման ոգտին առաջ բերված պատճառաբանութիւններից և նկատումներից կարևորները հետևյալներն են.

Թե սեռային նորմալ կյանքով ապրելու և թե առողջ սերունդ ապահովելու համար անհրաժեշտ է, վոր ամուսնացողները ընախոսական տեսակետից վերջնականապէս կազմավորված, ամրացած լինեն, քանի վոր դեռահաս ամուսնութիւնը վոչ միայն կարող է քայքայել ամուսնացողների առողջական դրութիւնը, այլև պատճառ է դառնում տխեղծ, անառողջ, սակավարյուն սերնդի: Բնականաբար պետութիւնը պետք է մտահոգված լինի ինչպէս նոր սերնդի, նույնպէս և քաղաքացիների առողջական դրութեամբ, քանի վոր դա կապ ունի նրանց վոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր-հոգեկան ուժերի հասարակական ոգտավետութեան հետ:

Կարևոր նկատումներմից մեկն էլ այն է, վոր քաղաքացիները նախքան ամուսնութիւնը պետք է հնարավորութիւն ունենան ստանալու վոչ միայն ընդհանուր կր-



Թուօթյուն, այլ պետք է ձեռք բերեն նաև վարող մասնա-
գիտություն, վոչ միայն ապագա ընտանիքը տնտեսապես
ապահովելու, այլև ողորակելու հասարակական գործունեյու-
թյուն ունենալու համար:

Հսկում էլին ձայներ նաև այն մասին, վոր մեր յե-
րիտասարդ սերնդին ազատելով վաղաժամ ամուսնու-
թյունից և նրա հետ կապված ընտանեկան-կենցաղային
և տնտեսական հոգսերից, նրանց կարելի յե կապել մեր
պետական-հասարակական կյանքի տարբեր-քնադավառ-
ների աշխատանքներին և այդպիսով լրացնել յերիտասարդ
կադրերի այն պակասը, վորն զգացվում է սոցիալիզմ կա-
ռուցող մեր յերկրում: Վերջապես առաջ եր քաշվում այն
տեսակետը, թե անհրաժեշտ է քաղաքացիական և ամուս-
նական չափահասության հասակը հավասարեցնել: Նախ-
քան լուսաբանությունն այն որենսդրական մոտիվները,
վորոնց համաձայն խորհրդային Հայաստանի որենսդրությամբ
սահմանված ամուսնական չափահասությունը յերկու սե-
ռերի համար ել անփոփոխ թողնվեց նոր որենսդրքում,
ավելորդ չեմ համարում միքանի վիճակագրական տվյալ-
ներ հիշատակել Յեվրոպայի և Ամերիկայի մի շարք պե-
տություններում ընդունված ամուսնական տարիքի մասին:

Թողնելով մի կողմ Արևելքի մի շարք պետություն-
ները (որ՝ Պարսկաստան, Արաբիա, Տաճկաստան և այլն,
վորտեղ 9 տարեկան կինը և 12—14 տարեկան տղամարդը
ամուսնության համար չափահաս են համարվում), հիշենք
տնտեսապես և կուլտուրապես ավելի առաջադեմ համարված
հետևյալ յերկրները. Արգենտինա, Ավստրալիա, Իսպանիա,
Հյուսիսային Ամերիկայի նահանգներից Վիրջինիա, Լուիզի-
անա և այլն՝ աղամարդու համար սահմանել են 14, իսկ
կանանց համար 12 տարիքը՝ վորպես ամուսնական
չափահասության հասակ: Միացյալ նահանգների մի շարք

այլ նահանգներում տղամարդու համար սահմանված է 15—17, իսկ կանանց համար՝ 13—15 տարիքը, Յապոնիայում, Սերբիայում, Ռուսիայում, Բուլղարիայում, Հոլանդիայում ընդունված է կանանց համար՝ 15, իսկ տղամարդկանց համար 17—18 տարիքը: Համեմատաբար ամուսնական չափահասուլթյան ավելի բարձր տարիք գոյություն ունի Գերմանիայում (կանանց 16, տղամարդկանց 21), Շվեդիայում (18 և 21), Նյու-Յորկում (18 և 20) և այլն:

Ցարական տիրապետության շրջանում Անդրկովկասում 14 տարեկան կանայք ամուսնության համար չափահաս ելին համարվում:

Շահեկան է իմանալ այն մասին, վոր մի շարք բուրժուական յերկրներում թույլ է տրվում ամուսնանալ նաև որենքով սահմանված հասակին չհասնելուց առաջ: Այդ իրավունքը վորոշ յերկրներում վերապահված է հանրապետության նախագահին կամ միապետին (որինակի համար Իտալիայում). ուրիշ յերկրներում նման թույլտվություն կարող է տալ կրոնական իշխանությունը (Վենգրիա):

Տարակույս չկա, վոր խիստ դեռահասների ամուսնությունը վոչ միայն իրենց՝ ամուսնացողների, այլև հասարակության համար միանգամայն մնասակար, քայքայիչ հետևանքներ կարող է ունենալ: Ճիշտ է խորհրդային մի իրավագետի այն կարծիքը, թե՛ «մանկահասակների ամուսնությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ ամուսնության միջոցով նրանց բռնաբարումը»: Ամուսնության տարիքը սահմանելիս անհրաժեշտ է անշուշտ հաշվի առնել տվյալ յերկրի կլիմայական, տնտեսական, կենցաղային և սոցիալական պայմանները և միաժամանակ աչքաթող չանել այն եյական հարցը, վոր որենքը սահմանելիս պետք է ապահովել նրա իրական, կիրառելի վինելու և հետևաբար ամուսնական

հարաբերություններն որենքի ներգործության տակ առնելու գործնական հնարավորությունը

Մեզ մտա՛ Անդրկովկասում շնորհիվ կլիմայական պայմանների, մի կողմ թողնելով նաև կենցաղային առանձնահատկությունները, յերկու սեռի քաղաքացիներն ելանհամեմատ ավելի շուտ են հասունանում, բնախոտորեն կազմակերպվում ու ամրանում, քան դաշնակից այն հանրապետություններում, վորոնք դեպի հյուսիս են ընկնում:

Խորհրդային Ռուսաստանի Առողջապահական ժողովրդական կոմիտեիատին կից բժշկական խորհուրդը դեռ տարիներ առաջ հատուկ քննության առարկա դարձնելով ամուսնական չափահասության խնդիրը, իր հեղինակավոր խոսքն է ասել այն մասին, վոր ընդհանուր առմամբ 16 տարեկան կանայք և 18 տարեկան տղամարդիկ ամուսնության համար չափահաս պետք է համարվեն: Յեթև գլխական հեղինակավոր մի մարմնի այս յեզրակացությունը նկատի ունի ռուսական միջավայրը, ապա Անդրկովկասի, նաև Հայաստանի համար ինքնին հասկանալի յե, վոր ամուսնական չափահասության այդ հասակը բժշկական տեսակետից ընդունելի և կիրառելի պիտի համարել:

Վոչ վոք չի կարող ժխտել այն նպատակահարմարությունը, վոր ամուսնությունը տեղի ունենա որենքով սահմանված հասակից տարիներ հետո, բայց որենսդիրը, վոր պետք է լինի ռեալիստ, չի կարող սահմանել մի այնպիսի տարիք, վոր մնա թղթի վրա, իսկ իր շուրջն ամեն որ տեղի ունենան բազմահազար փաստական ամուսնություններ, վորոնցից բղխող իրավահարաբերությունները մնան առանց որինական պաշտպանության: Ահա մոտավորապես այն շարժառիթները, վորոնց հիման վրա մեր կենտրոնական գործադիր կոմիտեյի նստաշրջանը վորոշեց Խորհրդային Հայաստանում անփոխոխ թողնել ամուսնական հա-

սակր, այսինքն կանանց համար 16, իսկ տղամարդկանց համար 18 տարիքը (տես Որենսգրքի 5 հոդ.):

Սահմանելով ամուսնական չափահասությունը, խորհրդային իշխանությունը միաժամանակ դատական կարգով պայքարում ե կենցաղային այն հանցագործություններին դեմ, վորոնք կապված են անչափահասների ամուսնության հետ:

Բնականաբար դատական հակադեցությունը հին կենցաղից մեղ ժառանգություն մնացած հիվանդազին յերեւելութենքի դեմ պայքարի միակ միջոցը չէ. հսկայական կուլտուր-լուսավորական ու ազնիտացիոն աշխատանք պետք ե թափել նոր՝ սոցիալիստական հիմունքներով կենցաղ ստեղծելու համար, բայց կենցաղային յերևութենքից մի շարքը վորպես սոցիալապես վտանգավոր՝ անհրաժեշտ են դարձնում նաև քրեական պատասխանատվության միջոցների կիրառումը, հատկապես տնտեսապես և կուլտուրապես հետամնաց ազգային փոքրամասնությունների մեջ և այն վայրերում, վորտեղ լայն չափեր են ստացել նման հանցագործությունները:

Խորհրդային Հայաստանի Քրեական որենսգրքի 190 հոդվածը ամուսնական տարիքի չհասած անձի հետ ամուսնացողների և այդպիսի ամուսնության բռնադատողների համար սահմանում ե ազատազրկում մինչև յերեք տարի ժամանակով: Իսկ արքունքի չհասած անձի հետ ամուսնացողները կամ այդպիսի ամուսնության բռնադատողները յենթարկվում են ազատազրկման մինչև ութ տարի ժամանակով:

Նկատված են բազմաթիվ դեպքեր, յերբ քաղաքացիները ցանկանալով ամուսնանալ անչափահասի հետ և տեսնելով, վոր Զազսի որդանները հրաժարվում են տոմարագրել իրենց ամուսնությունը, դիմում են յեկեղեցու ոգնության

և յեկեղեցական պատկի միջոցով ձեակերպում են իրենց ամուսնությունը, սրբագործում են իրենց կատարած ապօրինությունը:

Պայքարելու համար այս սոցիալական-կենցաղային շարիքի դեմ, վորի բույնը հանդիսանում և հակահեղափոխական յեկեղեցին, խորհրդային իշխանությունն արգելում և ամուսնության կրոնական ծիսակատարումը այն բոլոր դեպքերում, յերբ ամուսնացողներն որենքով սահմանված չափահասությունը չունեն: Խորհրդային Ռուսաստանի Գերագույն դատարանը տվել և պարզաբանություն, վոր վերոհիշյալ կարգը խախտող յեկեղեցական պաշտոնյաներին պետք և յենթարկել քրեական պատասխանատվության: Այդ խնդրում տարբեր տեսակետի վրա չի կարող կանգնած լինել նաև Խորհրդային Հայաստանի արդարադատությունը:

բ. Առողջություն

Ինքնին հասկանալի յե, վոր ամուսնացողների առողջության հարցը, հատկապես ապագա սերնդի տեսակետից, մեծ կարևորություն և ներկայացնում:

Յեթե առողջության հարցի տեսակետից մենք մի հայացք զցենք բուրժուական որենսդրության վրա, պիտի տեսնենք, վոր մի շարք բուրժուական յերկրներ ամուսնության արգելք համարում են սեռական կյանքով ապրելու անկարողության հանգամանքը. սերնդագործելու անկարողությունը վորպես ամուսնության արգելք հանդիսացող հիվանդություն՝ գրեթե հաշիվ չի առնվում: Վերջին ժամանակներս միջանի բուրժուական պետություններ սկսեցին ուշադրություն դարձնել հատկապես վեներական հիվանդությունների վրա: Որինակ, Շվեդիայում վեներական հիվանդոսները և լուսնոտները վարակման ժամանակաշրջանում իրա-

վունք չունեն ամուսնանալու. բայց թագավորն իրավունք ունի նման հիվանդների թուլյատրելու ամուսնանալու Գերմանիայում, 1920 թվին ընդունված որենքի համաձայն, քաղաքացիական կացության ակտերի պաշտոնյաներն ապագա ամուսիններին և ամուսնության համաձայնություն տալու իրավունք ունեցող անձերին հիշեցում են ուղարկում բժըղկական քննության կարևորության մասին: Յնթե վերցնենք ամենանոր ամուսնական որենսդրությունը (Մեքսիկայի), պիտի տեսնենք, վոր դրանով պահանջվում է վոչ պակաս, քան յերկու բժիշկների ստորագրությամբ վկայական այն մասին, վոր ամուսնանալ ցանկացողները հոգով և մարմնով առողջ են:

Ինչպես և դրված առողջության խնդիրը խորհրդային որենսդրության մեջ:

Նախկին Որենսդիրքը նախատեսում էր, վոր «ամուսնացողները պետք է մտավորապես առողջ լինեն. անվավեր և համարվում հոգեկան հիվանդների, այլ և այնպիսի անձանց կնքած ամուսնությունը, վորոնք գտնվում են այնպիսի դրության մեջ, վոր չեն կարողանում իրենց արածին հաշիվ տալ և ըմբռնել իրենց գործողության նշանակությունը»:

Ներկայիս գործող «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսդրքի» 6 հոդվածի բ. կետը նախատեսում է, վոր «ամուսնությունը չի կարող տոմարագրվել այն անձերի միջև, վորոնցից թեկուզ մեկը սահմանված կարգով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ և ճանաչված»։ Նույն Որենսդրքի 135 հոդվածի համաձայն իրենց ամուսնությունը տոմարագրել տվողները պարտավոր են Ձագսի որդաններին ներկայացնել բժշկական վկայական այն մասին, վոր նրանք փոխադարձաբար իրազեկ են իրենց առողջական վիճակի մասին, մասնավորապես վեներական, հոգեկան և

պալարախտային հիվանդությունների վերաբերմամբ Համաձայն Որենսգրքի 135 հոդվածի ծանոթության վեներական, հոգեկան և պալարախտային հիվանդություններից միայն սիֆիլիսն է, վոր արգելք է հանդիսանում ամուսնությունը տոմարագրելու:

Ինչ յեզրակացություն կարելի յե հանել վերոհիշյալից. այն, վոր ամուսնության արգելք հանդիսացող հիվանդությունները տկարամտությունը, հոգեկան հիվանդությունը և սիֆիլիսն են. մնացյալ հիվանդությունները, նրանց շարքում նաև վեներական այլ հիվանդություններ, թոքախտը և այլ վարակիչ հիվանդություններ, արգելք չեն ամուսնության, և Ջազաի որդաններն իրավունք չունեն հրաժարվելու ամուսնությունը տոմարագրելուց, յեթե յերբեք ամուսնացողները փոխադարձաբար իրազեկ լինելով հանդերձ իրենց ունեցած հիվանդություններին, գիտակցաբար և հոժարակամ ցանկանում են ամուսնանալ իրար հետ նման դեպքերում Ջազաի վարիչները միայն մի պարտականութուն ունեն. նրանք հիմք ունենալով բժշկական վկայականը՝ պետք է բացատրեն ամուսնանալ ցանկացող զույգին, թե ինչ բացասական հետևանքներ կարող է ունենալ հիվանդությունը թե կողմերի և թե ապագա սերնդի համար: Ազիտացիոն-բացատրական այս աշխատանքով է սահմանափակվում Ջազաի աշխատակիցների անելիքը:

Ավելորդ չեմ համարում հիշատակել այստեղ ՀՄԽՀ Փողովրդական կոմիսարների խորհրդի կողմից «Ամուսնացողների տոմարագրության մասին» 8 դեկտեմբերի 1924 թվին ընդունված (տես Որենքների և կարգադրությունների ժողովածու № 2, 1925 թ.) վորոշման 4 կետը հետևյալ բովանդակությամբ. «ա. վեներական հիվանդություններով (սիֆիլիս, հոնոռեյա), բ. հոգեկան հիվանդություններով, գ. ակտիվ արտահայտված թոքախտով և դ. ուրիշ խրոնի-

կահան, անբուժելի հիվանդութիւններով տառապող քաղաքացիների ամուսնանալու ժամանակ կողմերին բժշկական հանձնաժողովը նախազգուշացնում է հետեւանքների մասին: Ժողովոյսորհի հիշյալ վորոշումը, այլև առհասարակ առողջութեան նկատմամբ գործող մեր որենսդրութիւնը կարող է կեղծ մտալիստներէ մեջ վորոշ վրդովմունք առաջ բերել այն ուղղութեամբ, վոր խորհրդային իշխանութիւնը այնքան ել չի մտահոգվում ազգաբնակչութեան առողջական դրութեամբ:

Նման կեղծ նախանձախնդրութիւն ցույց տվողները նախ պետք չէ մոռացութեան տան այն հանգամանքը, վոր մեզ մոտ ամուսնութեան տոմարազրութիւնը պարտադիր չէ, վոր մեզ մոտ գնչութիւն ունի նաև փաստական ամուսնութիւն, վոր յեթէ Ջագսի որգանները հրաժարվեն հիվանդների ամուսնութիւնը ձևակերպելուց, միևնույն է, նրանք այդ պատճառով չեն հրաժարվելու սեռային կենսակցութեանից և յեթէ նրանք վորպես ամուսիններ չկենսակցեն, ապա իրենց բնախոսական պահանջների բավարարութիւնը պիտի փնտռեն պատահական սեռային կցանքի միջոցով, վորն իր հետեւանքներով, վարակման գոհերի ծավալով ավելի մեծ չարիքի աղբյուր կարող է դառնալ:

Հիվանդութիւններէ, հատկապես վարակիչներէ դեմ պայքարի միջոցները հիմնականում յերկուսն են. ա) բժշկական հաստատութիւններէ ցանցով մասսաների սպասարկումը, զուգորդած բացատրական լայն կամպանիայի հետ և բ) քրեական պատասխանատւութեան յենթարկել նրանց, ովքեր գիտակցաբար ուրիշին վարակում են: Մեր Քրեական որենսդրքի 176 հոդվածի համաձայն մինչև յերեք տարի ժամանակով ազատազրկման են յենթարկվում այն անձինք, վորոնք գիտենալով, վոր իրենք տառապում են

վեներական հիվանդութեամբ, դրանով վարակում են ուրիշներին:

գ. Մտ ազգականների ամուսնութեան արգելք

Մտ ազգականների ամուսնութեան դեմ բերվող հիմնական առարկութեանն այն է, վոր նման ամուսնութեան հետևանքով ծնվող սերունդը կամ ախեղծ, հիվանդ է լինում և կամ բուրբոսիլին վոչնչանում է:

Բուրժուական որինսդեաները և իրավադեաները մտ ազգականների ամուսնութեան արգելքը հիմնավորում են յերկու տարբեր տեսակեալից. ա) սերնդի բնախոսական տկարացումով և բ) բարոյականութեան նկատառումով:

Մի շարք յերկրներում մտ ազգականների, արենակիցների ամուսնութեանը քրեական պատժելի արարք է համարվում (արենապղծութեան, ազգասպղծութեան) և ընդունվում է վորպես մի այնպիսի խայտառակութեան, վոր նման սեռային կենսակցութեանից ծնվող յերեխաներին նույնիսկ արգելվում է փնտուել իրենց ծնողներին, վոչ միայն իրենց հորը, այլև մորը:

Մի շարք այլ բուրժուական յերկրներում, որինսկ Ֆրանսիայում, Ռումինիայում, Ավստրիայում, Գերմանիայում արենակիցների ամուսնութեանը քրեական կարգով չի պատժվում, բայց որենքով անվավեր է ճանաչվում:

Հիմնականում, բուրժուական յերկրներում արենակիցների ամուսնութեան արգելքը բղխում է վոչ այնքան ապագա սերնդի առողջութեան մասին մտահոգելուց, վորքան կեղծ բարոյականութեան հասկացողութեանից:

Խորհրդային որինսդրութեանը նույնպես արգելում է մտ ազգականների ամուսնութեանը, բայց այն չափով, ինչ չափով ըստ բժշկական գիտութեան կա կաակած այն մասին, վոր դա կարող է բացասաբար անդրադառնալ

ապագա սերնդի վրա: Յեւ այն ամեն ինչ, որ ես գրել եմ, այնպես էլ կոչված ամուսնուձեռնարկի հանդիսացող պարտերի խնդիրը: Բուրժուական յերկրներում պարտերի շարանը հասնում է մինչև 12-14-ը:

Ցարական Բուսաստանի որենսդրութեանը ազգականների արգելքը վերապահում էր յեկեղեցուն, յեկեղեցական կանոններին:

Բուրժուական յերկրների որենսդրութեան մեջ նկատվող ընդհանուր տենդենցն այն է, վոր մոտ ազգականների ամուսնութեան արգելքը գնալով սեղմվում է:

Բոլոր որենսդրութեանների մեջ ամուսնութեան արգելք յեղող ազգականութեան ամենասեղմ շրջանակը խորհրդային որենսդրութեամբ է սահմանված. «Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսդրքի» 6 հոդվածի գ. կետի համաձայն «ամուսնութեանը տոմարագրվել չի կարող ուղիղ վերընթաց կամ վայրընթաց գծով ազգականութեան մեջ գտնվող անձերի միջև (որինակ՝ հայրը և աղջիկը, մայրը և վորդին, պապը և թոռը), այլև հարազատ և խորթ քույրերն ու յեղբայրները, ինչպես նրանք, ովքեր ծագում են ընդհանուր հորից և մորից, նույնպես և նրանք, ովքեր կամ ընդհանուր հայր ունեն, բայց տարբեր մայրեր, կամ ընդհանուր մայր, բայց տարբեր հայրեր»:

գ. Ամուսնություն

Առաջին հայացքից շատ պարզ այս պայմանը խիստ կարևոր նշանակութեան է ստանում, յերբ դրանով շոշափվում է բազմակնութեան և յերկամուսնութեան պրոբլեմը:

Ճիշտ է, վոր բուրժուական յերկրներում որենսդրվող միայն բազմամուսնութեանը արգելված է, այլև դատական կարգով պատժելի արարք է համարվում: Կարևոր է սակայն ընդգծել, վոր նույն այդ յերկրներում չափա-

զանց շատ տարածված և հանդուրժելի յե փաստական բազմամուսնությունը, հատկապես բազմակնությունը:

Ինչպես հայանի յե, իսլամական կրոնը բազմակնությունը վոչ միայն թույլ ե տալիս, այլ վորոշ պայմաններում դա պարտավորիչ ե համարվում:

Ինչպես ե դրվում հարցը խորհրդային յերկրներում:

Սուաշին հերթին բազմակնության դեմ պայքարը մեզ մոտ կնոջ ազատագրության տեսակետից առաջնակարգ նշանակություն ունեցող հասարակական-քաղաքական պրոբլեմ ե: Գործնականում մենք ինչպես պիտի կարողանանք ապահովել կնոջ իրավահավասարությունը՝ տղամարդու հետ, յեթե մենք թույլ պիտի տանք այնքան ստրկացուցիչ, այնքան հակահեղափոխական այդ կենցաղային յերևույթը՝ բազմակնությունը:

Յեթե դարերի ընթացքում խալիֆայության որրանը հանդիսացող Տաճկաստանն առաջադեմ բուրժուազիայի միջոցով կարողացավ հիմնական ռեֆորմ մտցնել իր որենսդրության մեջ և հակառակ Մուհամմեդի կրոնի՝ դարավոր բազմակնությունը վերացրեց, ապա ինքնին հասկանալի յե, վոր սորխայիզմ կառուցող մի յերկրում այդ սոցիալական պրոբլեմն ավելի քան վորեւ տեղ և վորեւ ժամանակ իր արմատական, իր ամբողջական լուծումը պետք ե ստանար այն իմաստով, վոր բազմակնությունը, բազմամուսնությունը վոչ միայն պիտի արգելվեր որենքով, այլ նման արարքի մեջ գտնվողները պիտի յենթարկվեյին քրեական պատասխանատվության:

«Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսդրքի» 6 հոդվածի ա. կետը նախատեսում ե, վոր «ամուսնությունը չի կարող տոմարագրվել, յեթե ամուսնացողներից թեկուզ մեկ կողմն արդեն, իսկ տոմարագրված կամ չտոմարագրված ամուսնական հ. բերության

մեջ ե մեկ ուրիշի հետ: Մա ինքնին բազմամուսնության
ժխտումն ե:

Որենսդիրը սակայն չբավականանալով այս արգել-
քով, քրեական պատասխանատվություն ե սահմանում զան-
ցատուների համար: Մեր Քրեական որենսդրքի 192 հոդ-
վածը նախատեսում ե, վոր « յերկինության կամ բազմա-
կնության համար կիրարկվում ե ազատազրկում յերեք
տարի ժամանակով »:

Հիշյալ հոդվածի ծանոթության համաձայն « յերկ-
կնությունը կամ բազմակնությունը նախատեսող քրեա-
կան որենքների ուժը չի տարածվում այն կենակցություն-
ների վրա, վորոնք ծագել են այս որենքների հրատարա-
կումից առաջ կատարված ամուսնությունից »: Մրանից
չսխիտի յեզրակացնել սակայն, վոր հիշյալ որենքի հրապա-
րակումից, այն ե՝ 5 նոյեմբերի 1928 թվից առաջ տեղի ունե-
ցած բազմակնությունն որենքով պաշտպանություն ե զրտ-
նում. բնավ վոչ. խոսքը վերաբերում ե միայն քրեական
պատասխանատվությանը. ինչ վերաբերում ե նման ամու-
սնության որինականությանը, դա ժխտվում ե 21 դեկտեմ-
բերի 1920 թվին Սորերդային Հայաստանում կիրարկու-
թյան դրված « Քաղաքացիական կացության ակտերի որենս-
դրքով »:

Մնում ե ուշադրության արժանի այն խնդիրը, թե
նախքան խորհրդային իշխանությունը տեղի ունեցած
բազմակնության փաստերի վրա ինչպես ե նայում մեր
որենսդրությունը: Ինականաբար խորհրդային իշխանու-
թյունը հարկադրված ե որինական ճանաչել նման ամու-
սնությունները նախ նրա համար, վոր նախախորհրդային
ժամանակի որենքներով դա թույլատրվում եր, և յեր-
կրորդ՝ այն մտահոգությամբ, վոր նման ամուսնությունների

արհեստական, հարկադրական լուծումից առաջին հերթին պիտի տուժի կլինը՝ վորպես անտեսապես թույլ եյակ:

Պարզելու համար, թե իրենց ամուսնությունը տոմարագրող անձնավորություններն ամուրի յեն թե վոչ, որենքը պահանջում ե, վոր «ամուսնությունը տոմարագրել տվողները Ջազսին տան սատրաղություն, վորի մեջ պետք ե մատնանշեն նաև, թե նրանցից յուրաքանչյուրը քանի-յերորդ անգամն ե ամուսնանում, հաշված և տոմարագրված և չտոմարագրված ամուսնությունները...» (տես Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսգրքի 135 հոդվածը):

Ջազսին, վորպես իշխանության որդանի, իրականության չհամապատասխանող սուտ տեղեկություն տվող անձնավորությունները յենթարկվում են քրեական պատասխանատվության:

Վտմանք կարծում են, վոր ներկա որենսգրությամբ ընդունված փաստական ամուսնությունը նպաստում ե բազմակնության զարգացմանը: Նման կարծիքը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ կատարյալ թյուրիմացություն: Իրականության մեջ բազմակնությունը զարգանում ե այնտեղ, վորտեղ փաստական կենակցության մեջ յեղողներն ազատվում են փոխադարձ նյութական պարտավորություններից: Ընդհակառակն, փաստական ամուսինների վրա որենքով նյութական վորոչ պարտավորություններ ղնելու հանգամանքն իրականության մեջ մեծապես նպաստում ե բազմակնության նվազելուն:

Ե. Փոխադարձ հալածայնություն

Քանի վոր խորհրդային իրավակարգում ամուսնությունն ամենից առաջ հանդիսանում ե յերկու աշխատավորների միությունը՝ հիմնված փոխադարձ ոգնության

սկզբունքի վրա, հետևաբար հասկանալի յե, վոր ամուսնու-
նությունը հիմնված պետք է լինի կողմերի հոժարակամ
ընտրութեան և փոխադարձ համաձայնութեան վրա:

Մի շարք բուրժուական յերկրներում ամուսնանալ
ցանկացող զույգերն առանց իրենց ծնողների համաձայնու-
թեան չեն կարող ամուսնանալ, նույնիսկ այն դեպքում,
յերբ նրանք չափահաս են արդեն: Ծնողների համաձայնու-
թեան կամ թույլտվութեան այս պայմանը, վորը նվիրա-
գործված է բուրժուական որենադրութեամբ, վոչ այլ ինչ է,
յեթե վոչ պատմական ժառանգությունը բարբարոսական
այն դարաշրջանի, յերբ ընտանիքի ներսում բոլորը գտն-
վում էյին հոր իշխանութեան տակ, յերբ զավակները կար-
ժես թե հոր սեփականութուն էյին կաղսում, յերբ ըն-
տանիքի հայրը բացի քաղաքացիականից վայելում էր նաև
հանրային իրավունքներ, նույնիսկ ոժտված կենաց և մահու
իրավունքով իր յերեխաների նկատմամբ:

Զնայած այն հանգամանքին, վոր ժամանակի ընթաց-
քում ծնողական իշխանութեան այս ուժը նվազել է, բայց
մինչև հիմա էլ բուրժուական մի շարք պետութիւններում,
նրանց շարքում Ֆրանսիայում, Բելգիայում, Ռուսիայում,
Իտալիայում և այլն, ծնողներին իրավունք է վերապահված
նույնիսկ մինչև 25-30 տարեկան իրենց զավակների
ամուսնութեան դեմ առարկելու: Վորոշ յերկրներում,
որինակ Սպանիայում, առարկութեան իրավունքը վերապահ-
ված է նաև դատախազութեան: Բնականաբար խորհրդային
իրավակարգը չի կարող հանդուրժել հայրական կամ ծնողա-
կան նման իշխանութեան. մեզ մոտ ամուսնական չափահա-
սութեան հասած քաղաքացիները փոխադարձ համաձայ-
նութեամբ կարող են ամուսնանալ, առանց նույնիսկ կարիք
զգալու իրենց ծնողներին այդ մասին նախազգուշացնելու:

Ինչպես հայտնի յե, մեր գործող որենադրութեան տե-

սակետից, կանանց քաղաքացիական և ամուսնական չափահասութեան միջև կա տարբերութիւն: Յեթե քաղաքացիական տեսակետից բոլոր խորհրդային յերկրներէ որենսդրութեամբ չափահաս են համարվում 18 տարին լրացած բոլոր քաղաքացիները, խորհրդային Հայաստանի ամուսնական որենսդներէ համաձայն կանայք 16 տարին լրանալուց հետո ամուսնութեան համար չափահաս են համարվում: հետեւաբար նրանք թեև դեռ անչափահաս են քաղաքացիական տեսակետից, բայց այդ հանգամանքն իսկ չի հարկադրում նրանց ամուսնութեան համար ստանալ իրենց ծնողաց կամ խնամակալների թուղտովութիւնը կամ համաձայնութիւնը:

«Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսդրքի» 4 հոդվածի ա. կետը ամուսնութիւնը տոմարադրելու համար անհրաժեշտ առաջին պայմանը համարում է «ամուսնութիւնը տոմարադրելու փոխադարձ համաձայնութիւնը»:

Սրանից պետք է յեզրակացնել, վոր համաձայն խորհրդային որենսդրութեան, վոչ միայն ամուսնութիւնը հիմնված կարող է լինել միայն կողմերի ազատ, հոժարակամ ընտրութեան և փոխադարձ համաձայնութեան վրա, այլ ամուսնութիւնը տոմարադրելու համար և անհրաժեշտ է կողմերի փոխադարձ համաձայնութիւնը:

Ի՞նչ ձևով խորհրդային արդարադատութիւնը պայքարում է ամուսնութեան խնդրում թե ամուսնացող կողմերից մեկի և թե նրանց ծնողների կամ խնամակալների կողմից տեղի ունեցող ճնշման և բռնութեան յերևույթների դեմ:

Ինչպես խորհրդային մյուս հանրապետութիւններէ, նույնպես և խորհրդային Հայաստանի Քր. որենսդիրքը միշտ պատիժներ է սահմանում ամուսնութեան առթիվ տեղի ունեցող կենցաղային հանցադորժութիւններէ համար:

Այսպէս, Քրեական որոնսգրքի 188 հոդվածը նախատեսում է. «Կնոջը՝ առանց նրա համաձայնութեան հետն ամուսնանալու կամ սեռական հարաբերութիւնն ունենալու նպատակով առևանգելու համար կիրարկվում է սոցիալական պաշտպանութեան միջոց՝ ազատագրելում մինչև հինգ տարի ժամանակով»:

Ամուսնական տարիքի չհասած կնոջը՝ նրա հետ սեռական հարաբերութիւնն ունենալու նպատակով առևանգելու համար, սնկախ նրա համաձայնութիւնից, ինչպէս նաև կնոջ վաճառելու, անառակասներում տեղավորելու կամ վորեւէ այլ նպատակով առևանգելու համար կիրարկվում է ազատութիւնից զրկում մինչև 8 տարի ժամանակով»:

Համաձայն նույն Որոնսգրքի 189 հոդվածի «Կնոջը իր կամքի հակառակ ամուսնանալու բռնադատելու համար կիրարկվում է ազատութիւնից զրկում մինչև յերեք տարի ժամանակով»:

Համաձայն 190 հոդվածի ամուսնութեան տարիքի չհասած անձի հետ ամուսնանալու կամ այդպիսի ամուսնութեան բռնադատելու համար կիրարկվում է մինչև ութ տարի ազատագրելում»:

Անհրաժեշտ է հիշատակել, վոր քրեական ռեպրեսիայի այս քաղաքականութիւնը այն պայքարի միջոցներից մեկն է հանդիսանում, վորով խորհրդային իշխանութիւնը կրօվում է կսնանց ազատագրութեան դեմ ուղղված սոցիալային վտանգավոր կենցաղային յերևույթների դեմ, վորոնք մեծ ծավալ ունեն Սրևելքի համեմատաբար հետադեմ ազգային փոքրամասնութիւնների մեջ: Հենց այդ պատճառով էլ Խորհրդային Միութեան մեջ մի շարք ինքնավար հանրապետութիւններում և շրջաններում (Որ. Քերքիզստան, Բաշքիրիա, Կարաբղին և այլն) վերոհիշյալ բնույթի կենցաղային հանցագործութիւնների դեմ քրեական հետա-

պնդման միջոցով կոխի ամէլի շուտ և սկսել և որենքով ամէլի խիստ պատիժներ ևն նախատեսոված:

Կանանց իրենց կամքին հակառակ ամուսնացնելու և ըստ ելության հարսնացուին գնելու նշանավություն ունեցող վաղեմի կենցաղային սովորություններէից մեկն էլ հանդիսանում և այսպէս կոչված դալիմը, Ղալիմը վոչ այլ ինչ և, յեթե վոչ հարսնացուին ձեռք բերելու համար նրա ծնողներին, ազգականներին կամ բարեկամներին փեսացուի, նրա ծնողների կամ բարեկամների կողմից տրված փոխհատուցումը՝ գրածով, անասուններով, այլ տեսակի գույքով և կամ թե անձնական աշխատանքով: Ըստ ելության կնոջ ամուսնութեան նպատակով առուծախաի յենթարկելու այս ըստըստ սովորութեան արմատներն սկիզբ ևն առել հնադարյան կենցաղի առանձնահատուկ պայմաններում և կնոջ գնման և սարկացման այդ յերեւելութիւն խիստ տարածված և մոնղոլյան և թուրքական ծագում ունեցող ազգաբնակչութեան մեջ: Վաղեմի այս սովորութեանն այնքան ուժեղ արմատներ և դիւր վորոչ ազգային փոքրամասնութեաններում, վոր չնայած այն ծավալուն պայքարին, վոր խորհրդային իշխանութեանը Հոկտեմբերյան հեղափոխութեանից հետո ձեւնարկեց այդ կենցաղային հանցազորութեանների դեմ, այնուամենայնիւ Հոկտեմբերին հաջորդող առաջին տարիներում կուլտուրապէս և քաղաքականապէս հետամնաց շրջաններում գտնվեցին միքանի գյուղատրուրդներ, վորոնք սանկցիայի յենթարկեցին զալիմի սովորութեանը և հատուկ սակազին մշակեցին տարբեր վորակի կանանց համար:

Սոցիալապէս վստանգավոր այս յերեւելութիւն նկատվում և նաև Թորհրդային Հայաստանի կուլտուրապէս և տնտեսապէս հետամնաց վորոչ շրջաններում, թեև վոչ այնքան շատ տարածված: Իր ուշադրութեանը դարձնելով այս

մաստի վրա, Հայաստանի Կենտրոնական դործադիր կոմիտեն 1928 թվի նոյեմբերի 5-ի իր վարտումով մեր Քրեական սրենսդրքում մտցրեց 191 հոդվածը, վորի համաձայն զայիմ տվողները և աննողները յենթարկվում են մինչև յերկու տարի ժամանակով ազատազրկման, իսկ զայիմ աննողներից միաժամանակ հողուտ սեռական դանձարանի բանադանձվում և նրանց ստացած փոխհատուցումը կամ նրա արժեքը:

Կենցաղային հանցադործությունների յուրահատուկ մի տեսակն էլ վերջին տարիների ընթացքում և արժանացել խորհրդային արգարագատության ուշադրությանը: Իսկ ամուսնության տոմարադրությունը կնոջ բնաբարելու օրինական մի միջոց դորձնելու խարդախությունն և: Տեսնելով, վոր առանց Զազարի հնարավոր չէ ամլյալ կնոջ ձեռք բերել և նրա հետ սեռային կենսակցություն ունենալ, սեռային սանձարձակությամբ տարված անձնավորություններ այնպես են ձևացնում, վոր լրջորեն ուզում են ամուսնանալ ամլյալ կնոջ հետ և քողարկելու համար իրենց ներքին հետին մտադրությունը, համաձայնում են, վոր Զազարում տոմարադրվի իրենց ամուսնությունը, Զազարում տոմարադրվելուց և կնոջից սեռային հազում ստանալուց անմիջապես հետո լքում են նրան: Անա սոցիալապես վտանգավոր յուրտեսատուկ մի յերևույթ, վորի դեմ ևս պետք և խորացնել և ուժեղացնել դատական ակտիվան, հանուն կնոջ վերջնական ազատազրության, հանուն հին կենցաղի վերջնական վերացման և նոր — սոցիալիստական կենցաղի ամրապնդման:

Մտորդային Հայաստանի Քրեադուլյն դատարանն իր պարզաբանությամբ նման հանցադործությունը վորակել և Քր. օրենսդրքի 16, 179 հոդվածի 1 մասով, վորը նախատեսում և ազատազրկում մինչև հինգ տարի ժամանակապահ

5. ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԵՐՏԱԿԱՆՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամուսինների փոխհարաբերությունները կարելի չե-
քաժամեել յերկու հիմնական կատեգորիաների — անձնական
և ստացվածքային:

ա. Անձնական փոխհարաբերություններ

Փոխհարաբերությունների այս բնագավառում և, վոր
ամենից ավելի ցայտուն կերպով յերևան և զալիս կնոջ
իրավահավասարության ժխտումը այլ իրավակարգերում,
իսկ լիակատար իրավահավասարության դոյությունը՝ խոր-
հրդային իրավակարգում: Ինչպես հնադարյան Արևելքում,
նույնպես և հին Հռոմում կինը զանվում եր «իր ա-
մուսնու ձեռքում»: սղամարդը իր կնոջ նկատմամբ վայելում
եք այն իրավունքը, ինչ վոր հայրը՝ իր աղջկա նկատմամբ,
իսկ հին Հռոմում սովորության իրավունքը հիշեցնում և, վոր
հայրը նույնիսկ իրավունք ուներ սպանելու իր հարազատ
զավակներին, հատկապես աղջիկներին:

Ժամանակի ընթացքում, բայց շատ դանդաղ ձևով,
զբությունը մերիչ փոխվեց, բայց մինչև նույնիսկ 12-րդ
դարում կնոջ սպանության համար ամուսինը շատ
թեթև պատժի յեր յենթարկվում, մինչդեռ իր ամուսնուն
սպանելու հանդգնություն ունեցող կնոջը վողջ թաղելու
սովորությունն իսկ գոյություն և ունեցեր:

Ընդհանուր առմամբ, համաձայն բոլոր բուրժուական
որենսզրությունների, ամուսնացող կինը իրավաբանորեն
զրեթե անզորժուանակ և դառնում և ամբողջովին յենթարկ-
վում և իր ամուսնուն, ուրիշ խոսքով՝ առհասարակ իրա-
վագուրկ զբության մեջ զանվող կինը ամուսնանալուց հետո
ավելի ևս վատթարացնում և իր զբությունը: Նույնիսկ
այնպիսի հասարակ խնդիրներում, որինակ, ծառայության

մտնելու, բարձրագույն կրթութեան վերեւ հաստատու-
թեան մեջ սովորելու, վերեւ գործով զատարանում հայց
հարուցելու, ճամպորդելու և այլն՝ ամուսնացած կինը
միանգամայն իրավագուրկ դրութեան մեջ է, նա առանց
իր ամուսնու թույլտվութեան ու համաձայնութեան չի
կարող նման տարրական իրավունքներէց խսկ ողտվել:

Բաժնական և համեմատութեան դնել այս իրավագրկու-
թեան աղաչակող դրութեանը խորհրդային իրավակարգում
կնոջ վերադարձված կատարյալ իրավահավասարութեան հետ,
վարակողի սլարդ լինի հսկայական ու արմատական այն
հեղաշրջումը, վար սոցիալիստական հեղափոխութեանը
ստաջ բերեց մարդկութեան պատմութեան մեջ:

Կոնկրետացնելով ամուսինների անձնական փոխհարա-
բերութեանները խնդիրը, կարելի չէ հիշատակել հետևյալ
պարտավորութեանները.

1. Սեռային կյանքով ապրելու պարտականութեանը,
վորի վրա բուրժուական որենսդրութեանը հատկապես շեշտ
և գնում: Այնքան կարևոր նշանակութեան և տրվում այս
հարցին, վար այդ պարտականութեանից հրաժարումը հա-
մարվում և ապահարգան տալու որինական առիթ այն բուր-
ժուական յերկրներում, վարտեղ ապահարգանք խիստ սահ-
մանափակված և հատկապես կանանց համար: Մեր որենս-
դրութեան մեջ այդ խնդրի նկատմամբ նույնիսկ անուղ-
ղակի հեշատակութեան չկա: Ինչպես ամուսնութեանը,
նույնպես և սեռային կյանքով ապրելը կախված և ամու-
սինների փոխադարձ համաձայնութեանից: Առանց նման
համաձայնութեան, սեռային կյանքով ապրելու հարկադրելը
համանիշ և բռնութեան:

2. Բուրժուական որենսդրութեանը մեծ տեղ և տալիս
ամուսնական հավատարմութեան, կամ՝ ամուսնուն՝ դավաճա-
նելուն: Այս պարտականութեան խնդրում սակայն հսկայական

անհավասարութիւնն կա տղամարդ և կին ամուսինների միջև: Յեթե անհավասարութիւն մեջ հանցալոր ճանաչվի տղամարդը, բուրժուական դասարանը (սրինակ, Թրանսպարան) նրան յենթարկում և դրամական տուգանքի, մինչդեռ նման «հանցանքի» համա կնջ պարտ ունււմ և յերկու տարի բանտարկութիւն: Այդ բովանակն չև Ավելի ասորսրինակ և այն հանգամանքը, վոր տղամարդուն ամուսնական դավաճանութիւն մեջ հանցալոր ճանաչելու համար պետք և, վոր նա իր սեռական տան մեջ սեռային կյանքով ապրի ուրիշի հետ, մինչդեռ կնոջ համար այդ պայմանը գոյութիւն չունի:

Թորհրդային որենսդրութիւնն այս կեղծ մտային ևս տեղի չի տալիս: Ինքնին հասկանալի յե, վոր իրեն և իրեն ամուսնուն հարզող յուրաքանչյուր անձնավորութիւն պետք է ոգովի որենքով իրեն վերադահված ամուսնայուժման իրավունքից և այդ ձևով կարգավորի ուրիշի հետ իր կենակցութիւնը, քան ստեղծի իրեն համար կեղծ մի դրութիւն, առհասարակ լեցուն ընտանեկան անախորժութիւններով, վորոնք առաջին հերթին ծանր պետք է անդրադառնան յերեխաների դաստիարակութիւն մը:

3. Միասեղ ապրելու պարտագործութիւն: Բուրժուական յերկրների որենսդրութիւնը այս պարտավորութիւնը տալիս է առաջնակարգ նշանակութիւն, խստիվ արգելելով կնոջ առանց ամուսնու թույլտվութիւն հեռանալ բնակարանից, այլ բնակարանում ապրել, և միաժամանակ պարտավորեցնում է կնոջ հետևել ամուսնուն՝ վերջինս կողմից բնակարանը փոխելու դեպքում: Այս պարտականութիւնից շեղվող կինը զրկվում է իր ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունքից: Այս արտառոց պարտականութիւնն անժանտթ է խորհրդային որենսդրութիւն: Ամուսնութիւնը մեզ մոտ չի հարկադրում ամուսիններին անպայման միենույն հարկի տակ ապրել. նրանցից յուրա-

բանչյուրն աղատ է ըստ իր հայեցողութեան և ցանկութեան
այս կամ այն աշխատանքն ընտրելու, կարող է միաժա-
մանակ իր գործունեություն համար ընտրել այս կամ այն
վայրը, նաև միևնույն վայրում լինելիս ապրել առանձին,
տարրեր բնակարանում: Մեր Որենսդրքի 9 հոդվածն ասում
է. «Ամուսիններից մեկի բնակավայրի փոփոխությունը
մյուս ամուսնու համար նրան հետևելու պարտավորություն
չի ստեղծում»:

Այս հարցին անուղղակի անդրադառնում է նաև մեր
Որենսդրքի 40 հոդվածը, վորտեղ ասվում է, վոր «չեթե
ծնողները միասին չեն ապրում, այսպես նրանց համաձայնու-
թյունից և կախված, թե նրանցից վորի մոտ պետք է մնան
անչափահաս զավակները...»:

4. Ազգանունի խնդիրը: Բուրժուական իրավունքն
ասում է, վոր կինը պարտավոր է կրել իր ամուսնու ազ-
գանունը. մենք նման պարտավորություն չենք ընդունում:
Ինչպես այլ խնդիրներում, նույնպես և ազգանունի հարցում,
անհրաժեշտ է հիմք ընդունել կողմերի փոխադարձ հա-
մաձայնությունը: Ամուսնության որենսդրքի 7 հոդվածն
ասում է. «Ամուսինները կարող են զրվել մեկ ընդհանուր՝
մարդու կամ կնոջ ազգանունով, կամ իրենց միացյալ ազգա-
նունով, կամ պահպանել մինչ ամուսնություն ունեցած ի-
րենց ազգանունները: Ամուսնության տոմարագրության
ժամանակ նրանք այս մասին համապատասխան հայտարար-
ություն պետք է անեն». իսկ ամուսնալուծվելիս ապա-
հարզանվող ամուսինները, ըստ Որենսդրքի 21 հոդվածի,
հայտնում են, «թե ինչ ազգանունով է կամենում զրվել
նրանցից յուրաքանչյուրը: Ամուսինների միջև այդ հար-
ցում համաձայնություն չլինելու դեպքում նրանցից յու-
րաքանչյուրին վերապահվում է նրա մինչամուսնական
ազգանունը»:

Այսպիսով մենք կարականապէս ժխտում ենք բուրժուական արհեստագործական կողմից նվիրատորմած «ազամարդ ամուսնու խշտանությունը»:

5. Քաղաքացիութեան խնդիրը, Գրեթե բոլոր բուրժուական յերկրներում ամուսնությունն իրավարանորեն ազդում է նաև ամուսնացողների քաղաքացիութեան վրա: Ընդհանուր առմամբ այդ ազդեցությունն արտահայտվում է նրանում, վոր կինը յենթարկվում է տղամարդու քաղաքացիութեանը: Բուրժուական վորոշ յերկրների արհեստագործյունը նախատեսում է, վոր ստարանպատակն ամուսնանալիս պետք է ընդունի տվյալ յերկրի հպատակությունը:

Մեր արհեստագործյունն այս հարցում, իս չի հետևւում բուրժուականին: Համաձայն Ամուսնութեան արհեստագործի 8 հոդվածի «ՀՄՍՀ քաղաքացիութեան և ստարերկրյա քաղաքացիութեան մեջ վրոնվող անձերի ամուսնությունը տոմարագրելիս նրանցից յուրաքանչյուրը պահպանում է իր քաղաքացիությունը: Այդ անձանց քաղաքացիությունը կարող է փոխփոխութեան յենթարկվել Միութենական արհեստով սահմանված կարգով»: Նույն արհեստագործի 139 հոդվածի համաձայն «ստարերկրացիները և յտրերդային քաղաքացիները միջև կայացած ամուսնությունները, այլև ՍՍՀ Միութեան տերիտորիայի վրա ստարերկրացիները միջև կայացած ամուսնությունները տոմարագրվում են ընդհանուր հիմունքներով»: Մրանից հետևում է, վոր ամուսնությունն ինքնին վորևէ չափով չի ազդում ամուսնացողների քաղաքացիութեան վրա:

Այս բոլորից հետո ավելորդ է նույնիսկ յտեսել մեզ մոտ ամուսնութեան վրա կրոնական համոզմունքի ունեցած ազդեցութեան մասին, վորպիսի ազդեցություն կրոնն ունեցել է և ունի մի շարք բուրժուական պետություններում, ինչպէս և նախահեղափոխական Ռուսաստանում:

Ամուսինների անձնական իրավունքների խարակտերիստիկայի համար խիստ շահեկան և Լենինի մի ճառը, վորը գետեղված և 18-րդ հասորում և վորից բերված հետեւյալ ցիտատն ասում և. Յուլիէիկյան խորհրդային հեղափոխությունը կտրեց կանանց կեղեքման և անհավասարության արմատներն այնպէս, վորպիսին չհանդգնեց անել աշխարհիս և վոչ մի կուսակցություն, և վոչ մի հեղափոխություն: Խորհրդային Ռուսաստանում որեհրաւ հեաք իսկ չմնաց կանանց՝ տղամարդկանցից ունեցած անհավասարությունից: Խորհրդային իշխանությունը լիովին վոչնչացրեց հատկապէս ստոր և անարդ այն անհավասարութունը, վոր դոյություն ուներ ամուսնական և ընտանեկան իրավունքի մեջ, անհավասարություն՝ յերեխաների նկատմամբ: Դա առաջին քային և կանանց ազատազրության: Բայց վոչ մի բուրժուական, թեկուդ՝ ամենից ավելի դեմոկրատիկ հանրապետություն չհամարձակվեց անել այդ առաջին քային իսկ, չհամարձակվեց սարսափելով սրբազան մտանավոր սեփականությունից»:

բ. Ամուսինների ստացվածնային փոխադարձությունները

Ամուսինների անձնական և ստացվածքային հարաբերությունները բուրժուական յերկրներում սերտորեն կապված են իրար հետ, և դրեթե բոլոր բուրժուական ոյենսդրություններով սրբազործված և տղամարդու և կնոջ անհավասարությունը:

Ինչ ենք տեսնում մենք այդ ստացվածքային հարաբերություններում—ամուսնացած կնոջ անզորժուանակություն, իրավազրկություն և հետևաբար նրա լիակատար յենթակայությունը իր ամուսնուն: Նույնիսկ ամուսնացած կնոջ անձնական սեփականությունը կազմող դույքի կառավարումն ու սղտազորժումը վերապահվում և տղամարդ ամուսնուն: Մինչև 70-ական թվականներն Անգլիայում

ամուսնացած կնոջ ինքնությունը ծածկվում էր տղամարդու
ինքնությամբ, ուրիշ խոսքով՝ ամուսնանալու հետևանքով
կինը կորցնում էր իր ինքնությունը, դադարում
էր քաղաքացիական գործունակությունից:

Բուրժուական իրավակարգում ամուսնացած կնոջ
ստացվածքային-քաղաքացիական այս իրավազրկումը բա-
ցատրվում է նրանով, Վոր ընտանիքը հանդիսանում է սրբա-
զան մասնավոր սեփականության սկզբնական բջիջը, իսկ
ընտանիքի գլուխ կանգնած է տղամարդը: Յեվ քանի վոր
մասնավոր սեփականությունը կազմում է կապիտալիստական
հասարակարգի անկյունաքարը, ապա դասակարգային
տիրապետության հավերժացման համար բուրժուական
իրավունքը ամուսինների ամբողջ (անձնական թե ընդհա-
նուր) ստացվածքային ~ գույքային հարստության կառա-
վաբումն ու շահագործումը վերապահում է տղամարդուն ~
ընտանիքի գլխին:

Խորհրդային սրենսզրությունն ամուսինների ստաց-
վածքային հարաբերությունները կարգավորելիս հիմնական
յեղակետ ունեցել է կանանց անտեսական ազատագրու-
թյունը, միաժամանակ հաշվի առնելով խորհրդային իշխա-
նության տվյալ անտեսական քաղաքականությունը:

Ռեզմական կոմունիզմի ժամանակ, ինչպես հայտնի
է, դրեթե բացակայում էին քաղաքացիական ~ իրավական
հարաբերություններ և հետևաբար ամուսինների ստացված-
քային փոխհարաբերության խնդիրն առանձին շահագրգռու-
թյուն չէր կարող ներկայացնել: Սրանով պետք է բացա-
տրել այն հանգամանքը, վոր 1918 թվի դեկտեմբերին
Խորհրդային Ռուսաստանում, իսկ 1920 թվի դեկտեմբերին
Խորհրդային Հայաստանում ընդունված «Քաղաքացիական
կաշտության ակտերի որենսզրքի» 105 հոդվածը սահմանում
էր, վոր «ամուսնությունը ամուսինների գույքի ընդհան-

բությունն չի ստեղծուած», իսկ 106 հոդվածը նախատեսուած է, վոր Ժամուսինները կարող են ունենալ իրար հետ որենքով թույլատրված ամեն տեսակ ստացվածքային և պայմանադրերից բզխող փոխհարարերություններ: Ամուսինների միջև կայացած այն համաձայնությունները, վորոնք նվազեցնում են կնոջ կամ մարդու ստացվածքային իրավունքները, անվավեր են և պարտադիր չեն ինչպես յերկրորդ անձանց, այնպես էլ ամուսինների համար, վորոնց իրավունք է վերապահվում այդ համաձայնությունները կատարելուց ամեն ժամանակ հրաժարվելու: Ներկա «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենադրքի» 13 հոդվածը նույն բովանդակությունն ունի:

Ամուսիններին վերապահված պայմանադրային այս իրավունքը բզխում է այն հիմնական դրությունից, վոր խորհրդային իրավակարգում ամուսնությունը, ընթացակարգին հակառակ, վոչնչով չի կաշկանդում քաղաքացիների՝ որենքով վերապահված ընդհանուր անանսական գործունեությունը և հետևարար յերկու ամուսինն էլ կատարելապես ազատ են իրենց համար գրազմունք և արհեստ ընտրելու, ինչպես նախատեսված է Որենագրքի 9 հոդվածով: Ի՞նչ հիմնական ստացվածքային փոխհարարերություններ կան ամուսինների միջև, ըստ գործող որենադրության:

ա. Անձնական յեվ ընդհանուր գույ: «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենադրքի» 10 հոդվածի համաձայն Վինչև ամուսնությունը ամուսիններին պատկանող գույքը նրանց բաժան գույքն է համարվում:

Այս հանգամանքը պարզ ըմբռնելու համար բավական է հիշել, վոր այնքան, վորքան մեր ամուսնությունը ազատ է հարկադրական վորևէ մոմենտից, ապա ամուսնությունն ինքնին չպետք է վորևէ ազդեցություն գործի ամուսինների ստացվածքային (գույքային) ինքնուրույնության վրա, և

Թույլ պետք է արվի, վոր նրանք մինչ ամուսնությունն
 ունեցած իրենց անձնական գույքն ուղտագործեն իրենց
 ընդհանուր կարիքների համար, իրենց ցանկաւթյան և
 փոխադարձ համաձայնության հիման վրա միայն Ինչ
 վերաբերում է ամուսնության ընթացքում վաստակած գույ-
 քին, դա համարվում է ամուսինների ընդհանուր գույքը
 (տես. Որենսդրքի 10 հոդվածը) և այդ ընդհանուր գույքի
 կառավարումն ու սղտագործումը տեղի պետք է ունենա
 ամուսինների փոխադարձ համաձայնությամբ: Ինչնով և
 հիմնավորվում այս դրությունը Ամուսնությունը խորհրդ-
 դային իրավակարգում ամենից առաջ յերկու աշխատա-
 վորների միություն և հանդիսանում, և չկա բնավ հնարա-
 վորություն վորոշելու, թե այդ միության ներսում կող-
 մերից վոր մեկն ինչ չափով աջակցում և ընդհանուր
 անտեսության, մասնակցում և ընդհանուր վաստակին,
 ընդհանուր հողաին: Յեթե նույնիսկ ամուսիններից մեկը,
 ընդհանրապէս կլինը, աշխատանքի չի գնում, գրադվում և
 անային անտեսությամբ, յերեխաների խնամքով ու դաս-
 տիարակությամբ, իսկ աղամարդն աշխատավոր վաստակի
 յե գնում, այդ դեպքում գժվար է վորոշել, թե նրանցից
 վոր մեկն ավելի շատ է աշխատում, ավելի մեծ գոհողու-
 թյուն ու ևներդիւ յե գնում ընտանիքի կարիքների համար
 Բնականաբար, սոցիալիզմի կառուցման գործի արագ
 ավարտումը մեր յերկրում և կնոջ լիակատար վաստական
 աղտատաղրումը հրամայականորեն պահանջում է մեզնից,
 վորքան հնարավոր է, կնոջը դուրս բերել ընտանեկան առտնին
 հողաերի սպանիչ մթնոլորտից, մասնակից դարձնել նրան
 ընդհանուր անտեսական, քաղաքական և հասարակական
 աշխատանքներին, բայց յեթե այնուամենայնիվ կլինը դեռ
 հիմնականում կարված և անային հողաերի հետ, ծանրա-
 քեռնված և յերեխաներին անձնապէս խնամելու պարտա-

կանուխյամբ, մենք վոչ մի հիմք չունենք թերագնահատելու նրա աշխատանքը, նրա կրած գրկանքները և ասելու, վոր նա մտչինչ չի վաստակում։ Այս նկատառումով և, վոր որենքը ամուսնութեան ընթացքում ձեռք բերված գույքը համարում և ընդհանուր վաստակի արդունք, ամուսիններէ ընդհանուր գույք, առանց դնելու սկզբունքորեն անճիշտ այն հարցը, թե նրանցից սվ ինչքանով և մասնակցել այդ ընդհանուր վաստակին (շինութեան, տնային կահավորման և գործածութեան իրեր, խնայված գումար, փոխառութեան սոմսեր և այլն)։

Ամուսինների իրավունքը ամուսնութեան ընթացքում վաստակած գույքի վրա չպետք և հասկանալ այն իմաստով, վոր այդ գույքը միշտ ել պետք և հավասարապես բաժանվի ամուսինների միջև Բոլոր այն դեպքերում, յերբ կողմերի միջև ընդհանուր գույքի բաժանման նկատմամբ վեճ և ծագում և դատարանը կոչված և լինում լուծելու այդ վեճը, վերջինս հաշվի պետք և տոնի ամուսինների ընտանեկան և անտեսական դրութեան առանձնահատկութեունները և ըստ այնմ վճիռ կայացնի։ Արևիակ, յեթե դատարանն անչափահաս՝ յերեխաներին, նրանց շահերի պաշտպանութեան ակտակեալից, հանձնում և այս կամ այն ծնողին, յեթե մյուս ամուսինն սպահարգանվելուց հետո մենակ անձ և մնում, յեթե վերջինս նյութապես ապահով դրութեան մեջ և և այլն, դատարանը փոխանակ գույքը հավասար մասերի բաժանելու ամուսինների միջև, կարող և, հաշվի տոնելով կոնկրետ պայմանները, ավելի մեծ բաժին տալ նրան, վորի ինամբին են հանձնվում յերեխաները և կամ վորի ընտանեկան և անտեսական դրութեանն ավելի ծանր և, վորն անաշխատունակ և և այլն։ Դատարանին այս խնդրում գործունեյութեան լայն ազատութեան ապահովելու նպատակով և, վոր որենսդիրը, փոխանակ դիրեկտիվ տալու, վոր համա-

ձայն Քաղաքացիական սրենսդրքի սկզբունքի, վեճի դեպքում
ընդհանուր դուշքը համատարադեմ բաժանվի կողմերի միջև,
«Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան սրենսդրքի»
10 հոդվածով նախատեսվում է, վոր ամուսիններից յուրա-
քանչյուրին պատկանող դուշքի չափը, վեճ ծագելու դեպ-
քում, վորտղվում է դատարանի կողմից»:

Ամուսնութեան ընթացքում ձեռք բերված դուշքի վերա-
բերյալ այս իրավական դրութեանը, վորը նախատեսված
է սրենսդրքի 10 հոդվածով, չի տարածվում գյուղական
իրականութեան վրա, քանի վոր գյուղում գոյու-
թեան ունի ընտանեկան աշխատավորական անասնութեան
(ծուխ), վորի վերաբերյալ ստացված քայլին իրավահարաբե-
րութեանները կարգավորվում են հողային սրենսդրութեամբ
միայն, ինչպես մատնանշած է հիշյալ 10 հոդվածի ծանոթու-
թեան մեջ:

Համաձայն Հողային սրենսդրքի 64 հոդվածի, ամուս-
նութեան միջոցով ծխի մեջ մանողը դատնում է այդ ծխի
իրավադրը անդամը և իրավունք և ձեռք բերում տվյալ
ծխի ընդհանուր ուղապարծութեան տակ դանվող հողի և
դուշքի վրա: Այս առթիվ կարևոր է հիշատակել, վոր ծխի
այլ անդամներն իրավունք չունեն առարկելու ծխի ամուս-
նանալ ուղղող անդամի ամուսնութեան և այդ ամուսնու-
թեան միջոցով նրան սրենքով վերապահված ստացված քայլին
իրավունքները դեմ: Ամուսինների ապահարդանի հետևան-
քով ծխի բաժանութեան հարց ծագելիս վեճը լուծում է
գյուղական դատարանը և հաշվի առնելով ծխից բաժանվողի
ամուսնութեան տնտղութեանը, ծխի մեջ նրա դրած աշխա-
տանքի չափը, նրա աշխատունակութեան աստիճանը և այլ
հանգամանքներ, ծխի ընդհանուր ուղապարծութեան դուշքից
նրան տալիս է համապատասխան բաժին կամ պատշաճ փոխ-
հատուցում: Միաբաժանը կատարելիս դատարանները պետք

և խուսափեն մաթեմատիկական հավասարութեան սխալ սկզբունքը կիրառելուց:

Նկատի առնելով, վոր ծխի բաժանութեան վերաբերյալ վեճերը բավական բարդ են և անհրաժեշտ և այդ բաժանումը կատարելիս հաշիվ տանել վոչ միայն ծխից հեռացողի և ծխում մնացողների որինսական շահերը, այլև ծխի բաժանութեան տնտեսական և տեխնիկական նպատակահարմարութեան հետ կապված դժվարութեանները, դյուղական դատարանների կանոնադրութեամբ իրավունք և վերապահված ժողդատավորներին դյուղական դատարանների վարույթից հանելու և ժողդատարանի միջոցով ըստ ելութեան ընտելու ծխի բաժանութեան վերաբերյալ բարդ վեճերը:

Յեթև դյուղում բաժանվող ամուսիններին պատկանած ծուխը կտրկտրի մնտեսութեան մեջ և, ծխաբաժանը կատարելիս դյուղական կամ ժողովրդական դատարանը պետք և բաժանքի յենթարկի ծխի դույքի այն մասը միայն, վոր կտրտողից դուրս և մնացել և դտնվում և ծխի անմիջական սղտադործութեան ստի: Գյուղատնտեսական արտելում, վորը հանդիսանում և կտրկտրի մնտեսութեան ներկայի հիմնական ձևը, հողը, դյուղատնտեսական կենդանի և մեռյալ ինվենտարը (անասուններ, մեքենաներ), արդյունաբերական անասունները համաձայնեցրած են: Ամուսնալուծման հետևանքով ծխի բաժանվող անդամը շարունակում և մնալ կտրտողի իրավադոր անդամը, և հետևաբար ամուսինների միջև այդ առթիվ վեճ չի կարող ծագել: Վեճը կարող և վերաբերել միայն կտրտողից դուրս մնացած հողատեսքերին, շինութեաններին և այլ դույքին: Ինչ վերաբերում և դյուղատնտեսական կոմունային, այնտեղ ամեն ինչ ընդհանուր սեփականութեան և կազմում, և հետևաբար կոմունայի անդամ յեղող ամուսիններն իրարից նյութապես կախում չունեն և հանդիսանում են կոմունայի

ինքնուրույն անդամներ։ Ամուսնալուծությունը, հետևաբար, նման գեղքում տեղիք չի կարող տալ ստացվածքային վեճի Մեում և միայն անձնական գործածության իրերի և առարկաների խնդիրը, վարի վերաբերյալ վեճի լուծումն առանձին դժվարության հետ չի կապված։

Դատական պրակտիկան ցույց և տալիս, վոր թե գյուղում և թե քաղաքում բաժանվող ամուսինների միջև ծագած ստացվածքային վեճի մեջ կարևոր տեղ և գրավում կողմերի գրադեցրած բնակարանի խնդիրը։ Բնակարանային սուր կրիզիսի ներկա պայմաններում ինքնին հատկանալի չե, վոր բնակարանային վեճն ստացվածքային իրավահարաբերությունների մեջ զերակշիռ տեղ պիտի գրավի։ Այս պայմաններում ժողդատարանները կոչված են իրենց նպատակահարմար վորոշումներով կողմերին հանել անել գրությունից։ Անհրաժեշտ և ընդգծել, վոր ամուսինները բնակելի տարածության վրա համահավասար իրավունք ունեն անկախ այն հանգամանքից, թե տվյալ բնակարանի վարձակալական պայմանագիրը կամ կոմունալ տնտեսության կողմից արված որդերը ամուսիններից վոր մեկի անունով և արված և յերբ և արված։ Հետևաբար դատարանը բնակարանային հարցը լուծելիս առանց կաշկանդվելու վերոհիշյալ ձևական հանգամանքներից, պետք և ղեկավարվի ըստ հնարավորության բաժանվող ամուսիններից յերկուսին ել տվյալ բնակարանում տեղ տալու մտահոգությամբ, յեթե, անշուշտ, տեխնիկապես և ֆիզիկապես դա հնարավոր ե։ Այն բոլոր դեպքերում, յերբ անհրաժեշտություն և ծագում մեկն ու մեկին հնուացնելու տվյալ բնակարանից, դատարանը, բնականաբար, նախապատվության կարգով պետք թողնի այն ամուսնուն, վորի խնամքին են հանձնվում յերեխաները, նրան, ով շնորհիվ իր տնտեսական և ընտանեկան պայմանների ավելի քիչ շանս ունի այլ բնակարան

ճարելու: Ուրիշ խոսքով՝ ամեն մի կոնկրետ դեպքում դատարանը հաշվի պետք է առնի կողմերի դրուժյան առանձնահատուկ պայմանները և ըստ այնմ վճիռ կայացնի, չմոռանալով ըստ հնարավորութեան պաշտպանել տնտեսապէս թույլ կողմի (վորն ընդհանուր առմամբ կինն է) շահերը: Գյուղական իրականութեան մեջ շենքերի բաժանման խնդրում, բացի վերոհիշյալ հանդամանքներից, նկատի պետք է ունենալ նաև այն հանգամանքը, թե բաժանվող ամուսիններից վոր մեկն ընդունակ և ի վիճակի յե ինքնուրույնաբար գյուղական տնտեսութեանը վարելու:

բ. Ապրուսի խնդիրը. — Ամուսինների ստացվածքային հարաբերութեաններէ մեջ եյական գեր է խաղում ապրուստի խնդիրը: Բուրժուական յերկրներում ապրուստ տալու պարտավորութեանը ընկնում է տղամարդ ամուսնու վրա, և դա հասկանալի յե նախ այն պատճառով, վոր բուրժուական իրավակարգում տնտեսութեան գլուխ կանգնած է տղամարդը և, ինչպէս մենք առիթ ունեցանք մատնանշելու, ամուսնացած կինը նույնիսկ իր սեփական գույքը կառավարելու և շահագործելու իրավունքը չունի: Նման իրավագրւի դրութեանն ինքնին անխուսափելի պետք է դարձնելին՝ կարիքն ապրուստի միջոց ստանալու իր ամուսնուց:

Յերկրորդ ուղադրամ մոմենտն այն է, վոր բուրժուական յերկրներում ունեւոր դասակարգերի մեջ ամուսնութեանը վերածված է առևտրական գործարքի, այն իմաստով, վոր տղամարդը մտածում է ամուսնութեան մասին և դրան ձեռնարկում է այն ժամանակ միայն, յերբ իր հարսնացուի միջոցով նա պիտի կարգէ բերի իր առևտրական գործերը, կնոջ բերած ոժիտովն ուժեղացնի իր սնտեսական գործունեյութեանը, կանխի իր սնանկութեանը, այլ խոսքով՝ ունեւոր դասակարգերի համար ամուսնութեանը դաճում է մի տեսակ անհիմն շահաւութեան միջոց: Այս պայմաններում

տղամարդ ամուսնու համար իր կնոջ ապրուստի միջոց հայթայթելու պարտականությունն ըստ եյության համանիշ և կնոջից ձեռք բերված հարստության մեկ մասը նրան վերադարձնելուն: Մյուս կողմից բուրժուական որենսդրությունը, ինչպես հիշատակված և նախապես, պարտավորեցնում և, վոր կինը հետևի իր ամուսնուն և անպայման նրա հետ միևնույն ընտանեկան հարկում ապրի: Ամուսնութանից հետանալը, առանց վերջինիս թույլտվության, վոչ միայն որինական հիմք և տալիս տղամարդուն կնոջը զրկելու ապրուստի միջոցներից, այլ նրան անհավատարմության, «ամուսնական դավաճանության» մեջ մեղադրելու: Վերջապես մոռացության չպետք և տալ նաև բուրժուական ամուսնական իրավունքի, նրա շարքում նաև նախախորհրդային Ռուսաստանի որենսդրության կողմից ամուսինների փոխադարձ ոգնության հետևյալ բաժանումը. «Կինը պարտավոր և յենթարկվել իր ամուսնուն, վարպետ ընտանիքի գլխի, սիրով պարուրել նրան, հարգանքով և անսահման խոնարհությամբ վերաբերվել նրան, իսկ տղամարդն իր հերթին պարտավոր և սիրել կնոջը իր սեփական մարմնի նման, համերաջիս ապրել նրա հետ, ներել նրա պակասությունները և նրան տալ ապրուստի միջոց՝ ըստ իր կարողության և հնարավորությունների»:

Ինչպես և նայում ապրուստի հարցի վրա խորհրդային որենսդրությունը:

Ապրուստը իր նշանակությամբ սոցիալիստական ապահովության ոժանդակ միջոց և հանդիսանում: Պրոլետարական պետությունը ընականաբար չի կարող անուշադրության մատնել անաշխատունակ կամ գործազուրկ աշխատավորներին և ըստ հնարավորության միջոցներ ձեռք պետք և առնել զեթ նրանց ապրուստի նվազագույն հնարավորությունն ապահովելու համար:

Սոցիալական ապահովության որգանների տարեցու-
տի հսկայական չափերով աճող նյութական միջոցների
նպատակն է ավելի լայն չափով ընդգրկել և բարելավել
հիվանդ ու անաշխատունակ աշխատավորների բժշկա-կու-
րորտային սպասարկումը և բարվոքել կարիքավորների ապ-
րուստի հարցը: Նկատի առնելով սակայն այն հանդամանքը,
վոր ժողովրդական տնտեսության հիմնական վերակառուց-
ման հսկայական աշխատանքների և լարված դրութային
պայմաններում խորհրդային իշխանությունը հնարավորու-
թյուն չունի ամբողջովին իր վրա վերցնելու բոլոր կարի-
քավորների և անաշխատունակների ամբողջական հոգար,
ապրուստի պարտավորությունը, դրված որենքով ամուսին-
ների վրա, դալիս և վորոշ չափով թեթևացնելու պետու-
թյան սոցիալական ապահովության ուղղությամբ ստանձ-
նած հոգաի ծանրությունը և այդ տեսակետից ել հան-
դիսանում է սոց. ապահովության սթանդակ մի միջոց՝
դրված մասնավորների վրա իրար նկատմամբ:

Խորհրդային ամուսնական որենադրությունը ամուսին-
ների միջև ապրուստի միջոցի խնդիրը կարգավորելիս
ա) վոշ մի խտրություն չի դնում սեռերի միջև, բ) ապ-
րուստ ստանալու իրավունքը վերապահվում է վոշ միտքն
անաշխատունակներին, այլև գործազուրկներին, գ) ապ-
րուստը ձրիակերության և ծուլության առաջնորդող միջոց
չդարձնելու մտահոգությամբ վորոշ ժամանակով սահմա-
նափակում է ապրուստ տալու պարտավորությունը, և
դ) ապրուստի չափը վորոշ դեպքերում հավասարեցնում է
սոցիալական ապահովության կարգով՝ որվող նպատակների
քանակին:

Նախքան վերոհիշյալ հարցերի ուսումնասիրությանն
անցնելը անհրաժեշտ է մի անգամ ևս շեշտել այն ելյական
հանդամանքը, վոր ապրուստի խնդրում ևս, ինչպես մնա-

ցած բոլոր ստացվածքային փոխհարաբերութիւններն ասպարեզում, տոմարադրված և փաստական ամուսնութիւններն իրար հավասարեցրած են:

Համաձայն Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսդրքի 14 հոդվածի «միջոցներից զուրկ անաշխատունակ ամուսինն իրավունք ունի ապրուստի միջոց ստանալու մյուս ամուսնուց, յեթե վերջինը դասաբանի վորոշումով ոժանդակութիւն ցույց տալու ընդունակ եւ ճանաչվում: Ապրուստի միջոց ստանալու իրավունք ունի միջոցներից զուրկ աշխատունակ ամուսինը նաև դործադրութեան ժամանակ»: Որենսդրքի 16 հոդվածը նախատեսում է, վոր ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեն, ինչպես ամուսնութեան, այնպես ել ամուսնութիւնը լուծելու դեպքում, նաև այն անձերը, վորոնք փաստապես ամուսնական հարաբերութիւններն մեջ են, թեկուզ և այդ հարաբերութիւնները տոմարադրված չեն»:

Ինչ ե հետևում վերոհիշյալից—հիմնականը այն, վոր ապրուստի միջոց ստանալու իրավունքը ծագում է այն դեպքում, յերբ ամուսիններից մեկն իր ապրուստի մինիմալ ապահովութիւնը չունի, շնորհիվ այն հանգամանքի, վոր անաշխատունակ է, կամ թեև աշխատունակ է, բայց դործազուրկ դրութեան մեջ է գտնվում: Իսկ ապրուստ տալու պարտավորութիւնը ծագում է այն դեպքում, յերբ մյուս ամուսինը (անկախ սեռից) իր նյութական դրութիւնով ի վիճակի յե ոժանդակելու մյուսին: Յեւ վ քանի վոր ապրուստի խընդիրը սերտորեն կապված է կողմերի տնտեսական դրութեան հետ, ապա սրանից պետք է յեղրակացնել, վոր կողմերի տնտեսական վիճակի մեջ առաջացած փոփոխութիւններն անհրաժեշտորեն պետք է արդեն նաև ապրուստ տալու պարտավորութեան և ստանալու իրավունքի վրա, թե հիմքի և թե

չափի տ' սակետիւր: Ուրեմն և յեթե դատարանի վորոշուածով
ամուսիններից մեկը թե ամուսնութեան ընթացքում և թե
ամուսնալուծումից հետո մյուսին վճարում ե ապրուստի վո-
րոշ միջոց, նա կարող ե դարձյալ դատարանի միջոցով խնդ-
րել իրեն ազատել ապրուստ տալու պարտավորութեանից
կամ նվազեցնել նախապես սահմանված ապրուստի միջոցի
չափը, նկատի առնելով կամ այն հանգամանքը, վոր իր գոր-
ծազուրկ կիսն արդեն աշխատանքի յե անցել կամ ամուսնա-
ցել և ուրիշի հետ և կամ ինքն արդեն գործազուրկ ե, կամ աշ-
խատավարձը պակասել ե, կամ թե իր ընտանիքի անդամների
թիվն ավելացել և այլ նման որչեկտիվ և կոնկրետ հանգա-
մանքներ, վորոնք կապ ունեն կողմերից մեկի դրութեան բա-
րելւաման կամ վատթարացման հետ: Նույնպես դատարանի
վճռով ապրուստի միջոց ստացող ամուսինը կարող ե դա-
տական նոր հայցի միջոցով խնդրել ավելացնել ապրուստի
միջոցի չափը, նկատի ունենալով, վոր մյուս կողմի տնտե-
սական դրութեանը հետագայում բարելավվել ե: Կարևոր
ե կանդ առնել գործազրկութեան դեպքում նախատեսված
ապրուստի խնդրի վրա: Անհրաժեշտ ե մտապնդութեան չը-
տալ այն հանգամանքը, վոր ինչպես մյուս Խորհրդային
հանրապետութեաններում, նույնպես և մեզ մտա Ամուս-
նութեան ներկա որենազիրքը գործազրկութեան ե զբված
1927 թվին, յերբ գործազրկութեան հարցը խիստ մտահոգում
եր մեր իշխանութեանը: Այդ որչեկտիվ պայմաններում
գործազուրկ ամուսիններին ևս ապրուստի միջոցով ապա-
հովելու խնդիրն առաջնակարգ գործնական կարևորութեան
եր ստանում: Այժմ, սակայն, յերբ հնգամյա պլանի կատար-
ման և գերակատարման համար մեր վերակառուցվող սո-
ցիալիստական տնտեսութեանը վոշ միայն կլանել ե նախկին
գործազուրկ մասսաներին, այլ մենք մտահոգված ենք մեր
աննախընթաց արագութեամբ զարգացող արդյունաբերու-

Թյան համար պահանջվող միջանի միլիոն աշխատող նոր
ձեռքեր ապահովելու հրատապ և այժմեյական հարցով, յերբ
մենք միջոցներ ենք ձեռք առնում տնային տնտեսութեամբ
և ծառայութեամբ զբաղվող կանանցից 1,600.000 հոգի քա-
շել դեպի արդյունարերութեանը, քնականաբար գործա-
դուրկ ամուսինների արմենսի խնդիրն ինքնին կորցնում
ե իր գործնական նշանակութեանը: Փաստորեն այժմ
ապրուստի միջոցի անհրաժեշտութեան զգացող ամենամեծ
կատեգորիան այն մայրերն են, վորոնք իրենց խնամքի
տակ ունենալով անչափահաս յերեխաներ, չնայած աշխա-
տանքի ընդունակ, բայց հնարավորութեան չունեն ծառա-
յութեան անցնելու և հարկադրված են ապրուստի միջոցի
հարց բարձրացնելու: Այս կատեգորիայի կանայք իրավաբա-
նորեն համարվում են անաշխատունակ, յեթե իրենց խնամ-
քի տակ ունեն 7 տարին չբացած դավակներ: Բնականաբար
ժամանակի ընթացքում ապրուստի կարոտ այս կատեգո-
րիան ևս քանակապես պետք ե արագորեն նվազի, քանի
վոր մեր գործարաններին կից կազմակերպվող մսուրներն
ու մանկական պարտեզները հնարավորութեան պետք ե
տան ավելի մեծ թվով մայրերի աշխատանքի անցնելու
և նվիրվելու մեր յերկրում սոցիալիզմի կառուցման աշխա-
տանքներին:

Ապրուստի հարցում կարևոր մոմենտներից մեկն ել
նրա տեղաբաշխումն ե: Նախկին որենսդրութեամբ վորեւ
ժամանակով չեր սահմանափակված ապահարզանված ամու-
սինների ապրուստ ստանալու իրավունքը: Ներկայումս
գործող որենսդրութեանը վորոշ առավելագույն ժամանակ
ե սահմանում ապահարզանված ամուսնու ապրուստ
ստանալու իրավունքի համար թե այն դեպքում, յերբ ամուս-
նալուծված ամուսինը անաշխատունակ ե, և թե այն դեպ-
քում, յերբ նա գործազուրկ ե:

«Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան որեւնս-
գրքի» 15 հոդովածն ասուամ է, վոր «միջոցներից գուրկ ան-
աշխատունակ ամուսնու՝ մյուս ամուսնուց ապրուստի մի-
ջոց ստանալու իրավունքը պահպանվում է նաև ամուսնու-
թյունը լուծելուց հետո, սակայն վոչ ավելի, քան ամուսնու-
թյունը լուծելուց հետո մեկ տարվա ընթացքում: Միջոցնե-
րից գուրկ գործադուրկ ամուսնուն հասանելիք ոժանդակու-
թյան չափը ամուսնությունը լուծելու դեպքում սահմանվում
և դատարանի կողմից, բայց վոչ ավելի, քան վեց ամիս
ժամանակով...»:

Ապրուստի միջոցի ժամանակի տեսակետից այս սահմա-
նափակումը հիմնավորվում է վոչ միայն նրանով, վոր գոր-
ծադրկությունը մեզ մոտ արդեն վերացված է, վոչ միայն
այն մտահոգութեամբ, վոր ապրուստ ստանալու իրավունքը
չվերածվի ուրիշի հաշվին անվերջ ապրելու և ձրիակերու-
թյան մի միջոցի, այլև այն նախանձախնդրութեամբ, վոր
իրարից բաժանված ամուսինների միջև ապրուստի հարցով
ծաղած կենցաղային վեճերին և տեսեսապես կախյալ դրու-
թյանը վորքան կարելի յե շուտ վերջ դրվի:

Ապրուստի հարցի ճիշտ լուծման տեսակետից նպա-
տակահարմար պիտի համարել այն պրակտիկան, վոր դատա-
րաններն ալիմենտ պահանջող՝ աշխատանքի ընդունակ աս-
մուսնուց նախ պահանջեն տեղեկանք, թե նա հաշվառումն
յննթարկվել է արդոք կադրերի բաժնոււմ, և յեթե պարզվի,
վոր նա չի կամեցել ծառայութեան անցնել վոչ հարգելի
պատճառաբանություններով, նրան որենքով սահմանված
ապրուստի տևողությունը նվազագուրնի հասցնել: Նման
պրակտիկայով դատարանները պայքարած կլինեն աշխա-
տանքի դասալիքների դեմ և նպաստած բանվորական ուժի
հայթայթման ձեռնարկումներին:

Ավելորդ չե հիշատակել, վոր իրենց խնամքի տակ

մինչև Կ տարեկան յերեխա ունեցող և այդ հիման վրա իրավաբանորեն անաշխատունակ համարված մայրերի համար ապրուստ ստանալու առավելագույն ժամանակը մեկ տարի յե՛ համաձայն Գերագույն դատարանի հատուկ պարզաբանության:

Գալով ապրուստի միջոցի չափի քննությանը, պետք և նկատի առնել այն հանգամանքը, թե ապրուստը պահանջվում և ամուսնության ընթացքում թե ամուսնալուծումից հետո: Յեթե ապրուստի պահանջն առաջադրվում և ամուսնության ընթացքում, դատարանը նկատի առնելով մյուս ամուսնու նյութական հնարավորությունները, ամեն մի կոնկրետ դեպքում ըստ իր հայեցողության կարող ե վերջել ապրուստի չափը: Բոլորովին այլ և խնդիրը, յերբ ապրուստի հարցը բարձրացվում և ապահարզանված ամուսինների միջև Վերջին դեպքում, համաձայն «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսդրքի» 15 հոդվածի, «Ապրուստի միջոցի չափը չի կարող ավելի լինել, քան սոցիալական ապահովության համապատասխան գումարի չափը»: Իսկ այդ չափն ամեն տարի սահմանվում և Աշխատանքի կոմիտեիատի կողմից և, համաձայն ներկայիս գործող նորմաների, քաղաքներում մաքսիմում ամսական 18 ռուբլի յե, իսկ գյուղական վայրերում՝ 16 ռուբլի:

Ամուսնալուծումից հետո արվող ապրուստի չափի այս սահմանափակումը նպատակ ունի՝ ա) մասնավոր քաղաքացիների ապրուստ տալու պարտավորությունը հավասարեցնել պետական որդանների սոցիալական ապահովության կարգով ստանձնած պարտավորություններին, բ) ապրուստի միջոցը չդարձնել ձրխակերություն, անհիմն շահագության մի անբյուր, այլ Ֆիզիկական գոյության համար անհրատեղա մինիմալ հնարավորությունն ապահովող ժամանակավոր մի միջոց:

Ապրուստի չստի այս սահմանափակումը չի վերաբերում ամուսնութեան ընթացքում ամուսիններին հասանելիք ապրուստի միջոցին:

Ապրուստի խնդիրը թե ամուսնութեան ընթացքում և թե ապահարզանվելիս կարող եւ ամուսիններին միջև կարգաւորվել փոխադարձ համաձայնութեամբ և կամ վեճի կարգով դատարանի կողմից, քաղաքներում՝ ժողդատարանի, իսկ գյուղական վայրերում՝ գյուղական դատարանի միջոցով:

Ձաղսի միջոցով ապահարզանվելիս ամուսինները կարող են համաձայնութեան դալ կողմերից մեկի մյուսից ստանալիք ապրուստի չստի մասին, փոքախիս համաձայնութեան մասին նրանք պետք ե հիշատակեն իրենց հայտարարութեան մեջ: Այս համաձայնութեան իր ուժը պահում ե մինչև կողմերից մեկի հայցապահանջի հիման վրա դատարանի կողմից համապատասխան վճիռ կայացնելը: (Տես Որենսգրքի 22—24 հոդվածները): Իսկ յեթե ամուսիններն իրենց ամուսնութեանը լուծում են, դատարանի միջոցով, այդ դեպքում, Քաղաքացիական դատավարութեան որենսգրքի 223 հոդվածի համաձայն, ամուսիններին համաձայնութեանն այն մասին, թե նրանցից ով և ինչ չափով պիտի հոգա կարիքավոր անաշխատունակ կամ աշխատունակ, բայց գործազուրկ ամուսնու ապրուստի միջոցը, դատավորը մուծում ե դատական նիստի արձանագրութեան մեջ: Այդ համաձայնութեանը պիտի ի կատար ածվի վորպես դատական վճիռ, վորը սակայն չի գրկում ամուսիններից յուրաքանչյուրին՝ հետագայում, ընդհանուր հայցի կարգով, իրեն հասանելիք ապրուստի միջոցը պահանջելու իրավունքից, յեթե վերջին գումարը համաձայնութեամբ նախատեսված չափից ավելի յե՛ս: Համաձայնութեան չեղած դեպքում, ինչպես նախատեսված ե նույն Որենսգրքի 224 հոդվածով, դատավորը ամուսնալուծութեան մասին վորոշում անելու

հետ միաստամանակ զտրծի հանգամանքները հետ համեմատ, վորոշում է կայացնում, թե ամուսիններից վորը և ինչ չափով, մինչև դաստապահանջի ընդհանուր կարգով լուծվելը, պարտավոր է ժամանակավորապես հաշվառել կարիքավոր անաշխատունակ կամ աշխատունակ, բայց զտրծագուրկ ամուսնուն հասանելի ապրուստի միջոցի չափը:

Ժամանակավոր ապրուստ տալու նպատակն է՝ վորոշ ժամանակով ապահովել կարիքավոր ամուսնուն, մինչև նա ժամանակ ունենա համադաստախան դաստարանում հայց ներկայացնելու և դասավճիռ ստանալու:

Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող ամուսինը համարվում է անտեսապես թույլ կողմ և այդ դրուժյան մեջ սովորաբար կինն է դառնում, խորհրդային որենսդրությունը մի շարք դրուժյաններ է սալիս ապրուստի հայցապահանջ ներկայացնողներին: Այդ դրուժյաններից գլխավորները հետևյալներն են.

ա. Մինչդեռ ընդհանուր առմամբ հայցերը պետք է ներկայացնել պատասխանողի ապրած շրջանի դաստարանին, աշխատավարձի, նույնպես և ապրուստի վերաբերյալ հայցերը, համաձայն Քաղաք. դատ. որենսդրքի 25 հոդվածի ծանոթության, կարելի չէ ներկայացնել նաև հայցվորի բնակավայրում գործող դաստարանին. այսպիսով ապրուստ պահանջող կողմն ազատվում է ճամպորդելու և ծախսեր անելու դժվարությունից:

բ. Վորպեսզի ապահովվի ապրուստի միջոցի բռնագանձումը և հնարավորություն չտրվի անբարեխիղճ պատասխանողին թազցնելու իր գույքը, Քաղ. դատ. որենսդրքի 82 հոդվածի 2 ծանոթության համաձայն, «ապրուստի միջոցի վերաբերմամբ դաստարանը պարտավոր է հայցագիրն ընդունելիս քննության առնել հայցն ապահովելու հարցը»

անկախ նրանից, թե այդ մասին միջնորդութիւնն հարույ-
ված ե թե վոչ:

գ. Չնայած այն հանգամանքին, վոր ընդհանուր առ-
մամբ դատարանի վճիռներն ի կատար են ածվում վճառ-
բեկ դանդաւ տալու պայմանաժամը լրանալուց հետո, իսկ
յեթե վճռաբեկ դանդաւ տրված ե, վճիռը վճռաբեկ ատ-
յանի կողմից հաստատվելուց հետո միայն, վորպես բացա-
ռութիւն Քաղ. դատ. որենսդրքի 187 հոդվածի ա. կետը
նախատեսում ե, վոր ժանհապաղ ի կատար պիտի ածվեն
այն վճիռները, վորոնք վերաբերում են աշխատավարձի և
ապրուստի միջոցի: Այս կերպով խիստ արագացվում ե
ապրուստի միջոցի մասին տրված վճռի կատարումը, նկա-
տի առնելով, վոր ապրուստի միջոցով ե, վոր հայցվորը
պիտի պահպանի իր ֆիզիկական գոյութիւնը:

դ. Որենքը նախատեսում ե նույնպէս, վոր ապրուստի
վերաբերյալ պահանջները համեմատած այլ տեսակի պա-
հանջների, նրանց շարքում նաև վորոշ կարգի պետական
պահանջներ, նախապատվութեան կարգով պետք ե գանձ-
վեն պարտապանից: (Տես Քաղաք. որենսդրքի 101 հոդ-
վածը):

ե. Մինչդեռ այլ տեսակի պահանջները բանվորների
և ծառայողների աշխատավարձից գանձելու դեպքում ամ-
սական աշխատավարձի միայն 20⁰/0-ը կարելի յե բռնել,
ապրուստի գանձումների դեպքում, Քաղաք. դատ. որենս-
դրքի 289 հոդվածի բ. կետով թույլ ե տրվում բռնել
աշխատավարձի 50⁰/0-ը:

զ. Ապրուստի միջոցի բռնագանձումն ապահովելու համար
բոլոր այն դեպքերում, յերբ ապրուստի միջոցը պետք
ե բռնագանձվի առևտրականներից և անաշխատ յեկամու-
տով ապրող անձերից, թույլ չի տրվում, վոր վերջինները
ծախեն իրենց սեփականութիւնն կազմող այգին կամ

ստուճը, մինչև վոր նրանք չապահովին իրենցից հետագա-
յում բռնադանձվելիք սպրուստի միջոցը: Արդժողկոմատի
և Սոցապժողկոմատի հրահանգի համաձայն հիշյալ կատե-
գորիայի անձերը պետք է նախքան այդու և տան վա-
ճառելը ապահովին իրենց նախկին ամուսիններին հասա-
նելիք վեց ամսվա, իսկ յերեսիսաներին՝ մեկ տարվա
սպրուստի միջոցը:

Ապրուստի դանձուժը կարելի յե կատարել վոչ միայն
աշխատավարձից, այլ նաև սոցիալական ապահովագրու-
թյան մարմինների կողմից արվող նպաստների գումարնե-
րից և հանրապետութեանը ըացառիկ ծառայութեան մա-
տուցած անձերին առանձնապես սահմանված կարգով
վճարվող անհատական կենսաթոշակներէց: Այդ նպաստնե-
րից և կենսաթոշակներէց դանձուժը կատարվում է նաև
չափով, ինչ չափով վոր նախատեսված է աշխատավարձից
կատարվող դանձումների համար, այսինքն նվազագույն
աշխատավարձից ավելի ստացված գումարի 50⁰/₀-ը կա-
րելի յե բռնել վորպես սպրուստի միջոց, վոր բռնադանձ-
վում է թե ամուսինների, թե զավակների և թե ընտա-
նիքի այլ անդամների համար: (Տես Քաղաք. դատ. որ.
239 հոդ. 2 ծանոթութեանը):

Հարկադիր աշխատանքի յենթարկված քաղաքացիները
ևս չեն ազատվում նպաստ տալու պարտավորութեանից:
Քայց նկատի առնելով այն հանգամանքը, վոր հարկադիր
աշխատանքի յենթարկվածների աշխատավարձի մի մասը,
համաձայն դատարանի վորոշման, գնում է ուղղիչ աշխա-
տանքային որգանների եզտին, նման դատապարտվածներից
սպրուստի դանձուժը կատարելիս դարձյալ պետք է
առաջնորդվել այն հիմունքներով, ինչ վոր որենքով նա-
խատեսված է աշխատավարձից, նպաստներից ու կենսա-
թոշակներից կատարվող դանձումների համար:

Այն դեպքում, յերբ ապրուստ տալու պարտականութիւնն ունեցող անձնավորութիւնը մահանում եւ թողնում եւ ժառանգական դուքք, անհրաժեշտ եւ ապահովել հատկապէս անչափահաս յերեխաների եւ թոռների ոգտին վորոշված ապրուստի միջոցի բռնադանձումը, մանավանդ այն դեպքերում, յերբ մահացածից զատ չկան ապրուստ տալու պարտավորութիւն ունեցող՝ ընտանիքի այլ անդամներ: Նման դեպքերում նախապատվութեան կարգով պետք եւ ժառանգական դուքքից զանձել ապրուստի միջոցը, մինչև դավակներէ չափահասութիւնը: Խորհրդային կրօնաստանի Գերագույն դատարանի պարզաբանութեան համաձայն, նման դեպքերում զավակների ոգտին պետք եւ բռնադանձվի տաս տարվա համար ապրուստի միջոց, յեթե այդ զավակները տասը տարուց ավելի ուշ չափահաս պիտի դառնան: Մեզ մտտ այդ մասին որեւէ ոչ հատուկ ժամանակ չի սահմանված, բայց յերեխաների կենսական շահերի պաշտպանութեան նախանձախնդրութիւնը պահանջում եւ ապահովել նրանց մինչև չափահասութիւնը:

Զբաղականաւորով վերոհիշյալ բոլոր արտանութիւններով եւ նախազգուշական միջոցներով, խորհրդային իշխանութիւնը միաժամանակ քրեական պատասխանատվութեան եւ յենթարկում բոլոր նրանց, ովքեր, հնարավորութիւն ունենալով հանդերձ, չարամտորեն խուսափում են իրենցից պահանջող ապրուստը վճարելուց: Համաձայն քրեական որեւնագրքի 184 հոդվածի «դատարանի կողմից վորոշված ապրուստի միջոցը վճարելուց չարամիտ կերպով խուսափելու համար այն դեպքում, յերբ վճարելը հնարավոր եւ, կիրարկվում եւ ազատագրվում մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ոսկր»:

Այս բոլորից կարելի յե հեշտութեամբ յեզրակացնել, թե

խորհրդային իշխանությունը ամուսինների ստացվածքային փոխհարաբերությունների մեջ ինչ կարևոր նշանակու-
թյուն է տալիս ապրուստի միջոցին և ըստ ելուժյան սո-
ցիալական ապահովության սժանդակ միջոց հանդիսացող
այլմենար ռեալ դարձնելու համար ինչ գործնական մի-
ջոցներ և ձևեր առնում:

գ. Ժառանգական իրավունք.—Ամուսինների ստաց-
վածքային հարաբերությունների մեջ կարևոր տեղ է
գրավում նաև ժառանգական իրավունքը:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը իր
արտահայտությունը դառել է նաև խորհրդային ժառանգա-
կան իրավունքի մեջ: Պետք է ամենից առաջ ընդգծել այն
հանգամանքը, վոր մեզ մոտ ժառանգական իրավունքն
ըստ ելուժյան մոտավորապես նույն նպատակն է հետա-
պնդում, ինչ ապրուստի միջոցը: Ինք այն ժամանակ, Հոկ-
տեմբերյան հեղափոխությունից սկսած մինչև նոր տնտե-
սական քաղաքականությունը, յերբ վերացված էր ժա-
ռանգական իրավունքը, դարձյալ որենքով նախատեսվում
էր, վոր մեռնողի կինը, զավակները և այլ կարիքավոր ու
անաշխատունակ ազգականները ժառանգական գույքից
10000 ռուբլու սահմաններում բաժին պիտի ստանային:
Որենքը տվյալ դեպքում այն նպատակն էր հետապնդում,
վոր կարիքավոր և անաշխատունակ անձնավորություննե-
րի հոգան ամբողջությամբ չընկներ պետական որդանների
վրա, այլ մասամբ այդ հարցը կարգավորվեր մեռնողից
մնացած նյութական միջոցներով:

Նեպից հետո, յերբ Քաղաքացիական որենսդիրքն ըն-
դունվեց, նրա մեջ տեղ գտավ նաև ժառանգական իրա-
վունքը: Համաձայն Քաղաքացիական որենսդրքի 418 հոդ-
վածի ըստ որենքի և ըստ կտակի ժառանգելու յեն կոչ-
վում միայն ուղիղ գծով իշնող ժառանգները (զավակներ,

թոռներ և ծոռներ) և մեռնողից հետո կենդանի մնացած ամուսինը, այլև այն անաշխատունակ և չքավոր անձինք, վորոնց մեռնողն իր ծախքով պահել է իր մահից առաջ առնվազն մեկ տարի»:

Ավելորդ չէ հիշատակել, վոր մեր որենքները համաձայն վոչ մի տարբերություն չկա ժառանգներին հասանելիք բաժինների մեջ: Նրանք բոլորն էլ հավասար բաժիններ են ստանում, մինչդեռ բուրժուական դրեթե բոլոր յերկրներում իդական սեւին պատկանողներին հասանելիք ժառանգական մասը արական սեւին պատկանողներին հասնող բաժնից անհամեմատ պակաս է: Բուրժուական որենսդրությունը հետևողական կերպով ամբողջ որենսդրության մեջ անցկացնում է կնոջ իրավագրկման կամ իրավասանմանադակման դիժը:

Հիշատակության արժանի յե նաև այն հանգամանքը, վոր ժառանգական իրավունքը մեզ մոտ տարածվում է գյուղական տնտեսության վրա միայն այն դեպքում, յերբ գյուղական ծուխը համարվում է մարած: Քանի դեռ տվյալ տնտեսությունը (ծուխը) հանգած չի, այդ ծխի անդամներից մեկի մահվան դեպքում նրա՝ ծխի մեջ ունեցած շնչաբաժինը վոչ թե ընդհանուր կարգով անցնում է իր որինական կամ ըստ կտակի ժառանգներին, այլ մնում է տվյալ ծխի մեջ վորպես ծխի ընդհանուր ոգտագործման յենթակա գույք: Միայն այն դեպքում, յերբ ծխի վերջին անդամը մահանում է, հետևաբար ծուխն ամբողջովին մարում է, ծխից դուրս գտնվող որինական ժառանգները, համաձայն Քաղաք. որենսդրքի վերոհիշյալ 418 հոդվածի, կարող են ժառանգել այդ մարած ծխի գույքը: Իսկ յեթե ծխի մարելուց հետո 418 հոդվածում հիշատակված ժառանգներ չլինեն, մնացած ծխի ամբողջ գույքն անցնում է տվյալ գյուղի վոխադարձ ողնության կոմիտեյին (փոկին):

Անհրաժեշտ է հիշեցնել վերջապես, վոր ժառանգական

իրավունքի խնդրում ևս վոչ մի տարբերութիւն չկա տու-
մարագրված կամ շտոմարագրված (փաստական) ամուս-
նութիւններէ միջև:

գ. Ամուսնալուծութիւն կամ ապահարգան.—Ամուս-
նական իրավունքի բարդ և ուշադրով խնդիրներէց մեկը
ապահարգանն է:

Խորհրդային որենսդրութիւնը բուրժուականից այս
հարցում տարբերվում է նրանով, վոր բուրժուական իրա-
վունքի մեջ ամուսնալուծութիւնը հիմնված է մեղավորու-
թիւն սկզբունքի վրա, ըստ վորում խիստ բարդ է այն սխտեմը,
վորի միջոցով պետք է վորոշվի, թէ ամուսիններէց մեկի
ինչ տեսակի մեղավորութիւնն է, վոր մյուս կողմին
իրավունք է տալիս ապահարգան պահանջելու:

Ամուսնալուծութիւն իրավունքի վրա իր ժամանակին
ամենամեծ ազդեցութիւն է ունեցել քրիստոնէյական
կրօնը. այդ բացասական ազդեցութիւնից ազատ չի նաև
բուրժուական ներկա որենսդրութիւնը:

Ընդհանուր առմամբ բուրժուական գիտնականներն այն
տեսակետն են պաշտպանում, վոր ամուսնութիւնը ցմահ
պետք է տևի, ուրիշ խտրելով մահն և միայն, վոր պետք
է բաժանի ամուսիններին: Իրենց այս տեսակետը նրանք
փորձում են հիմնավորել նրանով, վոր ամուսնալու-
ծումը բացասական կերպով է անդրադառնում յերեխա-
ների վրա: Զօխտելով հանդերձ ապահարգանի բացա-
սական վորոշ ազդեցութիւնը յերեխաների ինամբի և դաս-
տիարակութիւն պայմանների վրա, այնուամենայնիվ աչ-
քաթող չպետք է անել այն եյական հանգամանքը, վոր
յերեխաները շատ ավելի աննպաստ պայմանների մեջ են
գտնվում, յերբ ձևականորեն իր գոյութիւնը շարունա-
կում է պահել ընտանեկան ոջախը, բայց ներքուստ այդ-
պիսին արդեն քայքայված է, ներքուստ դա արդեն կատա-

բայ դժոխք ե, անվերջ տարածայնություններէ և սկանդաւ-
ներէ հեղձուցիչ մի վայր:

Իտալական և իսպանական (կաթոլիկ յեկեղեցու ազդե-
ցութեան տակ դոմփող) որենադրությունները միանգամայն
ժխտում են ապահարզանը: Իտալական ներկա որենադրքի 148
հարվածի համաձայն ամուսնությունը լուծվում է ամուսին-
ներից վերեւ մեկի մահով միայն: Մտտ 50 տարի առաջ
իտալական պառլամենտում մտցվեց որինազիծ, վորը թույլ
էր տալիս ապահարզանը. բայց կաթոլիկ հավատացյալների
մասսայական հանրադրությունը բողոքեց այդ որինազիծի
դեմ, և պառլամենտը դրա հիման վրա թաղեց որինազիծը:

Րուբժուական մյուս պետությունները, հատկապէս բու-
ղոքական յեկեղեցու ազդեցութեան տակ յեղածները, ընդու-
նում են ապահարզանը, բայց խիստ հազվադէպ դեպքերում,
այդ խնդրում շեշտակի նսեմացնելով կնոջ իրավունքը:

Ըստ բուրժուական ամուսնական իրավունքի, ապա-
հարզանի գլխավոր որինական առիթները հետեյալներն
են. ա) ամուսնական դավաճանություն, բ) կրկնամուսնու-
թյուն, գ) սեռային անընդունակություն, դ) ամուսիններից
մեկի անհայտ բացակայությունը, ե) ամուսիններից մեկի
դատապարտությունը՝ գուգորդված նյութական միջոց-
ներից լիովին զրկվելու հետ և այլն: Պետք է հիշատակել,
վոր վերոհիշյալ բոլոր դեպքերում ևս հնարավոր չէ ամուս-
նալուծվել, վորովհետև պահանջվում է, որինակ, վոր ամուս-
նական դավաճանությունը տեղի ունեցած լինի ամուս-
նությունից յերեք տարի հետո, վոր հիմք հանդիսանա
ապահարզանի, վոր սեռային անկարողությունը սկսված
լինի նախքան ամուսնությունը, իսկ յեթե այդպիսին առաջ
է յեկել ամուսնությունից հետո, թույլ չի տրվում ամուս-
նալուծվել, և նման մի շարք անխմաստ կաշկանդումներ:

Ի՞նչ դիրք բռնեց այս հարցում Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Ամենից առաջ պետք է հիշատակել, Վոր ամուսնալուծման համար խորհրդային որենսդրությունը չի պահանջում վոչ կողմերից վորևե մեկի մեղավորությունը, վոչ հատկապես սահմանված հարգելի պատճառներ, վոչ ել վորևե ձևական կաշկանդում: Մեր իրավունքի սկզբունքային դիրքը կայանում է նրանում, վոր ինչպես ամուսնությունը հիմնված է կողմերի փոխադարձ համաձայնության վրա, նույնպես և ապահարդանը կախված է յուրաքանչյուր ամուսնու ցանկությունից, քանի վոր նման ցանկությունն ինքնին ապացույց է այն վրաստի, վոր տվյալ ամուսնության հիմքը կազմող փոխադարձ հոժարակամ համաձայնությունն արդեն խախտվել է:

Ամուսնալուծման ազատության մասին 1917 թվի դեկտեմբերին հրատարակված դեկրետը սահմանեց այս սկզբունքային դրությունը, վորը հետագայում նույնությամբ մտած Խորհրդային հանրապետությունների ամուսնական որենսդրության մեջ: Նշանակալից է այն հանդամանքը, վոր խորհրդային իշխանությունը Հոկտեմբերյան հեղափոխությունից մի ամիս չանցած հատուկ դեկրետ հրատարակեց հատկապես ապահարդանի անկաշկանդ իրավունքի մասին: Բոլոր այլ կապանքների հետ նաև ամուսնական շրջթաները փշրելու կոչված այս պատմական դեկրետը հատկապես կանանց դարավոր ստրկության և իրավազրկության դեմ ուղղված պատմական մի ակտ եր:

Համաձայն «Ամուսնության, ընտանիքի և ինտակալության որենսդրքի» 18 հոդվածի ժամուսինների կենդանության դեպքում ամուսնությունը կարող է լուծվել ինչպես ամուսինների փոխադարձ համաձայնությամբ, այնպես ել նրանցից վորևե մեկի միակողմ ցանկությամբ:

Հնուևարար յեթե կողմերը փոխադարձ համաձայնության
են յեկել ասպհարզանվելու մասին, նրանք կարող են այդ
մասին դրավոր կամ բերանացի հայտարարություն տալ
իրենց ասքած տեղի (քաղաքի թե գյուղի) Ձագսի որդա-
նին, իսկ վերջինս այդպիսին տոմարագրում և առանց
վորեև ճևականության և ձգձգումի: Յեթե ամուսիններից
մեկն և ցանկանում ամուսնալուծվել, նա կարող և դիմել
Ձագսին, և այդ դեպքում Ձագսը մյուս ամուսնուն ուղար-
կում և ամուսնության լուծման տոմարագրության պատ-
ճենը՝ դիմում տվող կողմից մատնանշված հասցեյով: Յեթե
նույնիսկ ամուսնալուծման մասին Ձագսին դիմում ներ-
կայացնողը վորեև փաստաթուղթ չունի, վորով հաստատվի
իրենց անուսնության տոմարագրված լինելը, ապա այդ
դեպքում նա կարող և տալ ստորագրություն այդ մասին՝
հիշատակելով ամուսնության տոմարագրության ժամա-
նակը և տեղը, իր վրա վերցնելով իր հաղորդած տեղեկու-
թյունների ճշտության պատասխանատվությունը: Յեթե
տվյալ ամուսնությունը տոմարագրված չի յեղել Ձագսի
որդաններում (փաստական ամուսնություն), այդ դեպքում
ամուսնալուծվել ցանկացող ամուսինը պետք և դիմի վոչ
թե Ձագս, այլ իր շրջանի դատարանին (գյուղական կամ
ժողդատարան ըստ պատշաճի), վորպեսզի վերջինս նախ
հաստատի կողմերի միջև գոյություն ունեցած փաստա-
կան ամուսնությունը և ապա լուծի այդ ամուսնությունը:
Ինամ կարիք չկա, վոր ամուսնալուծման մասին Ձագսին
կամ դատարանին դիմում տվողն իր հայտարարության
մեջ հիշատակի այն զրդապատճառները, վորոնք մղել են
նրան այդ քայլին դիմելու: Նշանակալից և սակայն այն
հանգամանքը, վոր ամուսնալուծման գրեթե բոլոր հայտա-
րարությունները շոշափում են ամուսինների ներքին մտեր-
մական կյանքի մանրամասնությունները, տալիս են ըն-

տանեկան անախորժությունների և սկանդալների ամբողջ պատկերը և թվում են այն բոլոր հարգելի առիթները, վորոնց հիման վրա հայցող կողմն իրավունք և համարում բաժանվել իր ամուսնուց: Այս յերևույթն ինքնին ցույց և տալիս, վոր հին կենցաղը, հին արտոլիցիաները դեռ պահում են իրենց ազդեցությունը և հետևաբար անհրաժեշտ և մասսայական բացատրական աշխատանք այս հին մտայնությունը փոխելու, նոր կենցաղի ուղին հարթելու համար:

Տարակույս չկա, վոր ամուսնությունը դադարում և նաև ամուսիններից մեկի մահվան դեպքում, այլև այն ժամանակ, յերբ դատարանը ամուսիններից մեկին ճանաչում է մահացած նրա անհայտ բացակաության հիման վրա:

Գ Լ Ո Ի Խ Գ.

Ը Ն Տ Ա Ն Ի Ք

1. ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՏԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՉԱՎԱԿՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչդեռ բուրժուական իրավունքն ազգականության միակ հիմքն ընդունում է որինական ամուսնությունը, խորհրդային իրավունքն ընտանիքը հիմնում է իրական ծննդի վրա: Բուրժուական իրավունքը արենակցությունը ժխտում է այնտեղ, վորտեղ չկա որինական ամուսնություն. հետևաբար յեթե յերեխան ծնվել է որինական չհամարված կենակցությունից, այդ դեպքում տվյալ յերեխայի և նրա փաստական ծնողների միջև առաջ չեն դալիս այն իրավահարաբերությունները, այն փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, վորոնք բուրժուական որենսդրությամբ նախատեսված են որինական ամուսնությունից ծնված յերեխանների և նրանց ծնողների համար: Ուրիշ խոսքով

ասած, բուրժուական ընտանեկան իրավունքը հիմնական սկզբունքային տարբերություն է դնում ամուսնական և արտամուսնական յերեխաների միջև, որինական ամուսնությունից ծնված յերեխաներին առնելով պաշտպանության տակ, իսկ «վոչ-որինական» ամուսնությունից ծնված յերեխաներին դուրս թողնելով որենքի պաշտպանության շրջանակից: Այս վերջին կատեգորիայի ծնունդները, վորոնք բուրժուական իրավագիտության լեզվով կոչվում են «վոչ որինական», այլ խստքով ապորինի, ընդհանուր առմամբ իրավագուրկ գրության մեջ են: Շատ քիչ յերկրների համեմատաբար նորագույն որենսդրություններն են, վոր վորոշ նվազագույն զիջումներ կատարում են այսպես կոչված «փաստական հարաբերություններին»: Այդ զիջումները վոչ-այլ ինչ են, յեթե վոչ ստացվածքային ամենատարրական իրավունքներ, վոր որենքով վերապահվում են արտամուսնական գավախներին: Նույնիսկ գերմանական նորագույն որենսդրությունն իրավունք է վերապահում արտամուսնական յերեխայի հորը վորոշ նյութական վրկանքով ազատվել իր փաստական յերեխային տնական ապրուստ տալու պարտավորությունից: Մի շարք բուրժուական պետություններ վոչ-որինական ճանաչված ամուսնությունից ծնված յերեխաներին այս տարրական իրավունքն իսկ զլանում են:

Սրբազան մասնավոր սեփականության վրա հիմնված բուրժուական ընտանիքի տնտեսական շահը թույլ չի տալիս, վոր «ապորեն» ծնունդների պատճառով նրա տնտեսությունը պակասի: Որինական ամուսնությունից ծնված գավախները թե՛ նյութական շահագրգռության և թե՛ կեղծ բարոյականության տեսակետից չեն հանդուրժում վոչ «որինական», այլ բնական գավախների գոյությանը: Ընտանիքի ներսում միանգամայն իրավագուրկ, պետական և հասարակական իրական աջակցությունից և պաշտպանությունից զուրկ

«ապրիլին» զավակների հսկայական բազմությունները թողնված բախտի քմահաճույքին, զոհ են դնում բուրժուական իրավակարգի դահճային որենքներին: Վիճակագրական տվյալները դալիս են ապացուցելու, վոր կապիտալիստական աշխարհում արտամուսնական յերեխաների մահացության թիվը յերկու անգամ ավելի շատ է, քան «որինական» ամուսնությունից ծնված զավակների միջին մահացությունը: Վիճակագրական այդ տվյալները սակայն վերաբերում են այն ժամանակաշրջանին, յերբ կապիտալիստական աշխարհը դեռ չէր ապրում տնտեսական աննախընթաց այն կրիզիսը, վորը ներկայիս վարակել է ամբողջ կապիտալիզմի որգանիզմը, վորը քայքայում է, փտեցնում նրա հասարակակարգի յերեկվա կենսունակ ուժերը: Համաշխարհային տնտեսական կրիզիսի հետ կապված աշխատավորական բանվորական մասսաների հսկայական դործազրկությունը, դործազուրկներին որենքով նախաաեւված մինիմալ ռժանդակության գումարները սահմանափակումը, մի խոսքով՝ կապիտալի կողմից բանվորական մասսաների վրա սկսված ծավալուն հարձակումը, ստեղծել են այժմ այնպիսի ծանր տնտեսական - բնակարանային և կենցաղային պայմաններ, վոր նոր մի վիճակագրություն անպայման ավելի սարսափելի լեզվով պիտի խոսեր առհասարակ յերեխաների և հատկապես «ապրեն» համարված զավակների ներկա վողբերգական դրության մասին:

Խորհրդային իրավունքն ընտանիքի հիմք ընդունում է ծնունդը, այն իմաստով, վոր անկախ այն հանգամանքից, թե զավակի ծննդի պատճառ յեղող քաղաքացիներն ամուսնական իրավահարաբերության մեջ են թե վոչ, նրանք համարվում են իրենցից ծնված յերեխայի ծնողներ և հետեւաբար նրանց և տվյալ յերեխայի միջև ծննդի փաստից առաջ են դալիս այն փոխադարձ իրավունքներն ու պար-

տավորութիւնները, վորոնք նախատեսված են ընտանեկան իրավունքով Սրանից հետևում է, վոր յերեխան ծնված լինի տոմարագրված, կամ փաստական ամուսնութիւնից և կամ թե պատահական կենսակցութիւնից, միևնույն ե. բոլոր յերեք դեպքերումն ել իրավահարաբերութիւնները նույնն են, բոլոր դեպքերում ել ծնողները միևնույն պարտավորութիւններն ունեն իրենց յերեխաների հանդեպ, բոլոր պարագաներումն ել յերեխաները միևնույն իրավունքները և պարտավորութիւններն ունեն իրենց ծնողների նկատմամբ: Այսպիսով խորհրդային իշխանութիւնը անվերադարձ կերպով վերջ է դրել «սրինածին» և «ապորինի ծննդի» հասկացողութիւններին, լիակատար ձևով հավասարեցրել է ամուսնական և արտամուսնական զավակների իրավական դրութիւնը, վերացրել է այն դաժան որենքները, վորոնք բուրժուական «քաղաքակրթութեան» պայմաններում վտանահարում են յերեխաների հսկայական մասսաների ամենատարրական մարդկային իրավունքները:

Խորհրդային ընտանեկան որենսդրութեան հիմնական նպատակն է լիովին ապահովել մանկութեան շահերը թե ֆիզիկական, թե դաստիարակչական և թե ստացվածքային տեսակետից:

Մեր «Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսդրքի» 25 հոդվածն ասում է. «Չավակների և ծնողների փոխադարձ իրավունքները հիմնվում են արեհակցութեան վրա: Այն զավակները, վորոնց ծնողներն ամուսնացած չեն, վայելում են նույնպիսի իրավունքներ, ինչպես և ամուսնացած ծնողների զավակները»:

2. ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՍՉՄԱՆ ԿԱՐԳԸ

Ամուսնութեան տոմարագրութեան մասին խոսելիս առիթ ունեցանք շեշտելու, վոր տոմարագրութիւնը մեծա-

պէս հեշտացնում և զավակների անձնական և ստացվածքային իրավունքների պաշտպանութունը: Այսպէս, յեթե յերեխայի ծնողները տոմարադրված են Չազսի որդաններում վորպէս ամուսիններ, այդ դեպքում այլևս կարիք չկա յերեխայի հայրութեան խնդիրը բարձրացնելու: Բոլորովին այլ և դրութունը, յերբ ամուսնութեանը չի տոմարադրված: Այս վերջին դեպքում անհրաժեշտութեան և ծագում գատական կարգով ապացուցելու կամ ժխտելու հայրութեանը:

Չափակի շահերի պաշտպանութեան նպատակով յերեխայի մորն իրավունք և վերապահվում ինչպէս հղիութեան ընթացքում, նույնպէս և զավակը ծնվելուց հետո, իբր բնակատեղի Չազսի որդանին հայտարարութեան տալ զտվակի հոր ով լինելու մասին, հիշատակելով վերջինիս հայրանունը, ազգանունը և բնակավայրը: Նման հայտարարութեան ստանալուն պէս Չազան այդ մասին իրապե՛կ և դարձնում վորպէս հայր մատնանշված անձնավորութեանը, և յեթե վերջինս ծանուցում ստանալուց մի ամսվա ընթացքում վորևէ առարկելութեան չներկայացնի Չազսին, քաղաքացիական կացութեան ակտերի մատչանում անձանագրվում և վորպէս յերեխայի հայր: Իսկ յեթե հայտարարութեան մեջ վորպէս հայր մատնանշված անձը ժխտում և իրեն վերագրված հայրութեան հանգամանքը, նա կարող և Չազսի ծանուցումն ստանալու որից մեկ ամսվա ընթացքում գատական կարգով առարկել իրեն վերագրված հայրութեան դեմ: Այդ դեպքում գատարանն և, վոր պիտի վերջնականապէս լուծի հայրութեան խնդիրը:

Յեթե յերեխայի մայրը Չազսին վորևէ հայտարարութեան չի արել, նա կարող և յերեխայի ծնվելուց հետո նման իմաստով հայտարարութեան անել իբր շրջանի ժողգատարանին: Յեթե յերեխան ծնվել և փաստական

ամուսնությունից կամ պատահական սեռային կենսակցությունից, յերեխայի մայրն եւ, վոր դատարանին սլիտի ներկայացնի անհրաժեշտ տվյալներ՝ ապացուցելու համար, վոր իր կողմից մատնանշված անձն ե ծնված յերեխայի հայրութիս յի՞նչ դավալը ծնվել ե տոմարագրված ամուսնությունից ե չե՞նչ ախուսմենայնիվ յերեխայի հայրը ժխտում ե իր հայրությունը, ապա այդ դեպքում նա յե, վոր դատարանին պարտավոր ե ներկայացնել ապացույցներ իր այդ առարկությունը հաստատելու համար, այսինքն ապացուցելու համար, վոր տվյալ յերեխայի հայրը ինքը չի, այլ մի ուրիշը, վորին նա պետք ե մատնանշի:

Այն դեպքում, յերբ անհրաժեշտություն ե ծագում յերեխայի հայրը ճանաչելու, ժողդատարանը պարտավոր ե վորպէս պատասխանող դատական պրոցեսին մասնակից դարձնելու վոչ միայն յերեխայի մոր կողմից մատնանշված անձնավորությանը, այլ վերջինս կողմից ցույց արված բոլոր այն անձնավորություններին, վորոնց մասին կա հայտարարություն, վոր նրանք եւ յերեխայի սաղմնավորման շրջանում սեռական հարաբերություն են ունեցել նրա մոր հետ:

Ժողդատարանը դատաքննությամբ պարզված տվյալների հիման վրա կարող ե դալ յերկու տարբեր յեզրակացության. կամ դատարանը կարողանում ե վերջնականապէս պարզել, թե ով ե զավակի իսկական հայրը, ե կամ թե հաստատված համարելով հանդերձ, վոր մեկից ավելի անձնավորություններ զավակի մոր հետ յերեխայի սաղմնավորության ժամանակաշրջանում սեռային հարաբերության մեջ են յեղել, չի կարողանում սակայն վերջնականապէս վորոշել այն խիստ դժվարին հարցը, թե հասկապես ով այդ անձնավորություններից հանդիսանում ե յերեխայի հայրը: Առաջին դեպքում ժողդատարանը, վորոշելով հայ-

բության խնդիրը, ավյալ անձնավորության վրա դնում ե-
այն բոլոր պարտավորությունները, վորոնք որենքով նա-
խատեսված են ծնողի համար: Ավելի դժվարին ե յերկ-
րորդ պարագան:

Մինչև 1927 թվի նոյեմբերի 1-ը, յերբ դեռ ներկա
Որենսդիրքը գործադրության մեջ չեր դրված, նախկին
որենսդրության համաձայն գոյություն ունեւր այսպես
կաշված բազմահայրության հասկացողություն: Որենքը նա-
խատեսում եր, վոր բոլոր այն դեպքերում, յերբ ժողա-
տարանը չի կարողանում վորևե մեկին խսկական հայր ճա-
նաչել, շնորհիվ այն հանգամանքի, վոր յերեխայի սաղմնա-
վորման ժամանակաշրջանում մեկից ավելի անձնավորու-
թյուններ սեռային կենսացության մեջ են գանվել
յերեխայի մոր հետ, դատարանին իրավունք եր վերապահ-
վում յերեխայի հայր ճանաչելու բոլոր կասկածելիներին
և նրանց բոլորի վրա ել դնելու որենքով ծնողների համար
սահմանված պարտավորությունները: Սրանից հետևում
ե, վոր ավյալ յերեխան փոխանակ մեկի, բազմաթիվ հայ-
րեր եր ունենում:

Նոր որենսդրքով բազմահայրության ինստիտուտը
վերացվեց, և շատ իրավացի կերպով: Կարելի յե յերևա-
կայել հոգեկան դրությունն այն մեծացող յերեխայի, վորին
միքանի հայր են մատնանշում. կարելի յե նաև ըմբռնել
բազմաթիվ հայրերի կողմից նույն յերեխայի նկատմամբ
կիրաւվող դաստիարակչական մեթոդների բացասական հե-
տևանքները: Բազմահայրության կարգը կարող եր յերե-
խայի համար նյութապես միայն նպաստավոր լինել. մինչ-
դեռ ծնողական պարտականությունների մեջ ամենապլիսա-
վորը դաստիարակչական կողմն ե, գավակին ներկա վողով
կրթելու, նրան հանրորեն ոգտակար գործունեյության
պատրաստելու նախանձախնդրությունն ե:

Ներկա «Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսդրքի» 32 հոդվածը նախատեսում է, վոր «յեթե դատարանը հայրութեան հարցը քննելիս հաստատի, վոր զավակի մայրը սաղմնավորման շրջանում, բացի վերջնիս կողմից մատնանշված անձից, սեռային հարաբերութեան մեջ ե յեղել նաև այլ անձանց հետ, դատարանը, յեկնելով յացառապես զավակի շահերից, վորոշում է կայացնում այդ անձերից վորևէ մեկին զավակի հայր ճանաչելու մասին և նրա վրա յե դնում որենսդրքով նախատեսված պարտականութիւնները»:

Անհրաժեշտ է ընդգծել, վոր ամուսնութեան տոմարագրված լինելու դեպքում ևս կարելի յե առարկել հայրութեան մասին, ուրիշ խոսքով՝ իրավունք է վերապահվում բոլոր շահագրգռված անձնավորութիւններին, բոլոր դեպքերում դատական կարգով ապացուցել տվյալ յերեխայի իսկական ծնունդը, հաստատել, վոր Զազսում տոմարագրված սղամարդ ամուսնուց չե, վոր ծնվել է տվյալ յերեխան, այլ մի ուրիշից: Նման դատական հայց կարող է հարուցանել վոչ միայն Զազսում տոմարագրված պաշտոնական հայրը, այլև մայրը, ինչպես և զրանում շահագրգռված ամեն մի յերրորդ անձնավորութիւն:

Նկատի առնելով հայրութիւնը ճանաչելու խնդրի դժվարութիւնը, դյուրդատարանների նոր կանոնադրութեամբ, նման հայցերի քննութիւնը վերապահված է միայն ժողդատարաններին, վորոնցից սակայն պահանջվում է բազմակողմանի և աշալուրջ քննութիւն՝ ճիշտ վորոշում կայացնելու համար:

3. ԾՆՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յեթե ծնողները մեկ ընդհանուր ազգանուն են կրում, ապա այդ ազգանունն է սահմանվում նաև զավակներին

համար: Յեթե ծնողները չունեն ընդհանուր ազգանուն, այդ դեպքում ծնողների փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում յերեխայի ազգանունը: Յեթե այդ խնդրում ծնողները համաձայնության չզան, զավակներին ազգանունը վորոշվում և խնամակալական որդանների կողմից: Յերեխայի հոր անհայտ լինելու դեպքում զավակը կրում և մոր ազգանունը: Ամուսնալուծության դեպքում զավակները պահպանում են այն ազգանունը, վորը նրանք ստացել են ծնողների արձանագրվելու ժամանակ, իսկ յեթե ծնողները չեն արձանագրված և համաձայն չեն, վոր ամուսնալուծումից հետո յերեխան պահի իրենց ընդհանուր ազգանունը, այդ դեպքում վեճը լուծվում և դարձյալ խնամակալական որդանների կողմից:

Գալով քաղաքացիության հարցին, յեթե ծնողները ասրբեր պետությունների քաղաքացիներ են, և յեթե նրանցից թեկուզ մեկը զավակի ծնվելու պահին խորհրդային քաղաքացի յե յեղել և յեթե զավակը ծնվելիս ծնողներից թեկուզ մեկը ասրբելիս և յեղել ԽՍՀ Միության տերիտորիայի վրա, այդ դեպքում զավակը համարվում և խորհրդային քաղաքացի և հատկապես այն Խորհրդային հանրապետության քաղաքացի, վորտեղ նա ծնվել և: Այն դեպքում սակայն, յերբ զավակի ծնվելու պահին նրա ծնողներից մեկը յեղել և խորհրդային քաղաքացի, բայց յերկու ծնողն ևլ զավակի ծնվելու ժամանակ Միության սահմաններից դուրս են գտնվել, զավակի քաղաքացիությունը վորոշվում և ծնողների փոխադարձ համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում հարցը լուծվում և այն յերկրի որենցների համաձայն, վորտեղ գտնվելիս են յեղել ծնողները յերեխայի ծննդյան պահին:

«Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենագրքի» 36 հոդվածի համաձայն ՀՄԽՀ քաղաքացի հան-

դիտացող և ԽՍՀ Միութեան տերիտորիայի վրա բնակվող ծնողներից մեկի քաղաքացիութեան փոփոխութեանը վոչ մի կերպ չի ազդում դավաճանների քաղաքացիութեան վրա: Ծնողների քաղաքացիութեան ամալիսի փոփոխութեան գեպըում, վորի հետևանքով յերկու ծնայն ևլ դառնում են ՀՍՖՀ քաղաքացի կամ ընդհակառակը՝ յերբ յերկուան ևլ դաշարում են ՀՍՖՀ քաղաքացի լինելուց, համապատասխան ձևով փոփոխվում և նաև նրանց դավաճանների քաղաքացիութեանը, յեթե միայն այդ դավաճաները 14 տարին դեռ չեն լրացրել: Իսկ յեթե նրանք 14 տարին արդեն լրացրել են, ծնողների քաղաքացիութեան փոփոխութեանը բնավ չի անդրադառնում նրանց քաղաքացիութեան վրա:

Հավատքի նկատմամբ պետք է ընդգծել, վոր ծնողների ունեցած հավատքը կամ նրանց համաձայնութեանը՝ դավաճանների այս կամ այն կրոնին պատկանելու մասին՝ վոչ մի իրավական նշանակութեուն չունի. չափահաս դառնալուց հետո յե, վոր նրանց դավակր վորոշում է իր վերաբերմունքը դեպի այդ հարցը:

Ձավաճանների վերաբերյալ ծնողներն ունեն նաև իրավունքներն ու պարտականութեանները, ինչ խնամատարութեան և դաստիարակութեան, նույնպես և նյութատեա ապահովելու աեսակետից:

Ծնողներն իրենց դավաճանների վերաբերյալ բոլոր միջոցներին ձեռնարկում են միատեղ և փոխադարձ համաձայնութեամբ: Այս խնդրում ծնողների միջև տարաձայնութեուն լինելու դեպքում վիճելի հարցերը լուծվում են խնամակալական որդանների կողմից:

Եթե ծնողները միասին չեն ապրում, ապա նրանց համաձայնութեանից է կախված, թե նրանցից վորի մաս պետք է մնան անչափահաս դավաճանները:

Այս մասին անհամաձայնութիւն լինելու դեպքում հարցը լուծվում է դատական կարգով: Յեթե ծնողները միասին չեն ապրում և դատարանը պիտի վճռի նրանց գա- վականերին ծնողներից մեկի խնամատարութեամբ հանձնելու հարցը, դատարանը 10 տարին լրացրած գավականերին պետք է հարցում անի, թե նրանք ծնողներից վորի մոտ են կամենում մնալ: Անհրաժեշտ է սակայն ընդգծել, վոր դատարանը պտրտավոր չէ անպայման վորոշում կայաց- նել գավակաների ցանկութեան համաձայն, քանի վոր դատա- րանի պարտականութիւնն է ապահովել յերեխայի անձ- նական և դաստիարակչական շահերը և հետեւաբար նա վորո- շում կայացնելիս նախապատվութեամբ գավականերին պետք է հանձնի այն ծնողի խնամքին, վորն ավելի յերաշխիք է տալիս գավակաների շահերի պաշտպանութեան համար:

Անչափահաս գավակաների թե անձնական և թե ստաց- վածքային շահերի պաշտպանութիւնն ընկնում է ծնողների վրա, վորոնք գավակաների ներկայացուցիչներն են հան- դիսանում ամեն տեղ, ինչպէս դատարանում, նույնպէս և պետական այլ հաստատութիւններում:

Համաձայն Քաղաքացիական որենսդրքի 7 հոդվածի, 18 տարին լրացրած անձերն են, վոր քաղաքացիական տեսակետից չափահաս են համարվում: Համաձայն նույն որենսդրքի 9 հոդվածի, 14 տարին չլրացրած անչափահաս- ները և վորպէս վատնիչներ խնամակալութեան տակ առնված անձինք գործարքներ կարող են կատարել իրենց որինական ներկայացուցիչների (ծնողների, վորդեզրդների, խնամակալների կամ հոգաբարձուների) համաձայնութեամբ: Նրանք իրավունք ունեն ինքնազուխ անորինելու իրենց ստացած աշխատավարձը և պատասխանատու չեն իրենց գործողութիւններով ուրիշներին հասցրած վնասների համար: Բայց անչափահասները, անկախ այն հանդաման-

քից, թե նրանք 14 տարին լրացրած են թե վոչ, դատարանում չեն կարող հանգես դալ վորպես հայցվոր կամ պատասխանող: Այդ և պատճառը, վոր համաձայն Քաղաքացիական դատավարութեան որենսդրքի 13 հոդվածի, անչափահասների հայցերը ներկայացվում են նրանց որին նական ներկայացուցիչների կողմից, իսկ նրանց դեմ ուղղված պահանջները ներկայացվում են նրանց որինական ներկայացուցիչներին. այլ խոսքով՝ անչափահասների շահերի դատական պաշտպանութեան լրավումը վերապահվում է անչափահասների ծնողներին, խնամակալներին կամ վորդեպրոզներին:

Ծնողներն իրավունք ունեն դատախարակութեան և ուսում տալու նպատակով իրենց զավակներին հանձնելու ուրիշներին: Նրանց իրավունք է վերապահվում նաև զավակների համաձայնութեամբ նրանց աշխատանքային պայմանադիրը կնքելու, այն պայմաններով և կարգով, վոր նախատեսված են աշխատանքային որենսդրութեամբ:

Ծնողներին վերապահված այս իրավունքի միակ նպատակն է դատախարակել յերեխաներին և նրանց պատրաստել հանրագուտ գործունեյալթեան համար:

Ծնողները պարտավոր են հետրավորութեան տալու իրենց զավակներին դպրոց հաճախելու և նկատի առնելով այն հանգամանքը, վոր մեզ մոտ ընդհանուր պարտադիր ուսում է հայտարարված, քրեական պատասխանատվութեան են յենթարկվում այն ծնողները կամ խնամակալները, վորոնք արդելում են իրենց անչափահաս զավակներին դպրոց հաճախել:

Ծնողական իրավունքները պետք է կիրառվեն բացառապես նկատի առնելով յերեխաների շահերը:

Թորհրդային իրավունքը ծնողներին իրենց զավակներին նկատմամբ չի վերապահում վորևն հատուկ իշխանութեան:

ծնողներն իրավունք չունեն կարգապահական պատասխանատվութեան յենթարկելու, պատժելու, ծեծելու կամ քանտարկելու իրենց զավակներին: Յեթե ծնողները դիմեն վերոհիշյալ միջոցներին, նրանք յենթարկվում են քրեական պատասխանատվութեան:

Բոլորովին այլ սկզբունքի վրա յե հիմնված բուրժուական որենադրութեանը: Որինակ, «Գեմակրատական» Ցրանսիայի որենքների համաձայն, ծնողներն իրավունք ունեն իրենց զավակներին պատժելու, բայց մոչ թե անմիջապես, այլ դատարանի միջոցով. անպիտան որենադրութեանը ծնողներին իրավունք է վերապահում անմիջականորեն պատժի յենթարկելու իրենց անչափահաս զավակներին: Գերմանական որենադրութեանը այդ իրավունքը վերապահում է ծնողներին թե անմիջականորեն և թե դատարանի միջոցով:

Մտողական իրավունքը խորհրդային որենադրութեան համաձայն շարունակվում է մինչև զավակների քաղաքացիական չափահասութեանը, այսինքն մինչև 18 տարին լրանալը: Չափահաս դառնալուց հետո զավակներն ազատվում են ծնողական խնամակալութեանից և դառնում են իրավազոր և ինքնուրույն անձնավորութեաններ և այլևս իրենց ծնողներից վորեւ տեսակետով կախում չունեն:

Մէյն դեպքերում, յերբ ծնողները չեն կատարում կամ անկանոն ու աննպատակահարմար են կատարում իրենց պարտականութեանները կամ իրենց ծնողական իրավունքներին ոգտվում են ախպիսի ձևով ու յեղանակով, վոր չի համապատասխանում զավակների անձնական և դաստիարակչական շահերին, նման ծնողները ժողդատարանի վճռով կարող են զրկվել իրենց ծնողական իրավունքներից (տես «Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսգրքի» 46 հոդ.): Իրենց ծնողական իրավունքներն ի

չարք զործ զնոզ կամ իրենց ծնողական պարտականու-
թյունները պատշաճ ձևով չկատարող ծնողներին ծնողա-
կան իրավունքներից զրկելու հարցը կարող են բարձրաց-
նել դատարանում ինչպես համապատասխան որդանները
և հասարակական կազմակերպութայունները, նույնպես և
առանձին քաղաքացիներ: Նույնիսկ մինչև ժողդատարանի
վճիոր, խնամակալութայան մարմիններին իրավունք է վերա-
պահվում ծնողներից կամ այլ անձերից վերցնելու նրանց
զավակներին կամ նրանց խնամակալութայան տակ գտնվող
անչավահաս յերեխաներին, յեթե նրանք գտնում են, վոր
թեկուզ ժամանակավորապես այդ յերեխաներին նրանց մոտ
թողնելը փաստակար եր զավակների համար: Իրենց այս ժա-
մանակավոր կարգադրութայան մասին խնամակալական որ-
դանները տեղեկացնում են ժողդատարանին, վորին ե որեն-
քով վերապահված իրավունք՝ վերջնականապես վճռելու
յերեխաների խնամատարութայան և դրա հետ կապված՝
ծնողներին իրենց ծնողական իրավունքներից զրկելու հար-
ցերը: Իրենց ծնողական իրավունքներից զրկված ծնողները
սակայն պարտավոր են իրենց զավակներին նկատմամբ կատա-
րել այն պարտականութայունները, վոր նախատեսված են
որենքով: Նրանք չեն զրկվում իրենցից վերցված և խնա-
մակալական ու հոգաբարձական մարմինների խնամքին
հանձնված զավակների հետ տեսակցելու իրավունքից: Սա-
կայն խնամակալութայան և հոգաբարձութայան մարմինը կա-
րող ե ծնողներին թույլ չտալ տեսակցել զավակների հետ,
յեթե գտնի, վոր այդպիսի տեսակցութայունը կարող ե փա-
սակար ազդեցութայուն ունենալ զավակների վրա: Այսպիսի
դեպքում շրջանի ժողդատարանն ե, վոր հատուկ վորոշումով
վերջնականապես պետք ե լուծի տեսակցութայան իրավունքի
խնդիրը:

4. ԾՆՈՂՆԵՐԻ ՅԵՎ, ԶԱՎԱԿՆԵՐԻ ԱՏԱՅՎԱԾՔԱՅԻՆ
ՓՈՒՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծնողները պարտավոր են ապրուստի միջոց հայթայթելու ինչպես իրենց անչափահաս, նույնպես և կարիքավոր անաշխատունակ զավակներին: Այդ պարտականությունից նրանք չեն ազատվում նաև այն դեպքում, յերբ դատարանի վճռով նրանք զրկված են ծնողական իրավունքներից: Ծնողները յեթե համաձայնության չզան իրենց զավակներին ապրուստի միջոցով ապահովելու խնդրում, այդ դեպքում ապրուստի խնդիրը լուծում և դյուրական դատարանը գյուղերում, իսկ ժողդատարանը՝ քաղաքներում: Բնականաբար ծնողներն իրենց զավակների հանդեպ ունեցած այս պարտականությունը պիտի կատարեն համաձայն իրենց նյութական հնարավորությունների: Հետևաբար ժողդատարանը կամ գյուղդատարանը ապրուստի հայցը քննելիս ու վճռելիս նկատի առնելով ծնողներին նյութական դրությունը, վորոշում և, թե ծնողներից ով և ինչ չափով պետք և մասնակցի զավակների ապրուստի միջոցին: Ծնողների անտեսական դրության մեջ հետագայում առաջացած փոփոխությունը որինական հիմք և տալիս նրանցից յուրաքանչյուրին դիմելու դատարանին և խնդրելու նոր վճիռ կայացնել ապրուստի միջոցի նկատմամբ: (Տես Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսդրքի 50 հոդվածի ծանոթությունը):

Անչափահաս զավակներին ապրուստի միջոցով ապահովելու հարցն այնքան կենսական նշանակություն ունի, վոր ինչպես Զազսի որդանները ամուսնալուծման տոմարադրության ժամանակ, նույնպես և դատարանները դատական կարգով ամուսնալուծման մասին վորոշում կայացնելիս, պետք և հետաքրքրվեն այդ խնդրով: Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսդրքի 22 հոդ-

վածը նախատեսուած է, վոր քաղաքացիական կացութեան
ակտերի տոմարագրութեան մարմիններն ամուսնալուծու-
թեան տոմարագրելիս պետք է անպայման հարց տան այն
մասին, թե ծնողներից վորի մոտ պետք է մնան անչափա-
հաս զավակները և նրանցից վորը և ինչ չափով պետք է
հողա զավակների ապրուստի ծախքերը: Յեթե բաժանվող
ամուսինների միջև այդ հարցերի վերաբերմամբ համաձայ-
նութեան կայանա, այդպիսին մուծվում է ամուսնալու-
ծութեան տոմարագրութեան մատչանում և քաղվածքը
տրվում է ամուսիններից յուրաքանչյուրին: Այդ համաձայ-
նութեանով սահմանված պարտավորութեանը կարող է
վերսվել միայն դատարանի վորոշումով:

Իսկ յեթե ամուսինները դատարանի միջոցով է, վոր
ամուսնալուծվում են, դատարանն է, վոր, համաձայն Քաղ.
դատ. որենսդրքի 223 և 224 հոդվածների, պարտավոր
է հետաքրքրվել նրանց անչափահաս յերեխաների խնամա-
տարութեան հարցով և յեթե բաժանվող ամուսինները վո-
խազարձ համաձայնութեամբ այդ հարցը լուծել են, դա-
տարանը նրանց այդ համաձայնութեանը մտցնում է դա-
տական նիստի արձանագրութեան մեջ: Այդ համաձայնու-
թեանն ի կատար պիտի ածվի վորպես դատավճիռ, մինչև
շահագրգռված կողմի դիմումի հիման վրա դատարանի
կողմից նոր վճիռ կայացվելը: Յեթե սակայն ծնողների
միջև յերեխաների խնամատարութեան և ապրուստի մի-
ջոցի մասին համաձայնութեան չկայանա կամ յեթե նրանց
համաձայնութեանը դատարանի հայեցողութեամբ վնասա-
կար համարվի զավակների կենսական շահերի համար,
գործը քննող դատարանը զավակների շահերն աչքի առաջ
ունենալով վորոշում է կայացնում այն մասին, թե մինչև
հարցի վերջնական լուծումը զավակները ժամանակա-
վորապես ծնողներից վոր մեկի մոտ պետք է մնան և

թե նրանցից ով և ինչ չափով պետք և մասնակցի նրանց
ապրուստի ծախսին:

Յիստ գործնական նշանակութուն ունի այն խնդիրը,
թե անցյալ ժամանակի համար կարելի չե արդյոք ապ-
րուստի միջոց բռնադանձել: Այս հարցը կարող և ծագել
ինչպես մինչև ապրուստի հայցապահանջ ներկայացնելը,
նույնպես և դատական վճիռ ստանալուց հետո:

Ընդհանուր առմամբ, անցյալ ժամանակի համար ապ-
րուստի միջոց չի կարելի պահանջել, քանի վոր ապրուստը
վորպես գոյութունը պահպանելու անհրաժեշտ և անհետա-
ձգելի միջոց՝ իր բնույթով անմիջական դանձման հետ և
կապված: Հետևաբար յեթե ապրուստ պահանջելու իրա-
վունքն ունեցող անձնավորութունը միառժամանակ հետո
միայն դատարան և դիմում, կամ հնայած նրան, վոր կա
դատական վճիռ և կատարողական թերթ, բայց չի հետա-
պնդում դրա կատարումը, նա այլևս կորցնում է իրա-
վունքը անցած ժամանակում կուտակված գումարները պա-
հանջելու: Այս ընդհանուր կանոնից կարելի չե շեղում կա-
տարել միայն այն բացառիկ դեպքերում, յերբ ապրուստ
ստացողը կապացուցի, վոր ինքը կատարել է պարտքը իր
կամ իր խնամքին հանձնված յերեխայի ապրուստի հա-
մար, վորպիսի պարտքը ծածկելու այլ հնարավորութունից
նա միանգամայն զուրկ է: Նման դեպքերում դատարան-
ները կարող են, նայած կոնկրետ գործի հանգամանքնե-
րին, թույլ տալ ապրուստի դանձումը նաև անցյալ ժա-
մանակի համար, կատարված պարտքի սահմաններում:

Այս տեսակետից առանձնահատուկ դրության մեջ
և ապահարզանված ամուսինների ապրուստի հարցը: Քանի
վոր այդպիսի ամուսինների ապրուստի իրավունքը վորոշ
ժամանակով սահմանափակված է ըստ «Ամուսնության,
ընտանիքի և խնամակալության որենսդրքի» 15 հոդվածի,

Ձագսի կամ դատարանի միջոցով ապահարզանված ամուսինը յեթե ամուսնալուծման թվականից վորոչ ժամանակ անցնելուց հետո միայն դիմի դատարան ապրուստի հայցով, նա կորցնում և իրավունքը այդ անցած ժամանակի համար ապրուստ պահանջելու և այդ չափով սահմանափակվում և նրա ապրուստի տևողությունը: Հետևաբար յեթե անաշխատունակ ամուսինը, վորի համար որենքով սահմանված և ապրուստի իրավունք մինչև մեկ տարի ժամանակով, ամուսնալուծումից վեց ամիս անցնելուց հետո միայն դատական հայց հարուցանի, դատարանը նրա ոգտին ամենաշատը կարող և միայն հետագա վեց ամիսներին համար ապրուստի միջոց բռնագանձելու վորոշում կայացնել: Սրանից հետևում և, վոր ապրուստի միջոցի կարիք ունեցողներն անհապաղ պետք և դիմեն դատական պաշտպանության:

Մնչավահաս զավակներին ապրուստ տալու պարտավորությունը տևում և մինչև զավակների չափահասությունը, իսկ կարիքավոր անաշխատունակներին՝ մինչև վերջիններին կարիքի անցնելը: Ձավակներին տրվելիք ապրուստի չափը վոչնչով չի սահմանափակվում և կախված և ապրուստի միջոց տվողների նյութական հնարավորությունից:

Ձավակների ապրուստի հայցերն ապահովելու, ապրուստի միջոցի վերաբերյալ վորոշումներն անհապաղ կատարելու, ապրուստի միջոցը նախապատվության կարգով բռնագանձելու, ապրուստի միջոց տալուց չարամտորեն խուսափողներին քրեական պատասխանատվության յենթարկելու վերաբերյալ կանոնները նույնն են, ինչ վոր սույն գրքի բ. գլխում սոված և ամուսինների ապրուստի միջոցի առթիվ:

«Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենս-

գրքի» համաձայն զավակները նույնպես պարտավոր են ապրուստի միջոց հայթայթելու իրենց կարիքավոր անաշխատունակ ծնողներին: Զավակների միջև ապրուստ տալու խնդրում անհամաձայնութուն լինելու դեպքում վեճը լուծում է դատարանը, հաշվի առնելով զավակների անասական դրությունը:

Անհրաժեշտ է հիշատակել, վոր, մեր քրեական որոնսգրքի 184 հոդվածի համաձայն, այն ծնողները, վորոնք իրենց մանկահասակ զավակներին թողնում են առանց վորևէ ոգնության կամ նրանց հարկադրում են մուրացկանությամբ պարտապելու, յենթարկվում են ազատազրկման մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանքի մինչև յերեք հարյուր ռուբլի:

Հատուկ ուշադրության արժանի յեն ծնողների և զավակների ստացվածքային իրիսհարաբերությունները գյուղական անտեսության պայմաններում: Համաձայն Հողային որոնսգրքի 64, 65 և հետագա հոդվածների, ծուխը մեծանում է նաև Ֆննդով. ուրիշ խոսքով յերեխան ծնվելուց հետո ինքնին համարվում է տվյալ ծխի իրավադորանդամը և հետևաբար նա ևս ծխի մյուս անդամների պես հավասար իրավունք ունի ծխի հողի և գույքի վրա: Յեթե ծնողները բաժանվեն և այդ պատճառով ծխաբաժանք կատարելու անհրաժեշտություն ծագի, դատարանը պետք է ուշադրության առնի անչափահաս յերեխաների ստացվածքային իրավունքները և նրանց ևս հանի համապատասխան ծխաբաժին, այդպիսին հանձնելով այն ծնողի անմիջական տնորինությանը, վորի խնամքին դատարանի վորոշումով հանձնվում են անչափահաս յերեխաները: Յեթե ծխաբաժանքի կարգով չապահովվի զավակների գոյությունը, դատարանը պարտավոր է միաժամանակ վորոշում կայացնել զավակներին տրվելիք ապրուստի միջոցի մասին, հաշվի

անելով ծնողներին նյութական և ընտանեկան պամանները, աշխատունակութունը և այլ կարևոր նշանակութուն ունեցող հանգամանքներ:

Այն դեպքում, յերբ ամուսնութեան միջոցով դյուղական ծխում մտնող կիներ իր հետ տանում և նախկին ամուսնուց ունեցած զավակներին, նրա նոր ամուսինն իրավունք չունի մերժելու այս վերջիններին: Իրենց մոր ամուսնութեան միջոցով այդ զավակներն ել դառնում են ավյալ ծխի անդամ և վայելում են այն իրավունքները, վոր վերադարձված են ծխում ծնված զավակներին: Իսկ յեթե բացի ամուսնացող գույգից ծխում կան նաև ընտանիքի այլ չափահաս անդամներ, վորոնք չեն ցանկանում, վոր ամուսնութեան միջոցով իրենց ծուխը մտնող կնոջ հետ բերած յերեխաները ևս ծխի անդամ դառնան, նրանք կարող են ամուսնութեան թվականից տասնհինգ որվա ընթացքում փոխադարձ համաձայնութեամբ և կամ դատական կարգով կատարել ծխաբաժանք: Այս վերջին դեպքում, համաձայն Գերադույն դատարանի պարզաբանութեան, ամուսնացող կնոջ հետ բերված զավակներին ավյալ ծխի ընդհանուր գույքից բաժին չի հանվում:

Ժառանգական իրավունքը լիովին պաշտպանում և զավակներին շահերը: Համաձայն Քաղաքաց. որենսդրքի 418 հոդվածի, ժառանգ համարվում են վոչ միայն մեռնողի մահվան պահին կենդանի յեղող զավակները, թոռները և ծոռները, այլև նրա կենդանութեան ժամանակ հղիացված և մահվանից հետո կենդանի ծնված ուղիղ գծով իջնող ժառանգները (զավակները, թոռները և ծոռները):

Պետք է հիշատակել, վոր ծնողները իրենց զավակներին որինական և ըստ կտակի ժառանգներ չեն համարվում: Ծնողները (հայրն ու մայրը) համաձայն Քաղաք. որենսդրքի

418 հողվածի կարող են մաս ստանալ իրենց մահացած զավակների թողած ժառանգությունից միայն այն դեպքում, յերբ ապացուցվի, վոր նրանք անաշխատունակ և չքավոր են և մեռնող զավակը նրանց պահել և իր ծախքով իր մահից առաջ առնվազն մի տարի:

5. ԱՅԼ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՆԷԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընտանեկան իրավունքը վոչ միայն կարգավորում և ծնողների և զավակների փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները, այլ նաև այլ մոտ արենակիցներին:

«Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսդրքի» 55 հոդվածը նախատեսում է պապի ու տատի և թոռների փոխադարձ պարտավորությունը ապրուստի խնդրում: Անաշխատունակ և կարիքավոր պապն ու տատը իրավունք ունեն ապրուստի միջոց ստանալու իրենց բավականաչափ միջոցների տեր թոռներից, յեթե միայն անկարող են նրանք այդ միջոցներն ստանալ իրենց ամուսիններից կամ զավակներից: Նմանապես ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեն իրենց բավականաչափ միջոցների տեր պապից և տատից նաև թոռներն ու ծոռները, յեթե այդ միջոցները չեն կարող ստանալ նրանք իրենց ծնողներից:

Վերոհիշյալ կատեգորիայի ազգականներին միջև ապրուստ պահանջելու իրավունքը և տալու պարտավորությունը կախված է այն պայմաններից, վորոնց մասին մանրամասն խոսված է ամուսնական իրավունքի առնչութեամբ: Խնորոջ պայմանը տվյալ դեպքում այն և, վոր թոռներն ու նրանց տատն ու պապը պարտավոր են ապրուստի միջոց տալու իրար միայն այն դեպքում, յերբ ավելի մոտիկ ազգականներ չկան, կամ յեթե կան, բացակա յեն և գործնականում նրանցից ապրուստի միջոց ստանալու հնա-

յրավորությունն չկա և կամ թեև ներկա յեն, բայց իրենց
 տնտեսական դրությունը հնարավորությունն չի տալիս
 նյութական սթանդակությունն հասցնելու: Յենթադրենք,
 վոր ծնողները կամ բնավ հնարավորությունն չունենն իրենց
 անչափահաս կամ կարիքավոր անաշխատունակ զավակնե-
 րին ապրուստի միջոցով ապահովելու և կամ շնորհիվ ի-
 րենց նյութական սուղ պայմանների կարող են նրանց արա-
 մադրել այնքան ջնջին ապրուստի միջոց, վոր նույնիսկ
 նրանց մինիմալ ապահովությունն չի տալիս: Նման դեպքում
 մեր որևնքը իրավունք ե վերապահում ապրուստի միջոց
 սլահանջելու տատից և պապից, տռաջին դեպքում միայն
 նրանցից, իսկ յերկրորդ դեպքում մասամբ ծնողներից,
 մասամբ ել պապից և տատից: Չափի խնդիրը թողնվում ե
 գատարանի հայեցողությանը, իսկ դատարանը բնականա-
 բար հիմք պետք ե ունենա ծնողների և պապի ու տատի
 նյութական հնարավորությունները: Կողմերի նյութական
 դրության զգալի ամեն մի փոփոխությունն անշուշտ իր
 ազդեցությունը կունենա ապրուստի խնդրում վերոհիշյալ
 ազգականների ունեցած փոխադարձ պարտավորության վրա:
 Պետք ե հիշատակել, վոր ազգականների միջև ապրուստի
 միջոցի չափը վոչնչով չի սահմանափակված: Նման սահմա-
 նափակումը, ինչպես օւռիթն ունեցել ենք ասելու, վերա-
 բերում ե միայն ամուսնալուծված ամուսինների ապ-
 րուստի չափին, ինչպես օւռողության, նույնպես և ամուս-
 նական դուժարի խնդրում:

«Ամուսնության, ընտանիքի և խնամակալության
 որոնսզքքի» 54 հոդվածը կարգավորում ե յեղբայրների և
 քույրերի փոխհարաբերությունը գարձյալ ապրուստի
 խնդրում: Կարիքավոր անչափահաս յեղբայրներն ու քույ-
 րերն իրավունք ունենն ապրուստի միջոց ստանալու բա-
 վականաչափ միջոցների տեր իրենց յեղբայրներից և քույ-

րերից այն դեպքում, յերբ հիշյալ յեղբայրներն ու քույրերը
չեն կարող ապրուստի միջոցներ ստանալ իրենց ծնող-
ներից վերջինների՝ միջոցների գուրկ վիճելու պատճառով:

Ժառանգական իրավունքի տեսակետից հիշյալ ազգա-
կանների փոխհարաբերությունը բախորովին այլ եւ Քաղաքա-
ցիական որենսզբքի 418 հոդվածի համաձայն ըստ որինի
և ըստ կտակի ժառանգելու իրավունք ունեն միայն ուղիղ
դժով իջնող ժառանգները, այսինքն մեռնողի գավակները,
թոռներն ու ծոռները, մեռնողից հետո կենդանի մնացած
ամուսինը, այլև այն անաշխատունակ և չքավոր անձինք,
վորոնց մեռնողն իր ծախքով պահել ե իր մահից առաջ վոչ
պակաս մեկ տարուց: Սրանից հետևում ե, վոր մինչդեռ գա-
վակները, թոռներն ու ծոռները համարվում են որինական
ժառանգներ, ծնողներն ու պապն ու տատիկը ժառանգ չեն
համարվում և կարող են իրենց գավակների կամ թոռների
ժառանգությունից մաս ստանալ միայն վորպես նրանց
խնամքի տակ ապրած անաշխատունակ և չքավոր անձեր:
Այս վերջին շարքին են պատկանում նաև մեռնողի քույրերն
ու յեղբայրները:

Գ Լ Ո Ի Ե Գ.

Վ Ո Ր Գ Ե Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԽՈՐԷՐԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԲՐ
ՎՈՐԳԵԳՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԱՐ

Ընտանեկան իրավունքի կարևոր խնդիրներից մեկը
վորդեգրությունն ե:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո վորդեգրու-
թյունը բացարձակապես արգելվեց բալոր Խորհրդային հան-
րապետություններում: 1918 թվի դեկտեմբերին ընդունված
«Քաղաքացիական կացության ակտերի որենսզբքի» 183 հոդ-

վածը նախատեսում եր, վոր Որենսդրքի ուժի մեջ մտնելու որից թույլ չի արվում վորդեգրել վոչ հարազատ և վոչ եր ոտար յերեխաներս նման ամեն մի վորդեգրությունն վոչ մի պարտավորությունն չեր սուաջացնում վորդեգրողների, նույնպես և վորդեգրվողների համար: Ինչի՞ պետք է վերագրել խորհրդային իշխանության այս կատեգորիկ բացասական վերաբերմունքը՝ վորդեգրության նկատմամբ: Իրա համար կան հետևյալ յերեք հիմնական դրդապատճառները.

ա. Խորհրդային իրավակարգը միանգամայն ժխտում է մարդը մարդու միջոցով շահագործելու կապիտալիստական սխտեմը և հետևաբար նա միջոցներ ձեռք պետք է առներ վերացնելու նման շահագործման ամեն մի հնարավորությունն, հատկապես աշխատանքային հարաբերություններն ընագավառում: Այս նպատակով է, վոր խորհրդային իշխանությունը հրատարակեց Աշխատանքային որենսդրությունը, վորը կարգավորում է վարձու աշխատանքի պայմանները և հատկապես իր պաշտպանության տակ է առնում անչափահասներին և մանկաստաններին, նրանց համար ստեղծելով աշխատանքային այնպիսի պայմաններ, վոր բացասաբար չանդրադառնան մանուկ սերնդի առողջական դրության վրա:

Աշխատանքի պաշտպանության տեսակետից վորդեգրության վտանգը կայանում եր նրանում, վոր աշխատանքային որենսդրության կողմից վարձու աշխատանքի համար վարձող կողմի համար նախատեսված ծանր պայմաններից խուսափելու և եժան բանվորական ուժ ձեռք բերելու մասին մտածող անտեսություններ և ընտանիքներ ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում կարող եյին դիմել վորդեգրության միջոցին: Այսպիսով վորդեգրության պիտակի տակ անչափահաս յերեխաների շահագործման լայն հնարավորություն կարող եր ստեղծվել: Վորդեգրության միջոցով

վորդեգրող անտեսությունները հնարավորություն կունենային խուսափելու աշխատանքի պաշտպանության մարմինների անմիջական կոնտրոլից և իրենց ընտանիքի ներսում ապրուստի գոյության միջիմալ ծախսով շահագործել անչափահասների բանվորական ուժը: Բնականաբար Հոկտեմբերյան հեղափոխությունը, պրոլետարիան գլխատառուրան չնը կարող հանդուրժել սոցիալապես վտանգավոր նման յերևույթը և ահա հատկապես անչափահաս բանվորական ուժի կենսական շահերի պաշտպանության խոր նախանձախնդրություն և հանդիսանում այն հիմնական պատճառը, վորի հիման վրա որևնապրական կարգով արգելվեց վորդեգրությունը:

բ. Գրդասպատճառը սերտ կապ ունի 1918 թվի մայիսի 1-ին հրատարակված Ժառանգության վերացման դեկրետի հետ: Մենք առիթն ունեցել ենք ասելու, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը բացասական վերաբերմունք ցույց տվեց նաև Ժառանգական իրավունքի նկատմամբ, վորն ինքնըստինքյան վոչ այլ ինչ է, յեթե վոչ կապիտալիստական հասարակակարգի հիմնական անկյունաքարը կազմող մասնավոր սեփականության ինստիտուտներից մեկը: Խորասկիչով կապիտալիստական կարգերը, Հոկտեմբերյան հեղափոխությունը բնականաբար պետք է վերացնեի նաև կապիտալի կուտակման և մասնավոր սեփականության հավերժացման միջոցներից մեկը հանդիսացող Ժառանգական իրավունքը:

1918 թվի մայիսի 1-ի դեկրետով վերացնելով Ժառանգության իրավունքը, խորհրդային իշխանությունը սոցիալական ապահովության նպատակով թույլատրեց միայն, վոր մեռնողի ամենամոտ արենակիցները, յեթե միայն նրանք անաշխատունակ են և կարիքավոր, բաժին (10.000 ռուբլու սահմաններում) ստանան մահացածի գույքից: Վորդեգրությունը կարող էր միջոց հանդիսանալ ի խույս վերոհիշյալ

դեկրետի և ի միաս պետական գանձարանի՝ անչափահաս և հետևաբար անաշխատունակ անձ մտցնել ընտանիքից ներս և նրա միջոցով ողտվել անա այն գումարից, վորը նույնպես պետք և անցներ պետութեան այն դեպքում, յեթե ընտանիքում չկային կարիքավոր անաշխատունակ մերձավորներ։ Մահացածի գույքից սզտվելու իրավական հնարավորութեանից գուրկ անձանց ձեռքում վորդեգրութեանը կարող եր դռնալ վորոշ անտեսական արժեք ձեռք բերելու մի միջոց, վորից, սակայն, ամենից քիչ կարող եր սզտվել վորդեգրված անչափահասը, քանի վոր գույքի անմիջական տնորինութեանը և շահագործումը բնականաբար կմնար ընտանիքի այլ չափահաս անձերի ձեռքում։

Մրանից հետևում ե, վոր վորդեգրութեանը ժխտելու յերկրորդ հիմնական դրդապատճառը կապ ունի պետական գանձարանի շահերի պաշտպանութեան նախանձախնդրութեան հետ։

դ. Պատճառը այն համոզմունքն եր, վոր բոլոր անաշխատունակների, անապաստանների և ծնողազուրկների խնամակալութեան հոգսը պետք ե ծանրանա իշխանութեան համապատասխան որդանների (հատկապես սոցիալական ազահովագրութեան մարմինների), այլև այդ նպատակով կազմակերպվող հասարակական կազմակերպութեանների վրա։ Այդ ժամանակ քաղաքացիական և ինտերվենցիոն կոիմները դեռ չեյին տարածել իրենց սարսափները, և այդ պայմաններում խորհրդային իշխանութեանը ձեռնարկած լինելով յերեխաների հասարակական դատարարկութեան կազմակերպական աշխատանքներին, հիմք ուներ մտածելու, վոր իրեն կհաջողվի բավարար չափով լայն և ճիշտ դնել այդ գործը և հետևաբար այլևս կարիք չափաի դպացվեր դիմելու վորդեգրութեան միջոցին։

Անա այն յերեք հիմնական դրութեանները, վորոնք իր

ժամանակին անհրաժեշտ եյին դարձնում ժխտելու վորդեգրությունը:

1918 թվի որենսդրությունը ժխտելով հանդերձ վորդեգրությունը, հարկադրված եր միաժամանակ իր պաշտպանության տակ առնելու մինչև այդ որենսդրության գործադրությունը վորդեգրվածների իրավունքները: Թորհրդային որենսդրությունը հարկադրված եր հաշովել այդ պատմական փաստի հետ, ինչպես վոր նա հարկադրված եր պաշտպանության տակ առնելու նախապես տեղի ունեցած կրոնական ամուսնությունները, նույնիսկ բազմակնությունը:

Այդ նպատակով ել «Բաղաքացիական կացության ակտերի որենսդրքի» 182 հոդվածը վորդեգրվածներու հավասարեցրեց հարազատ զավակներին, նրանց և վորդեգրողների միջև հաստատելով այն փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները, վոր ընտանեկան որենսդրությամբ սահմանված են ծնողների և զավակների համար:

Տարիներ հետո, 1926 թվին Թորհրդային ԽՍՀՄ-ում, իսկ 1927 թվին Թորհրդային Հայաստանում վորդեգրության արգելքը վերացվեց, և ներկա որենսդրքը մանրամասն կերպով նախատեսում և կարգավորում ե վորդեգրվածների և վորդեգրողների իրավահարաբերությունները:

Հարց ե ծագում, թե ինչ նկատառումներով Խորհրդային իշխանությունը վերականգնեց վորդեգրության ինստիտուտը:

1918—1926 թվականը—դա ներքին քաղաքացիական կռիվների, արտաքին ինտերվենցիոն պատերազմների և նրանցից անբաժան տնտեսական քայքայման և կազմալուծման, այլև տարերային ազեանների (սովի) տարիները և նրանց հաջորդող մեր ժողովրդական տնտեսության

վերականգնման աշխատանքներն ընդգրկող պատմական շրջանն է:

Ինչպես հազարավոր ֆրոնտները, նույնպես և տարերային ազետները սարսափելի չափերի հասցրին անապատան յերեխաների թշվառությունը: Պետութային սոլյալ պայմաններում ունեցած իր նյութական և պարենավորման հնարավորություններով ամբողջովին չէր կարող ընդգրկել անապատան յերեխաների միլիոնավոր զանգվածների խնամատարության և դաստիարակության հսկայական գործը: Մյուս կողմից աշխատավոր դեռուպայիությունը սովի և թշվառության տարիներին ինքնաբերաբար ապատան էր տալիս բազմաթիվ ծնողազուրկ, անապատան յերեխաների, ընդունելով նրանց իր ընտանիքում և վերաբերվելով նրանց հետ վորպես հարազատներ: Աշխատավորական մասսաների այս ինքնակամ պատրաստակամությունը՝ ողնելու իր սեփական իշխանությանը անապատանության սոցիալական չարիքի դեմ կռվելու լինողում, նույնպես գոտեհնուց խորհրդային իշխանության ղեկավար որդաններին, տալով նրանց յերաշխիք, վոր աշխատավորությունը թույլ չի տալիս անչափահասների շահագործումը: Բացի վերոհիշյալ նոր հանգամանքներից, կար նաև ժառանգական իրավունքի, թեև սահմանափակ, ճանաչումը, վորպես հետևանք նոր տնտեսական քաղաքականության:

Ահա այն հիմնական նոր պայմանները, վորոնք հնարավոր դարձրին թույլատրելու վորդեգրությունը:

Նախքան անցնելը վորդեգրության հետ կապած փոխհարաբերությունների պարզաբանմանը, անհրաժեշտ է հիշատակել, վոր դեռևս 1922 թվին Մորհրդային Ռուսաստանում, մեկ տարի հետո մեզ մտա՝ Մորհրդային Հայաստանում հողային որենսդրությամբ ընդունված էր վորդե-

դրութեան մի յուրահատուկ տեսակը, այն է՝ դյուրակիտե տնտեսութեան մեջ դրսից մարդ ընդունելու կարգը (ИРНИ-МАЧЕСТВО)։ Գյուղացիական կենցաղում բավական շատ տարածված այս սովորութեանը, վերով տնտեսութեան բարգաւաճմանը նպաստելու նպատակով ծխի մեջ վորպես նոր անդամ ընդունվում է ոտար մարդ, ինքնին առաջին քայլն եր դեպի վորդեգրութեանը, թեև այդ սովորութեան և վորդեգրութեան միջև կան վորոշ տարբերութեաններ։ Այդ տարբերութեաններն այն են, վոր ա) վորդեգրումը թույլ է տրվում միայն անչափահասներին նկատմամբ, մինչդեռ ծխում դրսից ընդունվողը կարող է լինել ինչպես անչափահաս, նույնպես և չափահաս անձ. բ) ծխում դրսից ընդունվողը դառնալով ծխի անդամ, վայելում է ստացված քային վորոշ իրավունքներ ինչպես ծխում մնացած ժամանակում, նույնպես և ծխից բաժանվելիս, մինչդեռ վորդեգրվողը, հասկապես քաղաքի պայմաններում, դառնալով հանդերձ վորդեգրողի ընտանիքի անդամ, սեփականութեան իրավունք ձեռք չի բերում վորդեգրողի ունեցած գույքի վրա։

2. ՎՈՐԴԵԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Վորդեգրութեանը թույլ է տրվում միմիայն փոքրահասակներին և անչափահասներին նկատմամբ և բացառապես յերեխաներին շահերը նկատի առնելով։ Հետևաբար ամեն մի վորդեգրութեան, վորը հետապնդում է այլ հետին նպատակ (որինակ ավելորդ բնակելի տարածութեան ունենալու, վարձու աշխատանքի շահագործումը վարագուրել և այլն) չպետք է թույլատրվի։ Մյուս կողմից, նեղ իմաստով չպետք է հասկանալ յերեխայի շահերը։ Որենսդիրը «յերեխայի շահերի» տակ հասկանում է վոչ միայն նյութական շահը, այլ յերեխայի դաստիարակութեան և նրան հանրո-

դուռ աշխատանքային գործունեյության պատրաստելու պարագաները՝ Սրանից պետք է յեղբակացնել, վոր խնամակալական և հողաբարձական մարմինները, վորոնց վերապահված է իրավունք՝ թույլ տալ վորդեգրուածը, պետք է ընդունեն միայն այնպիսի անձերի կողմից առաջադրված վորդեգրության առաջարկը, վորոնք տալիս են յերաշխիք, թէ վորդեգրվողին կինամեն և կզատտիարակեն իրենց հարազատ զավակների նման, կտան նրան աշխատավորական վոգով կրթություն, նրան կդարձնեն սոցիալիզմ կառուցող մեր յերկրի համար ոգտավետ անձնավորություն։ Այս նախանձախնդրությամբն է, վոր որենքը վորդեգրելու իրավունք չի վերապահում՝

ա. ՀՄՆՀ սահմանադրության 85 հոդվածի դ., ե., գ. և ը. կետերում հիշատակված անձերին, այն է՝ բոլոր դավանությունների և ազանդների կուսակցոններին ու կրոնական պաշտամունքների հոգևոր սպասավորներին, վորոնց համար այդ գրադմունքն արհեստ է. նախկին վոստիկանության, ժանդարմական վարչության և պահնորդական բաժանմունքների պաշտոնյաներին ու գործակատարներին մուսաստանի թագավորական տան անդամներին, այլև վոստիկանության, ժանդարմերիայի և պատժիչ մարմինների գործունեյությունը ղեկավարող անձերին և խմբապետներին, սահմանված կարգով հոգեկան հիվանդ և խելագար ճանաչվածներին, շահախնդրության նպատակով գործված և արատավորող հանցանքների համար դատապարտվածներին՝ որենքով կամ դատավճռով սահմանված ժամանակէրնթացքում։

բ. Դատական կարգով ծնողական իրավունքներէց զրկվածներին։

գ. Այն անձերին, վորոնց շահերը ներհակ են վորդեգրվող անչափահասների շահերին, ինչպես նաև այն

անձանց, վորոնք թշնամական հարաբերության են վորդեգրվողի հետ:

Քանի վոր վորդեգրողը վորդեգրվողի նկատմամբ ունի մի շարք սլարտականություններ, ինչպես խնամատարական, նույնպես և դաստիարակչական տեսակետից, հետևվաբար ինքնին հասկանալի պիտի լինի այն համագամանքը, վոր վորդեգրողն ինքը անսլարտական չափահաս պետք և լինի, ուրիշ խոսքով՝ վորդեգրումը կարող է կատարվել միայն չափահասի կողմից անչափահասի նկատմամբ: Վերոհիշյալից սլարդ հասկանալի յե, վոր խնամակալության և հոգաբարձության որդանները, վորոնց թույլտվությամբ տեղի յե ունենում վորդեգրումը, պետք է ամենից առաջ հետաքրքրվեն այն հիմնական խնդրով, թե վորդեգրելու ցանկություն ունեցող անձը վորդեգրության իրավունք ունի թե վոչ, ուրիշ խոսքով՝ լրացնում է արդյոք այն սլարտանները, վորոնք հատկապես հիշատակված են «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության որենսգրքի» 58 և 77 հոդվածների մեջ:

Յեթե վորդեգրվողը ծնողներ ունի, նաև այն դեպքում, յերբ վորդեգրվողը գտնվում է խնամակալության և հոգաբարձության ներքո, վորդեգրելու համար անհրաժեշտ է ծնողական իրավունքներից չզրկված ծնողների, կամ խնամակալների ու հոգաբարձուների համաձայնությունը: Ուրիշ խոսքով՝ չի կարելի վորդեգրել մի յերեխայի, առանց նրա ընական (ծնողներ) կամ նշանակովի խնամակալների համաձայնության: Ծնողների համաձայնությունն անհրաժեշտ չե ստանալ միայն այն դեպքում, յերբ ծնողները դատարանի վճռով զրկված են ծնողական իրավունքներից, այն դեպքում, յերբ ծնողների միջև համաձայնություն չկա, հնարավոր չե վորդեգրել նրանց զավակին:

Յեթե վորդեգրումը կատարվել է վորդեգրվողի ծնող-

ների բացակայութեամբ կամ առանց նրանց համաձայնութեանն ստանալու, կարող եւ բեկանվել ծնողների խնդրանք խնամակալութեան և հոգաբարձութեան մարմինների կողմից: Վերջինները բնականաբար պետք եւ ընդառաջեն ծնողների ցանկութեանը՝ յերեխան իրենց վերադարձնելու մասին, յետե համոզում գոյացնեն, թե զավակին նրանց վերադարձնելը համապատասխանում եւ յերեխայի շահերին:

Բացի ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների համաձայնութեանից, վորդեգրման համար վորոշ դեպքերում պահանջվում ենաև վորդեգրվողի համաձայնութեանը: Որենսդրքի 63 հոդվածի համաձայն «10 տարին լրացրած յերեխաների վորդեգրումն առանց նրանց համաձայնութեան չի թույլատրվում»:

Որենքը պահանջում եւ, վոր յետե վորդեգրողը ամուսնացած մի անձ եւ, անհրաժեշտ եւ, վոր նրա ամուսինը նույնպես համաձայն լինի վորդեգրութեան: Այս պայմանը խիստ կարևոր նշանակութեան ունի վորդեգրվածի հետագա խնամքի և դաստիարակութեան տեսակետից: Յետե վորդեգրվողը հավասարվում եւ հարազատ զավակներին, ապա անհրաժեշտ եւ, վոր նրա նկատմամբ ծնողի դիրքում գտնվող ամուսինները համաձայնութեան զան վորդեգրութեան հարցում, վորպէսզի վոխադարձ համաձայնութեամբ և միասնաբար ձեռք առնեն այն բոլոր միջոցները, վորոնք անհրաժեշտ են վորդեգրվածի անձնական, դաստիարակչական և ստացվածքային շահերը պաշտպանելու համար:

Այն դեպքում, յերբ վորդեգրողները խորհրդային քաղաքացիներ չեն, այլ ոտարհապատակներ, վոչ միայն անհրաժեշտ եւ խնամակալական օրգանների վորոշումը, այլ ակա Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հատուկ թույլութեանը:

Վորդեգրութեան մասին խնամակալութեան և հողաբարձութեան մարմինները տված վորոշումը ներկայացվում է շրջանի քաղաքացիական կացութեան ակտերի տոմարագրութեան մարմին (Չագսին), ընդհանուր կարգով տոմարագրելու համար:

Վորդեգրութեան տոմարագրութեանը, սակայն, չի գրվում յուրաքանչյուր քաղաքացու կամ հաստատութեան դատական կարգով վորդեգրութեանը բեկանելու վերաբերյալ հայց հարուցելու իրավունքից, սպաջուցելով, վոր տվյալ վորդեգրութեանը յերեխայի շահերի համար վոչ թե նախատավոր, այլ վնասակար, վտանգավոր եւ Գատարանը նման գիմում ընդունելիս անհապաղ միջոցներ պետք եւ ձեռք առնի պարզելու վորդեգրվողի և վորդեգրողի փոխհարաբերութեանը, վերդեգրվողի խնամատարական և դատարակչական պայմանները, ըստ այնմ այս կամ այն ճիշտ յեզրակացութեան հանգելու համար: Ժողատարանը նախքան վորեւ վորոշում հանելը պարտավոր եւ իմանալ նաև վորդեգրվածի կարծիքը, յեթե նա արդեն 10 տարին լրացրել ե, քանի վոր համաձայն Որենսդրքի 65 հոդվածի, տասը տարեկանից ավելի հասակ ունեցող անչափահասի վորդեգրութեան բեկանման համար անհրաժեշտ եւրա համաձայնութեանը: Այն դեպքում, յերբ դատարանը բավարար հիմք ե գտնում վորդեգրումը բեկանելու, վորոշում ե տվյալ յերեխան վերցնել վորդեգրողից և հանձնել խնամակալութեան մարմինները խնամքին:

Հաճախ պատահում ե, վոր անչափահաս յերեխաները փաստորեն վորդեգրված են լինում, բայց նրանց վորդեգրութեանը չի ձեակերպված համապատասխան խնամակալական որդանի կողմից և չի տոմարագրված Չագսի որդաններում: Յերեխաների շահերի նախանձախնդրութեանը պահանջում ե, վոր փաստական այդ վորդեգրումներն

իրավարանորեն ևս ձեակերպվեն, քանի վոր վորդեգրու-
թյան տոմարադրուամբ մեծապես հեշտացնում ե վորդեգր-
վածի անձնական և ստացվածքային իրավունքների պաշտ-
պանությունը, ճիշտ այնպես, ինչպես տոմարադրված ա-
մուսնությունը հարազատ զավակների շահերի դատական
պաշտպանությունը պուրացնում ե: Այս հանդամանքը
նկատի առնելով դատարանները, յերբ ընտանեկան և
ամուսնական հարաբերություններից առաջացած վեճերի
քննության ժամանակ իրազեկ են լինում փաստական վոր-
դեգրումների, անհատազ պետք ե հրավիրեն պատշաճ խնա-
մակալության որդանի ներկայացուցչին, վորպեսզի ընդ-
հանուր կարգով ձեակերպվի և սպա տոմարադրվի նման
վորդեգրությունը: Պետական որդանների, հասարակական
կազմակերպությունների, այլև յերեխաների շահերի նա-
խանձախնդրությունն ունեցող ամեն մի քաղաքացու պար-
տականությունն ե փաստական վորդեգրման դեպքերի մա-
սին ժամանակին իրազեկ դարձնել խնամակալության և
հոգաբարձության մարմիններին, նրանց միջոցով վորդեգր-
վողների և վորդեգրողների իրավական հարաբերություն-
ները կարգավորելու համար:

3. ՎՈՐԳԵԳՐՎԱԾԻ ՅԵՎ ՎՈՐԳԵԳՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ
ՅԵՎ ՍՏԱՅՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաձայն «Ամուսնության, ընտանիքի և խնամա-
կալության որենսդրքի» 64 հոդվածի, վորդեգրվածները
և նրանց սերունդը վորդեգրողների նկատմամբ և վորդե-
գրողները՝ վորդեգրվածների և նրանց սերնդի նկատմամբ
իրենց անձնական ստացվածքային իրավունքների և պար-
տականությունների ասպարեղում հավասարեցվում են ծա-
գումով ազգականներին:

Վորդեգրման ժամանակ վորդեգրվողը կարող ե
ստանալ վորդեգրողի ազգանունը, այլև նրա հայրանունը:

յեթե վորդեգրողը դրան համաձայն եւ Մրանից հետևում
ե, վոր վորդեգրությունն ինքն անհրաժեշտ չի դարձնում
վորդեգրվողի ազգանունի փոփոխությունը: Խնամա-
կալության և հոգարարձության որդանները վորդեգրման
հարցը լուծելիս պետք ե հատկապես զբաղվեն նաև ազգա-
նունի խնդրով, քանի վոր վորդեգրման տոմարագրությունը
Ջազսի որդաններում՝ պետք ե հիմնված լինի վորոշ ազգա-
նունի վրա: Չպետք ե մոռանալ այն հանդամանքը, վոր
Ջազսում տոմարագրվելուց հետո վորդեգրվածն այլևս չի
կարող իր ազգանունը փոխել, մինչև վոր չափահաս դառնա:
Ազգանունի հարցի մասին վորոշում կայացնելիս խնամա-
կալության մարմինը վոչ միայն նկատի պետք ե ունենա
վորդեգրողի ցանկությունը, այլ նաև վորդեգրվողի իրեն
և նրա ծնողների ցանկությունը: Բնականաբար յերեխայի
ցանկության մասին խոսք կարող ե լինել միայն այն
դեպքում, յերբ նա ի վիճակի յե գիտակցաբար մոտենալ
այդ խնդրին: Համենայն դեպս տաս տարին լրացրած վորդե-
գրվողի ցանկությունն անհրաժեշտ ե իմանալ:

Քանի վոր վորդեգրվածի և վորդեգրողի փոխհարաբե-
րություններն որենքով հավասարեցրած են ծնողի և զավա-
կի համար սահմանված իրավահարաբերություններին, հե-
տևաբար թե խնամատարության և թե դաստիարակչական
ու ստացվածքային (ապրուստի, ժառանգության, ծխի ընդ-
հանուր գույքի և այլն) հարաբերությունների տեսակետից,
կողմերն ունեն այն բոլոր իրավունքներն ու սլարտավո-
րությունները, վորոնք գոյություն ունեն ծնողների և զավակ-
ների միջև և վորոնց մասին մանրամասն կանգ ենք առել
Ք. գլխում: Կրկնությունից խուսափելու համար այստեղ
չենք անդրադառնում այդ խնդիրներին, բայց անհրաժեշտ
ենք համարում յերկու կարևոր խնդիրների վրա ծանրա-
նալ. ա) վորդեգրվածի ծնողները չեն ազատվում իրենց

ծնողական պարտականություններից, հատկապես իրենց սնչափահաս զավակներին ապրուստի միջոցով ապահովելու խնդրում, այն դեպքում մանավանդ, յերբ վորդեգրողն իր նյութական սուղ միջոցների պատճառով հնարավորություն չունի հայթայթելու իր վորդեգրած յերեխայի համար անհրաժեշտ ծախսը: Նման դեպքում ծնողն ողնության պետք և նաանի, քանի վոր վորդեգրումը նպատակ ունի ապահովելու յերեխաների կենսական շահերի պաշտպանությունը և հետևաբար չպետք և առիթ դառնա նրանց դրության վատթարացմանը:

Յերկրորդ կարևոր հարցն այն և, վոր ինչպես ծնողական իրավունքներից զրկվածները չեն ազատվում իրենց ծնողական պարտականություններից, նույնպես և այն դեպքում, յերբ դատարանները յերեխաների շահերի պաշտպանության տեսակետից անհրաժեշտ են համարում վորդեգրողներին ձևաքից վերցնել և խնամակալական որդաններին հանձնել այս կամ այն վորդեգրվածին, վորդեգրողները դրանով չեն ազատվում վորդեգրվածի հանդեպ ունեցած պարտավորությունից, հատկապես նրան ապրուստի միջոց հայթայթելու պարտավորությունից:

Գ Լ Ո Ի Խ Ե Ն .

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ

1. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿՋՐՈՒՆԲՆԵՐԸ

Ինչպես հայտնի յե, կապիտալիստական հասարակակարգը հիմնված և մասնավոր սեփականության վրա, իսկ մասնավոր սեփականության սկզբնական բջիջը համարվում և ընտանիքը: Բուրժուազիան ցանկանում և, վոր մասնավոր սեփականությունը հավերժական լինի, հետևաբար բուրժու-

աղիայի համար անհրաժեշտ է, վոր մասնավոր սեփականու-
նությունը սերնդից սերունդ փոխանցվի և մնա ամբողջ-
ված վորոշ շրջանակում, չանցնի պետութայն: Այս մաս-
նավոր սեփականութայն հիմնական սկզբունքից յեղնելով
է, վոր բուրժուական որենսդրությունը կարգավորում է
թե ժառանգական իրավահարաբերությունները և թե վոր-
դեզրութայն և ինամակալութայն ու հոգաբարձութայն
վերաբերյալ խնդիրները:

Առհասարակ բոլոր բուրժուական յերկրներում ժա-
ռանդներին շրջանակը խիստ լայն է (ընդգրկում է նույնիսկ
12—14 պորտ). զրա նպատակն է այդ միջոցով պահպանել
մասնավոր սեփականութայն սկզբունքը: Բուրժուազիան չի
ցանկանում, վոր սեփականությունը անհատից, ընտանիքից
անցնի պետութայն, և քանի վոր ընտանիքը բուրժուական
հասարակակարգում համարվում է կուտակված ստացվածքի—
կապիտալի հավաքողն ու պահպանողը, ապա և բուրժուական
որենսդրությունը ժառանգական իրավունքի և ինամա-
կալութայն ինստիտուտի միջոցով աշխատում է պահպա-
նել մասնավոր սեփականութայն հիմնական բջիջը հան-
դիսացող ընտանիքը, նրա սեփականությունը: Բուրժուական
իրավակարգում նույն նպատակն է հետապնդում նաև
վորդեզրությունը: Վորդեզրութայն հիմնական նպատակն է
սեփականութայն հավերժացման միջոց հանդիսացող ժառան-
գութայն կապի խղման առաջն առնել վորդեզրի միջոցով,
վերջինիս միջոցով շարունակել ընտանիքի գոյությունը և
այդպիսով պահպանել մասնավոր սեփականությունը, կանխել
մասնավոր սեփականութայն՝ պետութայն անցնելու հնարա-
վորությունը:

Բուրժուական յերկրներում նույն հիմնական նպա-
տակին կոչված է ծառայելու նաև ինամակալութայն ինս-
տիտուտը: Խնամակալությունն ու հոգաբարձությունը բուր-

ժուական իրավակարգում նպատակ ունեն փոխարինել ծնողներին, ընտանիքի շրջանակում կուտակված և մասնավոր սեփականութուն կազմող անստեղծյան ղեկավարներին: Այս տեսակետից խնամակալութունը գործնական նշանակութուն ունի հասկապես ունեոր դասակարգերի համար: Ընչազուրկ պրոլետարիատը բուրժուական հասարակակարգում գործնական վոչինչ չի կարող սպասել խնամակալութունից և հոգարարձութունից, մանավանդ յերբ դրանք կրում են անհատական, վոչ պետական բնույթ:

Խնամակալութունը մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակակարգում կոչված և փոխարինելու ծնողներին վոչ այնքան նրանց թողած անչափահաս և անաշխատունակ զավակների անձնական և գաստիարակչական շահերը պաշտպանելու համար, վորքան ծնողները թողած անստեղծյան արժեքները, հարստութունը պահպանելու, ժառանգների ստածվածքային շահերն ապահովելու համար: Ուրիշ խոսքով՝ խնամակալության հիմնական ուղղությունն ուղղված է այն բանին, վոր անհատական սեփականութունը մնալով անչափահաս, անաշխատունակ կամ շուայլող անձնավորությունների ձեռքում, չփչանա և այդպիսով սրանց հետագա ժառանգները չզրկվեն հարստութունից, չզրկվեն և այդպիսով պահպանեն սեփականության մասնավոր կարգը:

Այս տեսակետից հեշտ է ըմբռնել նաև այն հանգամանքը, թե ինչու բուրժուական յերկրներում խնամակալությունն ունի ինդիվիդուալիստական բնութագիծ: Խնամակալութունը պաշտպանում է խնամակալների և նրանց հավանական ժառանգների անհատական շահերը, և դրանով պիտի բացաարել այն հանգամանքը, վոր բուրժուական յերկրներում խնամակալության ֆունկցիան առհասարակ կենարոնացած է վոչ թե պետական հաստատությունների, այլ

մերձավոր ազգականների ձեռքում, վորոնց գործունեյութեան վրա հսկում են դատական որդանները, իսկ վորոշ պետութեաններում՝ զոյութեան ունեցող հատուկ խնամակալական դատարաններ: Միքանի պետութեաններում, ինչպես Ֆրանսիայում և Գերմանիայում, զոյութեան ունեն այսպես կոչված «ընտանեկան խորհուրդներ», վորոնք անչափահասների հոր մահվանից հետո նրանց մոր հետ միասին կոչված են տնորինելու մնացած գույքը և դաստիարակելու անչափահաս յերեխաներին: Սրանից էլ պարզվում է, վոր բուրժուական իրավակարգում կին ծնողն ընտանիքի ներսում գուրկ է լիակատար գործունակութեանից. նա կիսա-իրավագուրկ գրութեան մեջ է գանվում:

Հոկտեմբերյան հեղափոխութեանից հետո հարց ծագեց այն մասին, թե կարիք կա արդոք խորհրդային իրավակարգում ունենալ խնամակալութեան և հոգաբարձութեան որդաններ: 1918 թվին կար համոզում ղեկավար որդաններում, վոր մեզ կհաջողվի լավ և լայն կերպով կազմակերպել հասարակական հոգաբարձութեան, անհրաժեշտ նյութական միջոցներ կտրամադրի պետութեանը և այդպիսով հնարավորութեան կստեղծվի անչափահասների, հոգեկան հիվանդների շահերի պաշտպանութեանը, հատկապես փոքրահասակների դաստիարակութեանը ապահովել ընտանիքից դուրս և առանց անհատական խնամակալութեան կարիք զգալու: Այնուամենայնիւ, չնայած այն մեծ ձեռնարկումներին, վոր հեղափոխութեանից հետո տեղի ունեցան հասարակական հոգաբարձութեան գծով (ձրի պարտադիր աշխատանքային դպրոցներ, ձրի հասարակական ճաշարաններ և այլն) անհրաժեշտութեան զգացվեց ունենալ նաև հատուկ խնամակալութեան և հոգաբարձութեան որդաններ, վոչ թե անհատական, այլ պետական կազմակերպական ձևով: Ինչպես Խորհրդային Ռուսաստանում, նույնպես և

Խորհրդային Միութեան այլ հանրապետութիւններում, խնամակալութեան և հողաբարձութեան ֆունկցիաներն սկզբից ևեթ հանձնվեցին չորս կոմիսարիատներին— Լուսավորութեան, Ներքին գործերի, Առողջապահութեան և մասամբ ևս Սոցիալական ապահովութեան ժողովրդական կոմիսարիատներին: Մեզ մոտ, Խորհրդային Հայաստանում, 1921 թվի նոյեմբերի 16-ին հրապարակված ժողկոմխորհի հատուկ գեկրետի հիման վրա (տես Դեկրետները և վորուշումների ժողովածու № 13 1921 թ. հոգ. 86 «Խնամակալութեան և հողաբարձութեան մասին»), խնամակալութեան և հողաբարձութեան որդանի պարտականութունը զրկեց ժողգատավորների վրա: Ներկայիս բոլոր Խորհրդային հանրապետութիւններում գործող որենսդրութեան համաձայն, ամեն տեսակ խնամակալութեան և հողաբարձութեան մարմիններ են հանդիսանում գյուղական վայրերում՝ գյուղխորհուրդները, իսկ քաղաքներում՝ քաղխորհուրդները: Բնականաբար քաղխորհուրդները խնամակալութեան և հողաբարձութեան ֆունկցիաների անմիջական կատարումը զնում են իրենց համապատասխան բաժինների վրա, մասնավորապես անչափահասների նկատմամբ՝ լուսբաժինների, հոգեկան հիվանդների և տկարամիտների նկատմամբ՝ առբաժինների վրա, իսկ խնամակալների այլ կատեգորիաների նկատմամբ՝ սոցապբաժինների կամ նրանց փոխարինող այլ մարմինների վրա: Խնամակալութեան և հողաբարձութեան գործերի վերաբերմամբ գյուղխորհուրդների գործունեյութեան ընդհանուր հսկողութեան պարտականութիւնը վերապահված է շրջանային գործադիր կոմիտեներին:

Խորհրդային յերկրներում խնամակալութիւնը և հողաբարձութիւնը սահմանվում են անգործունակ անձի, նաև վորոշ դեպքերում նրա ստացվածքի վրա, նպատակ ունենալով պաշտպանելու անգործունակի որինական շահերը:

Մնամակալությունը նշանակվում է 14 տարին չլրացած անչափահասների և սահմանված կարգով հոգեկան հիվանդ կամ տկարամիտ ճանաչվածների, այլև շապտոկների նկատմամբ: Բացի սրանից խնամակալությունը նշանակվում է անհայտ բացակայողի կամ մահացած զույգի վրա, որենքով սահմանված դեպքերում:

Հոգաբարձությունը նշանակվում է 14 տարեկանից մինչև 18 տարեկան անչափահասների, այլև այն չափահասների վրա, վորոնք շնորհիվ իրենց ֆիզիկական վիճակի անկարող են ինքնուրույն կերպով պաշտպանելու իրենց իրավունքները:

Անհրաժեշտ է հիշատակել, վոր ծնողները և վորդեզրոդները համարվում են ընտանի խնամակալներ և հոգաբարձուներ, յեթև միայն նրանք չեն զրկված ծնողական իրավունքներից:

Նկատի առնելով այն հանգամանքը, վոր խնամակալության և հոգաբարձության որդանները (գյուղխորհուրդներն ու քաղաքային խորհուրդները) հնարավորություն չեն ունենա անմիջականորեն զբաղվելու խնամակալների ատորյա հոգսերով, իրավունք է վերապահված այդ որդաններին խնամակալությունն ու հոգաբարձությունն անմիջականորեն իրականացնելու նպատակով նշանակել խնամակալներ կամ հոգաբարձուներ: Մնամակալության և հոգաբարձության մարմինները խնամակալ կամ հոգաբարձու նշանակելիս նախապատվություն պետք է տան խնամարկյալի մոտիկ ազգականներին կամ այդ նպատակով հասարակական կազմակերպությունների (պրոֆմիություն, գյուղփոկ և այլն) կողմից մատնանշված անձերին:

Մնամակալ կամ հոգաբարձու նշանակելիս խնամակալության և հոգաբարձության մարմինները հատուկ ուշա-

զրության պետք է առնեն տվյալ անձնավորութեան անձնական հատկութիւնները, նման պարտականութիւններ կատարելու նրանց ընդունակութիւնը, այն հարաբերութիւնները, վոր գոյութիւն ունեն տվյալ անձի և խնամակալութեան կամ հոգաբարձութեան յենթակա անձի միջև Անտես չպիտի առնել նաև խնամարկյալի ցանկութիւնը, յեթե միայն նա ի վիճակի յե դիտակցորեն իր կարծիքն ունենալու այդ առթիւ:

«Անուանութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսդրքի» 77 հոդվածով հետևյալ կատեգորիաների անձնավորութիւնները զրկված են խնամակալ և հոգաբարձու լինելու իրավունքից.

ա. ՀՍԽՀ Սահմանադրութեան 85 հոդվածի դ, ե, զ. և ը-կետերում հիշատակված անձերը, այն է՝ բոլոր դավանութիւնների և ազանդների կուսակրոններն ու կրոնական պաշտամունքների հոգևոր սպասավորները, վորոնց համար այդ զբաղմունքն արհեստ է, նախկին վոստիկանութեան, ժանդարմական վարչութեան և պահնորդական բաժանմունքների պաշտոնյաներն ու գործակալները, Խուսաստանի նախկին թագավորական տան անդամները, այլև վոստիկանութեան, ժանդարմերիայի և պատժիչ մարմինների գործունեյութիւնը զեկավարող անձինք և խմբապետները սահմանված կարգով հոգևկան հիվանդ և խելագար ճանաչվածները և շահախնդրութեան նպատակով գործված և արատավորող հանցանքների համար դատապարտվածները, որենքով կամ դատավճռով սահմանված ժամանակի ընթացքում:

բ. Գատական կարգով ծնողական իրավունքներից զրկվածները:

գ. Այն անձերը, վորոնց շահերը ներհակ են խնամակալութեան և հոգաբարձութեան յենթակա անձանց շահե-

րին, ինչպես նաև այն անձերը, վորոնք նրանց հետ թշնամական հարաբերության մեջ են:

դ. Անչափահասները:

Խնամակալ կամ հոգաբարձու լինելու պարտականությունը համարվում է քաղաքացիական պարտականություն, վորից թույլ չի տրվում առանց հարգելի պատճառի հրաժարվել: Համաձայն գործող որենադրության խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելուց հրաժարվելու իրավունք ունեն՝

ա. նրանք, վորոնց 60 տարին լրացել է, այլ խոսքով՝ նրանք, ովքեր իրենք են անաշխատունակ և ոգնության կարոտ:

բ. նրանք, ովքեր հիվանդության, ֆիզիկական պակասության, նյութական դրության կամ զբաղմունքի կամ պաշտոնի առանձնահատկության հետևանքով ի վիճակի չեն կատարելու այդ պարտականությունները:

գ. այն անձերը, վորոնք իրենց ընտանիքում յերկու կամ ավելի զավակ են դաստիարակում:

դ. ծծկեր կամ մինչև 8 տարեկան հասակի զավակ ունեցող մայրերը և

ե. արդեն իսկ ուրիշի վրա խնամակալ կամ հոգաբարձու կարգված անձերը:

Հոգեկան հիվանդի վրա խնամակալ նշանակելիս խնամակալության և հոգաբարձության մարմինները պարտավոր են անմիջապես հայտնել Առողջապահության ժողովրդական կոմիտարիատի համապատասխան օրգաններին, վորպեսզի նրանք խնամարկյալի վրա մշտական բժշկական հսկողություն ապահովեն:

ՀԱՄ Հանրապետության այն քաղաքացիներին նկատմամբ, վորոնք գտնվում են Միության սահմաններից դուրս և կամ վորոնց գույքը արտասահմանումն է, խնամակալ-

յուլիսյան և հոգաբարձության գործերը տնորինում են խՍՀ
Միության արտասահմանի ներկայացուցչությունները: Ան-
հրաժեշտ միջնորդություններ պետք է հարուցվեն խՍՀ
Միության Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի-
ատի միջոցով, տվյալ հանրապետության մեջ հիշյալ կո-
միսարիատի ունեցած ներկայացուցչի խողովակով:

2. ԽՍՀԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՅԵՎ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խնամակալների ու հոգաբարձուների հիմնական
պարտականությունն է ապահովել իրենց խնամակալուլթյան
կամ հոգաբարձության տակ գտնվածների անձնական և
ստացվածքային շահերի պաշտպանությունը: Անչտփահասի
խնամակալը պարտավոր է հոգա նրա դաստիարակության,
կրթության և նրան հանրային ոգտավետ գործունեյության
պատրաստելու մասին: Հոգեկան հիվանդի կամ տկարամիտ
անձի խնամակալը պարտավոր է միջոցներ ձեռք առնել
նրան բժշկելու և նրան իր առողջական վիճակին համա-
պատասխան պայմաններում պահելու համար: Հոգաբար-
ձուները պարտավոր են ոժանդակել իրենց հոգաբարձու-
լթյան տակ գտնվողներին՝ իրենց իրավունքները կենսա-
գործելիս և պարտականությունները կատարելիս, ինչպես
նաև պարտավոր են պաշտպանել նրանց ուրիշների չար
գիտավորություններից:

Խնամակալին իրավունք է վերապահված իր խնա-
մարկյալին հետ պահանջելու ամեն մի անձնավորու-
լթյունից, վորը նրան պահում է իր մոտ առանց վորևե
որինական հիմքի:

Խնամակալներն ու հոգաբարձուներն իրենց խնամա-
կալության կամ հոգաբարձության տակ գտնվողների շա-
հերի պաշտպանության համար հանդես են գալիս պետա-

կան և հասարակական բոլոր հաստատութիւններում, նրանց թվում սակ դատական որդաններում, ներկայացնելով գյուղխորհրդից կամ քաղխորհրդից ստացած իրենց վկայականները:

Անչափահաս խնամարկյալին ուրիշի մոտ պատրարակութեան և կրթութեան տալու կամ հոգեկան հիվանդին այլ անձանց խնամքին հանձնելու համար խնամակալը նախորոք պետք է ստանա պատշաճ գյուղխորհրդի կամ քաղխորհրդի թույլտվութիւնը:

Ընդհանուր առմամբ խնամակալն ու հոգաբարձուն համարվում են իրենց խնամակալութեան կամ հոգաբարձութեան տակ գտնվողների որինական ներկայացուցիչները և հետևաբար նրանք ընդհանուր առմամբ կարող են կատարել այն բոլոր գործարքները, վորը կարող էր կատարել խնամարկյալը, յետևեալ լիովին գործունակ լինելը: Այս ընդհանուր կարգից յեղած բացառութիւնները, վորոնք նախատեսված են «Սնտանութեան, ընտանիքի և խնամակալութեան որենսդրքի» 86 հոդվածում, հետևյալներն են.

Մնամակալները և հոգաբարձուներն իրավունք չունենան
ա) խնամարկյալի դուլքն ոտարելու, այսինքն ուրիշին ծախելու կամ նվիրելու բ) զբավ դնելու, գ) մուրհակներ և այլ պարտաթղթեր տալու, դ) որենքով կամ կտակով ստացված ժառանգութիւնից հրաժարվելու, յե) դուլքը մնկ տարուց ավելի ժամանակով վարձու տալու, զ) խնամարկյալին պատկանող ձեռնարկութիւնը դադարեցնելու և ե) ընկերութեան պայմանագիր կնքելու խնամարկյալի անունից:

Նկատի առնելով այն հանգամանքը, վոր վերոհիշյալ բոլոր գործողութիւններն անմիջապես կապ ունեն խնամարկյալների ստացվածքային իրավունքների հետ, որենքը խնամարկյալների որինական շահերի պաշտպանութեան նախանձախնդրութեամբ պահանջում է, վոր խնամակալներն

ու հոգաբարձուները Որենսդրքի հիշյալ 86 հոդվածում հիշատակված գործողությունները կատարելուց առաջ ստանան պատշաճ խնամակալական մարմնի համաձայնությունը: Խնամակալության և հոգաբարձության որդանները հիմք ունենալով խնամարկյալի շահերը, կարող են թույլատրել այդ գործողությունները, բացառությամբ յերկու դեպքերի. ա) խնամարկյալին պատկանող գույքի նվիրումը և բ) նրա անունից յերաշխավորություն ստանձնելը:

Թույլատրելով գույքի վաճառումն կամ գրավ դնելը, խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող ե խնամակալին տալ ցուցումներ այն մասին, թե ստացված գումարներն ինչ կարիքների վրա պետք ե ծախսել:

Ավելորդ չե հիշատակել, վոր խնամակալներն ու հոգաբարձուները կարող են, առանց նախապես պատշաճ դյուղխորհրդի կամ քաղխորհրդի թույլտվությունն ստանալու, ծախել շուտ փչացող կամ իր բնույթով վաճառման յինթակն կամ գործածության համար արդեն անպետք դարձած գույքը, յեթե միայն նրա արժեքը հիսուն ռուբլուց բարձր չի: Խնամակալին և հոգաբարձուին արգելվում ե վորևե գործարք կատարել իրեն և իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվողի միջև. նա չի կարող խնամարկյալի ներկայացուցիչը հանդիսանալ այնպիսի գործարքներ կատարելիս կամ այնպիսի դատական գործերով, վորոնցով շահապրգոված մյուս կողմն իր ամուսինն և կամ մերձավոր ազգականը: Եթե խնամարկյալը վորոշ պարտքեր ունի անձնապես իր խնամակալին կամ հոգաբարձուին, այդ պարտքերը կարող են ստուգվել և վճարվել պատշաճ դյուղխորհրդի կամ քաղխորհրդի հատուկ թույլտվությամբ: Այս արգելքի նպատակն ե ապահովել խնամարկյալի ստացվածքային շահերը այն դեպքերում, յերբ նրա խնամակալը կամ հոգաբարձուն անմիջապես կամ անուղղակի

կերպով շահաւերգութիւնս եւ սոյնալ գործարքով կամ դատական
պրոցեսով:

Մնամարկայի ապրուստը հողալու համար խնամա-
կալութեան եւ հողաբարձութեան մարմնի թույլտվութեամբ
կատարվելիք ծախսերն առաջին հերթին պետք եւ կատարվին
խնամարկայի գույքի յեկամսւտներէց: Իսկ յետեւ նման
յեկամսւտներ չկան կամ թեւ կան, բայց անբավարար են,
միայն այդ դեպքում խնամակալութեան եւ հողաբարձութեան
մարմնի թույլտվութեամբ այդ ծախսերը կարող են կա-
տարվել խնամարկայի բուն գույքից, վստահման կամ գրավի
միջոցով:

Այն բոլոր դեպքերում, յերբ խնամարկայը անձնական
վորեն գույք չունի, պատշաճ դյուղխորհուրդը կամ քաղ-
խորհուրդը, վորպէս խնամակալական որդան, պետք եւ
միջնորդութիւն հարուցանի սոցիալական ապահովութեան
մարմիններէ առաջ՝ ապրուստի համապատասխան միջոց
ստանալու համար:

Վորպէս ընդհանուր սկզբունք, խնամակալական եւ
հողաբարձութեան պարտականութիւնները, իբրև հասարա-
կական պարտավորութիւն, պետք եւ կատարվեն առանց
վարձատրութեան, ձրիաբար: Բայց խնամակալութեան եւ
հողաբարձութեան մարմիններին թույլ եւ տրվում խնամա-
կալին կամ հողաբարձութեան վորող վարձատրութիւն տալ
այն դեպքերում, յերբ խնամարկայը նյութական հնարավո-
րութիւններէց զուրկ չե, իսկ նրա խնամակալը կամ հողա-
բարձուն իրեն հանձնարարված խնամակալական պարտա-
կանութիւններէ պատճառով անձնապէս վնասվում ե,
կտրվելով իր տնտեսութեան աշխատանքներէց: Նման դեպ-
քերում սահմանվող վարձատրութիւնը, սակայն, չի կարող
ավելի լինել, քան խնամարկայի գույքից ստացվող յեկամտի
տաս տոկոսը:

Խնամակալության և հոգաբարձության որդանները
չպետք է բավականանան միայն խնամակալներ և հոգաբար-
ձուներ նշանակելով. նրանք պարտավոր են հսկելու վեր-
ջինների գործունեյության վրա, համապատասխան ցու-
ցումներ տալու խնամարկյալների վոչ միայն ստացվածքա-
յին, այլ նաև անձնական և դաստիարակչական շահերի
նկատմամբ:

Խնամակալներն ու հոգաբարձուներն իրենց հերթին
պարտավոր են իրենց գործունեյության մասին հաշվետու
լինել պատշաճ խնամակալական և հոգաբարձական մարմնի
առաջ: Ամեն սարի նրանք պետք է հաշվետվություն ներ-
կայացնեն իրենց գործունեյության մասին, հաշիվ տալով
վոչ միայն իրենց խնամարկյալի ստացվածքային շահերին
վերաբերող ձեռնարկումների և գործողությունների մասին,
այլ նաև սալով տեղեկություն իրենց կողմից ձեռք առնված
այն միջոցների նկատմամբ, վորոնք շոշափում են իրենց
խնամարկյալների առողջության, դաստիարակության, կրթ-
թության և նրանց հանրագումար գործունեյության նախա-
պատրաստելու վերաբերող կարևոր ինդիքները:

Խնամակալների և հոգաբարձուների գործողություն-
ների դեմ դանդառ տալու իրավունքը վերապահված է
վոչ միայն խնամակալության և հոգաբարձության տակ
գտնվողներին, այլ նաև պետական և հասարակական կազ-
մակերպություններին, ինչպես և ամեն մի նախանձախնդիր
քաղաքացու: Խնամարկյալների շահերին հակասող բոլոր
գործողությունների և ձեռնարկումների մասին գանգառ
պետք է տալ համապատասխան գյուղխորհրդին կամ քաղ-
խորհրդին. կարելի չէ այդ մասին հաղորդել նաև դատա-
կան և դատախազական որդաններին: Խնամակալության
և հոգաբարձության մարմինները թե խնամակալներից
ու հոգաբարձուներից ստացած հաշվետվությունների և

թե պետական և հասարակական որդանների, այլև առան-
ձին քաղաքացիներից ստացած հաղորդագրությունների
հիման վրա յեթե գան այն յեղբակացության, վոր տվյալ
խնամակալը կամ հոգաբարձուն անփութ ե դեպի իր
ստանձնած պարտականությունները կամ ի չարն ե գործ
դնում իրեն վստահված պարտականությունը, կարող են և
պարտավոր են անմիջապես հեռացնել այդպիսի խնամա-
կալին կամ հոգաբարձուին, անշուշտ պահանջելով նրանից
մանրամասն նյութական հաշվետվություն: Խնամակալները
և հոգաբարձուները դատական կարգով պատասխանատու
յեն իրենց գործողություններով և գործունեյությամբ
իրենց խնամարկյալներին հասցրած նութական վնասի հա-
մար. նրանք կարող են յեթարկվել նաև քրեական պատաս-
խանատվության, յեթե պարզվի, վոր նրանք չարամտորեն
վատնել կամ յուրացրել են իրենց խնամարկյալների գույքը:
Վորպեսզի խնամակալության և հոգաբարձության
որդանները կարենան հաստատական կոնտրոլի յենթարկել
խնամակալների և հոգաբարձուների գործունեյությունը և
այդպիսով կանխել նրանց չարարկությունները, նրանք
պետք ե իրենց այդ աշխատանքներին մասնակից դարձնեա
հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ-
ներին, մասնավորապես գյուղական ակտիվին: Սրանք
կարող են շատ շոշափելի աշակցության ցույց տալ գյուղ-
խորհուրդներին և քաղխորհուրդներին, իրենց վրա վերցը-
նելով հոգաբարձության և խնամակալության կարիք զգա-
ցողների ընտանեկան-կենցաղային պայմանների ուսումնա-
սիրությունը, ստացած հանձնարարության վրա ցուցակա-
զրել խնամակալվողի ունեցվածքը, մասնանշել վստահու-
թյան արժանի խնամակալներին ու հոգաբարձուներին,
հետևել այս վերջինների գործունեյությանը, մի խոսքով
մասսայական վերահսկողության տակ առնել խնամակալու-

թյան և հոգաբարձության տակ գանվողների անձնական, գաստիարակչական, առողջական և ստացվածքային շահերի պաշտպանությունը:

Խնամակալության և հոգաբարձության գործերի մասին գյուղխորհուրդների կայացրած վորոշումների և կարգադրությունների դեմ կարելի չէ գանդատվել շրջանային գործադիր կոմիտեների նախագահության, վորի վորոշումները վերջնական են: Ինչ վերաբերում է քաղխորհուրդների վորոշումներին, դրանք համարվում են վերջնական և գանդատարկման յենթակա չեն:

3. ԽՆԱՄԱԿԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Խնամակալության և հոգաբարձության գործերը ջրննելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը հրավիրում է դիմում ավտոգներին, գանդատավորներին, խնամակալներին և հոգաբարձուներին, սվյալ գործով շահագրգռված անձերին, վկաներին, փորձագետներին, այլ և անհրաժեշտության դեպքում խնամակալության կամ հոգաբարձության ներքո գանվող կամ խնամակալության ու հոգաբարձության յենթակա անձերին: Իմոտների, գանդատավորների և այլ անձերի ջներկայանալը գործի քննության արդելը չի կարող լինել, յեթե միայն խնամակալության և հոգաբարձության որդանը նրանց ներկայությունը անհրաժեշտ չի համարում:

Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու կամ վերացնելու, խնամակալներ կամ հոգաբարձուներ նշանակելու, նրանց արձակելու, խնամարկյալների գույքնոտարելու կամ գրավ դնելու, իրավունքներից հրաժարվելու սողոքները, հաշվետվությունները և յերեխաների գաստիարակության հեա կապված գանագան խնդիրներ քննելու

մասին խնամակալության և հոգաբարձության մարմինները կայացնում են վորոշումներ, վորոնք հայտարարվում են շահագրգռված անձերին:

Անչափահասների նկատմամբ խնամակալություն սահմանելու անհրաժեշտության և խնամակալ նշանակելու մասին խնամակալության և հոգաբարձության պատշաճ որդանին (գյուլխորհրդին կամ քաղխորհրդին) յերեք որվա ընթացքում պարտավոր են տեղեկություն տալ հետևյալները. ա) անային վարչությունները, տնատերերը և վարձակալները, յեթե նրանց աներում կան խնամակալության յենթակա անչափահասներ, բ) քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության (Ձագսի) որդանները, յեթե մահվան փաստը տոմարագրելու պահին նրանց հայտնի դառնա անխնամ մնացած անչափահաս վորբերի, այլև տոմարագրված ընկեցիկներին և վորբերի մասին, գ) դատական կատարածունները, յեթե գույքը ցուցակագրելու ժամանակ նրանք խնամակալության յենթակա անչափահասներ հայտարերեն, դ) դատական մարմինները և միլիցիան այն դեպքում, յերբ ազատագրկման են յենթարկում կամ կալանքի տակ են վերցնում իրենց խնամքի տակ անչափահասներ ունեցող անձանց և յեթե այդ անչափահասները դրա հետևանքով մնում են առանց պատշաճ հսկողության, ե. խնամակալության և հոգաբարձության յենթակա անձանց հետ ազգականությամբ կամ ընդհանուր տնտեսությամբ կապված քաղաքացիները:

Մնամարկայինների գույքի վաճառքը կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի վորոշումով հրապարակային աճուրդի միջոցով կամ անհրաժեշտության դեպքում՝ փորձագետների կողմից սահմանված ազատ գնով: Աճուրդը պետք է հաստատվի խնամակալության և հոգաբարձության տվյալ մարմնի կողմից:

Խնամարկյալներին պատկանող դրամական դուժարները, արժեթղթերը և այլ արժեքները, բացառութեամբ այն դուժարներէ, վորոնք անհրաժեշտ են նրանց ապրուստը հոգալու և նրանց պատկանող դուլքը կառավարելու համար, պահվում են սլետական հաստատութեաններում (իննայո-դական դրամարկղներում, պետական բանկի բաժանմունք-ներում և այլն) և չպետք է մնան խնամակալներէ կամ հոգաբարձուների ձեռքին:

Խնամակալներն ու հոգաբարձուները յուրաքանչյուր տարի վոչ ուշ քան մինչև փետրվարի մեկը պարտավոր են ընթացիկ տարվա մասին գրավոր հաշվետուութեան ներկայացնելու պատշաճ խնամակալական կամ հոգաբարձական որդանին:

Խնամակալը կամ հոգաբարձուն պարտավոր են տալ նաև ընդհանուր հաշվետուութեան այն դեպքում, յերբ խնամակալութեանը կամ հոգաբարձութեանը դադարում ե:

Խնամակալութեան և հոգաբարձութեան որդաններն ստացված հաշվետուութեանները պետք է ըստ ելութեան քըն-նութեան սունեն և հաստատեն միայն այն դեպքում, յերբ բո-լոր հաշիվները ճիշտ են: Հակառակ դեպքում նրանք պետք է խնամակալից կամ հոգաբարձուից պահանջեն բացա-տրութեան և արդարացուցիչ փաստաթղթեր. յեթե վերջնա-կան հաշիվով հաշիվներէ մեջ բաց, կեղծիք և նման չարար-կութեաններ վանեն, վործը պետք է հանձնեն զատական որդաններին՝ տվյալ խնամակալին կամ հոգաբարձուին քա-ղաքացիական, ի հարկին նաև քրեական պատասխանա-տուութեան յենթարկելու համար:

Խնամակալութեանն ու հոգաբարձութեանը դադարում են՝

ա. անչափահասների նկատմամբ, յերբ նրանք չափա-հաս են դառնում. բացառութեան են կազմում այն դեպ-

քերը, յերբ սահմանված կարգով բժշկական քննութեան յեն-
թարկելուց հետո անհրաժեշտ ե համարվում ավյալ անձի
վրա շարունակել խնամակալութիւնը՝ նրա հոգեկան հի-
վանդութեան կամ տկարամտութեան հետեանքով.

բ. հոգեկան հիվանդների նկատմամբ խնամակալու-
թիւնը դադարում ե այն դեպքում, յերբ սահմանված կարգով
բժշկական քննութիւնից պարզվի, վոր նրանք արդեն
առողջացած են.

գ. շռայլողների նկատմամբ՝ յերբ դատարանի կողմից
նրանց գործունակ ճանաչելու մասին հանած վորոշումն
որինական ուժի մեջ ե մտնում.

դ. գուշքի վրա դրված հողաբարձութիւնը կղաղարի
այն ժամանակ, յերբ անհայտ բացակայողը կներկայանա
կամ յերբ ժառանգութիւնը կընդունվի ժառանգների կամ
պետութեան կողմից:

ե. Խնամակալութիւնը դադարում ե նաև այն դեպ-
քում, յերբ խնամակալը մահանում ե:

4. ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՅԵՎ ՏԿԱՐԵՄԻՏՆԵՐԻՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՆՈՒԹԵՄՆ ՍԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԵՍԻՆ

Հոգեկան հիվանդութեան կամ տկարամտութեան հետե-
վանքով խնամակալութիւնն նշանակելու համար պահանջվող
բժշկական քննութիւնը կատարվում ե հատուկ բժշկական
հանձնաժողովի միջոցով, վորին նախապահելու յե շրջգործ-
կումի առբաժնի վարիչը կամ նրան փոխարինողը, վորը
պետք ե ունենա առնվազն յերկու բժիշկ անդամ, վորոնցից
մեկը մասնապետ հոգեբուժ: Հանձնաժողովն իր նխափ տե-
ղի ե ժամանակի մասին տեղեկացնում ե այն շահադրդու-
ված անձերին ե հաստատութիւններին, վորոնք միջնորդել
են ավյալ անձին բժշկական քննութեան յենթարկելու մա-
սին: Բժշկական հանձնաժողովին իրավունք ե վերապահված

քննութեան յենթակա անձին անհրաժեշտութեան դեպքում
տեղափոխելու մասնագիտական բուժական հիմնարկութեան
մեջ, բայց վոչ ավելի, քան յերկու ամիս ժամանակով, և կամ
նրան հսկողութեան տակ առնել տան մեջ:

Բժշկական քննութեան մասին կազմվում է մանրա-
մասն արձանագրութեան, վորի մեջ հիշատակված պետք է
լինի, թե տվյալ անձը հոգեկան հիվանդ է, տկարամիտ է և
արդյոք կարիք կա՞ նրա վրա խնամակալութեան նշանա-
կելու:

Հոգեկան հիվանդին ատողջացած համարելու և հետե-
վաբար նրա վրայից խնամակալութեանը վերացնելու
միջնորդութեանը կարող է հարուցվել ինչպես շահագրգռված
անձերի և հաստատութեանների կողմից, նույնպես և այն
բուժական հիմնարկութեան կողմից, վորտեղ տեղափոխված
է հիվանդը: Նման միջնորդութեան կարող է հարուցանել
նաև ինքը հիվանդը:

Հոգեկան հիվանդի քննութեան հետ կապված ծախսերը
դանձվում են քննութեան յենթարկված անձից, յեթե միայն
նա այդ ծախսերը վճարելու կարող է: Զբաղմունքի
դեպքում ծախսերը գնում են պետութեան հաշվին:

Վորևէ մեկին հոգեկան հիվանդ կամ տկարամիտ
ճանաչելու մասին բժշկական հանձնաժողովի տված վո-
րոշումը մեկ ամսվա ընթացքում շահագրգռված անձերի և
հաստատութեանների կողմից կարող է բողոքարկվել
Ատողջապահութեան ժողկոմիսարիատին կից գոյութեան
ունեցող հատուկ հանձնաժողովին, վորի վորոշումները
վերջնական են:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՏՈՄԱՐԱ-
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական կայույթյան ակտերի (ծննդյան, մահվան, ամուսնութեան, ապահարզանի և վորդուգրութեան) տոմարագրութեանը կատարվում է գյուղական վայրերում՝ գյուղխորհուրդներին, իսկ քաղաքներում՝ քաղխորհուրդներին միջոցով:

Քաղաքացիական կայույթյան վերաբերող հիշյալ ակտերի իր ժամանակին տոմարագրելն ունի կարևոր նշանակութիւն վոչ միայն տոմարագրվողի, այլև իշխանութեան համար, քանի վոր Զագսում կատարվող այդ տոմարագրութեաններէց բղխում են վորոշ իրավունքներ և սլարտավորութեաններ, վարոնք մանրամասն բացատրված են նախորդ գլուխներում:

1. ԾՆՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒՄԸ

Ծննդյան վերաբերյալ համապատասխան Զագսի մարմնին հայտարարութեան պետք է արվի յերկու շաբաթվա ընթացքում, հաշված ծննդյան օրից: Հայտարարութեանը կարող է լինել ինչպես գրավոր, նույնպես և բանավոր և պետք է արվի այն Զագսին, վորի շրջանում ծնունդը տեղի յե ունեցել, կամ այն Զագսին, վորի շրջանում ծնողները կամ նրանցից մեկն ու մեկը ապրում են: Այն բոլոր դեպքերում, յերբ ծնողները հիվանդութեան, մահվան կամ վորևե այլ հարգելի պատճառով դուրկ են ծնունդը տոմարագրել տալու հնարավորութեանից, ծննդյան մասին պետք է պատշաճ Զագսի մարմնին հայտնեն ազգականները, մերձավոր հարևանները, տնային վարչութեանը, այլև այն

հաստատութիւնը, վորտեղ տեղի յի ունեցել ծննդաբերութիւնը:

Ծննդյան մասին հայտարարութիւն պետք և տրվի նաև այն դեպքում, յերբ յերեխան մեռած և ծնվում: Յեթե ծննդյան մասին հայտարարութիւն տվողը յերեխայի մայրն և, նա կամ պետք և մտանանշի յերեխայի հոր անունն ու ազգանունը կամ հայտարարի, թե չի կարող կամ չի կամենում այդ տեղեկութիւնները հաղորդել:

Տամարադրութիւնն անհրաժեշտ և նաև յերեխա գտնելու դեպքում: Այդ դեպքում Զազաի մարմիններին տրվող հայտարարութիւնը պետք և կցել միլիցիայի կամ գյուղխորհրդի կազմած արձանագրութիւնը յերեխային գտնելու ժամանակի, տեղի և կարևոր այլ հանգամանքներէ հիշատակութիւնով:

Յեթե ծննդյան տոմարագրութիւն մասին հայտարարութիւն տրվում և որենքով սահմանված յերկշաբաթյա ժամանակաշրջանից հետո, Զազաի որդանները դարձյալ պարտավոր են ընդունել հայտարարութիւնը և կատարել պաշաճ տոմարագրութիւնը: Միայն թե Զազաի որդաններին իրավունք և վերապահված վոչ հարգելի պատճառներով ծննդյան տոմարագրութիւն մասին հայտարարութիւնը ուշացնողներին վարչական կարգով յենթարկելու տուգանքի: Գյուղխորհուրդները կարող են տուգանք սահմանել մինչև մեկ ուրբլի, իսկ չվճարողներին յենթարկել հարկադիր աշխատանքների մինչև յերկու որ ժամանակով: Քաղիորհուրդները կարող են դանցաւուններին յենթարկել մինչև 3 ուրբլի տուգանքի, իսկ այդ տուգանքը չվճարողներին յենթարկել հարկադիր աշխատանքների մինչև հինգ որ ժամանակով:

Ձագսուժ պետք է տոմարագրվեն թե մահվան դեպքերը և թե ժողդատարանի կողմից մեռած համարելու մասին տրված վորոշումները: Տեղի ունեցած մահվան մասին հայտարարություն պետք է տրվի մահվան դեպքից վաղ ուշ, քան յերեք օրվա ընթացքում, իսկ յեթե մահվան դեպքը տեղի յե ունեցել բռնության հետևանքով կամ յեթե դիակ է հայտնաբերվում, դեպքի հաջորդ օրն իսկ հայտարարությունը պետք է տրվի:

Մահվան դեպքի մասին հայտարարություն տալու պարտավորությունն ընկնում է առաջին հերթին մեռնողի հետ միասին ապրողների վրա. իսկ յեթե այդպիսիներ չկան, հայտարարություն պետք է տան տնային վարչությունը, հարևանները և կամ այն հաստատությունը (բուժհիմնարկ, կալանավայր և այլն), վստեղ մահը տեղի յե ունեցել: Գտնված դիակի մասին պետք է հայտարարություն տա հայտաբերող միջոցիան, կցելով այդ առթիվ կազմված արձանագրությունը:

Մահվան մասին տրվող հայտարարության մեջ պետք է հիշատակել այն բոլոր տեղեկությունները, վորոնք վերաբերում են մահացածին, հատկապես անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը, վերջին ընակավայրը, ընտանեկան դրությունը, մահվան տարեթիվը, ամսաթիվը և օրը, մահվան պատճառը, այլ և հայտարարություն տվող անձի անուն-ազգանունը, հայրանունը և ընակավայրը:

Ինչպես ծննդյան, նույնպես և մահվան մասին տրվող հայտարարությունները պետք է ընդունվեն և տոմարագրվեն նույնիսկ այն դեպքում, յերբ որեւքով սահմանված ժամանակամիջոցը բաց է թողնված: Վոչ հարգելի պատճառով հայտարարության ժամանակամիջոցը բաց թողնվելու

դեպքում այդ հայտարարութիւնը տալու պարտականութիւնն ունեցողները վարչական կարգով գլուղական վայրերում կարող են յենթարկվել տուգանքի մինչև մեկ ռուբլի, չվճարելու դեպքում փոխարինելով հարկադիր աշխատանքներով մինչև յերկու որ ժամանակով, իսկ քաղաքներում՝ մինչև յերեք ռուբլի տուգանքի, իսկ չվճարելու դեպքում՝ հարկադիր աշխատանքների մինչև 5 որ ժամանակով:

Իսկ յեթե դատարանի վորոշումով ե, վոր մեկը մահացած ե համարվում, դատարանն իր վորոշման պատճենը պետք ե հաղորդի մեռած հայտարարված անձի վերջին հայտնի ընակավայրի Զագսի մարմնին:

3. ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՊԱՀԱՐՋԱՆԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՐ

Իրենց ամուսնութիւնը տամարագրել ցանկացողներն այդ մասին հայտարարութիւն կարող են տալ իրենցից մեկնումեկի ընակութեան վայրի Զագսին: Իրենց ամուսնութիւնը տամարագրել ավոզները պարտավոր են Զագսին ներկայացնելու իրենց ինքնութիւնը հաստատող վկայականներ, նրանք պետք ե տան նաև ստորագրութիւն այն մասին, վոր իրենց ամուսնութեան որինական արգելքներ չկան, պետք ե ներկայացնեն նաև բժշկական վկայական այն մասին, վոր իրենք փոխադարձաբար իրագեկ են իրենց առողջական վիճակի մասին, իրենց հայտարարութեան մեջ հիշատակելով նաև, թե նրանցից յուրաքանչյուրը քանիյերորդ անգամ ե ամուսնանում, հաշված ինչպես տամարագրված, նույնպես և փաստական ամուսնութիւնները, և թե նրանցից յուրաքանչյուրը քանի դավուկ ունի: Հիշյալ տեղեկութիւնների մասին սուտ ցուցմունքներ ավոզները համաձայն Քր. որենսգրքի 220 հոդվածի յենթարկվում են քրեական պատասխանատվութեան:

այն ե՛ կամ կարանքի՛ մինչև յերեք ամիս ժամանակով
կամ տուգանքի՛ մինչև 300 ռուբլի:

Ամուսնութեանը տամարադրող պաշտոնյան ամուսնա-
ցողներին պետք է նախադգուշացնի սուտ ցուցմունքներ
տալու պատասխանատվութեան մասին, վորից հետո կա-
տարված տամարադրութեանը կարգացվում է, ստորա-
գրվում և վավերացվում:

Ամուսնացողները, յեթե ցանկանում են, կարող են ի-
րենց ամուսնութեանը տամարագրել տալ վկաների ներկա-
յութեամբ:

Ամուսնութեանը լուծելու հայտարարութեանը կարող
է տրվել ինչպես Ջազսին, նույնպես և դատարանին: Յեթե
ամուսնութեանը լուծվում է Ջազսի միջոցով, այդ մասին
գրախոս կամ բերանացի հայտարարութեան պետք է տրվի
քաղաքացիական կացութեան ակտերի տամարադրութեան
այն մարմնին, վորի շրջանում ապրում են ամուսինները
կամ նրանցից մեկն ու մեկը: Յեթե ամուսնալուծման մա-
սին ղեմում տվողը վորևէ փաստաթուղթ չունի իրենց ա-
մուսնութեան տամարագրված լինելու մասին, նա կարող է
տալ ստորագրութեան այդ մասին, հիշատակելով ամուս-
նութեան տամարադրութեան ժամանակը և տեղը, վերցնելով
իր վրա հաղորդած տեղեկութեանների ճշտութեան պա-
տասխանատվութեանը:

Յեթե ամուսնալուծման հայտարարութեանը տրվում
է ամուսիններից միայն մեկի կողմից, ապա այդ դեպքում
Ջազսը ամուսնալուծումը տամարագրելուց հետո իր կա-
տարած տամարագրութեան պատճենն ուղարկում է մյուս
ամուսնուն՝ հայտարարութեան տվողի կողմից մասնա-
նշված հասցեյով:

Յեթե ամուսնութեանը լուծվում է դատարանի միջո-

յով, դատարանն իր վորոշման պատճենը պարտավոր է հաղորդել շքանի Զազսին՝ տոմարադրելու համար:

Զազսի որդաններում բացի վերոհիշյալ ակտերից պետք է տոմարադրվեն նաև համապատասխան մարմինների վորոշումները՝ վորդեգրության, ազգանունը փոխելու, հայրությունը կամ մայրությունը ճանաչելու և կամ ծննդյան տոմարադրությունն ուղղելու կամ լրացնելու մասին, այդ վորոշումների կատարման որից յերկու շաբաթվա ընթացքում:

Զազսի սրդաններում կատարվող վերոհիշյալ տոմարադրությունների դեմ շահազրգույթ անձինք կարող են առարկել միայն դատական կարգով: Դատարանի կայացրած վորոշումները համարվում են վերջնական:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Տ

Նկատի առնելով այն հանդամանքը, վոր մեր աշխատավորական մասսաները, մանավանդ շրջաններում և գյուղերում, դեռ չեն ապահովված իրավաբանական ոգնությամբ, և նպատակ ունենալով այդ ուղղությամբ վորոշ աջակցություն ցույց տալ շահադրդովածներին, վորպես հավելված տալիս եմ ամուսնական, ընտանեկան և խնամակալական իրավահարաբերություններից առաջացող վեճերի և խընդիրների վերաբերյալ որինակելի դիմումների և հայտապահանջների 23 նմուշներ:

Ավելորդ չեմ համարում հիշեցնել, վոր թե դատական և թե Զափսի ու խնամակալության որդանները պարտավոր են ընդունել նաև բերանացի դիմումները:

№ 1. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Քանաեռի գյուխորհրդին կից Զափսին

Նույն ոլղացի Աննիկ Հովակիմյանից

Մույն թվի փետրվար ամսից յես հղիացել եմ համադրուղացի Հակոբ Ավետիսի Ալոյանի հետ ունեցած սեռային կենսակցությունից: Խնդրում եմ այս մասին իրազեկ դարձնել հիշյալին և նրան արձանագրել վորպես հայրապազայում ծնվելիք յերեխայի:

Կից ներկայացնում եմ բժշկական վկայական:

Աննիկ Հովակիմյան

12 մայիսի 1931 թ.

Քանաքնո

№ 2. ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Քանախեռի գյուղխորհրդին կից ֆազաֆացիական կացութեան
ակտի տարածութեան մատուցին (Զագսին)

Ստացա Ձեր 14 մայիսի սույն թվի հաղորդագրու-
թյունը: Սրանով յես ժխտում եմ համադրուողացի Աննիկ
Հովակիմյանի կողմից ինձ վերագրված հայրութեան հանգա-
մանքը: Այսոր յես շրջանի ժողովրդական դատարանին
դիմում ներկայացրի նույն իմաստով:

Ալեախա Ալոյան

18 մայիսի 1931 թ.

Քանաքեռ

№ 3. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԶԱՎԱԿԻ ԾՆՆԴԻՑ ՀԵՏՈ

Եզմիածնի Երջանի ժողախորհրդին

Փարաքարցի Շուշիկ Ավետիսի Մանուկյանից

1930 թվի աշնան ամիսներին, սկսած սեպտեմբեր
ամսից, յես փոխադարձ համաձայնութեամբ կենակցել եմ
մեր գյուղացի Ռհան Հակոբի Մարտիրոսյանի հետ և այդ
կենակցութեան ծնվել ե վերջերս մի աղջիկ զավակ:
Նկատի առնելով այն հանգամանքը, վոր հիշյալ Մար-
տիրոսյանը չի ուզում իրեն այդ յերեխայի հայրը ճանաչել
և ապրուստի միջոց հատկացնել, խնդրում եմ դատական
վորոշումով նրան հայր ճանաչել և նրա վրա դնել ծննդա-
բերութեան հետ կապված ծախսերը հատուցանելու և յե-
րեխային ապրուստով բավարարելու պարտականու-
թյունը:

Ի ապացույց մեր սեռային կենակցութեան ներկայաց-

նում եմ նրա ինձ գրած նամակները: Կարող են վկայել նաև հետևյալ անձնավորությունները.

1. Մարիամ Կիրակոսի Սեզրոսյանը, փարաքարցի:

2. Յեղիսաբեթ Ռհաննեսի Արղումանյանը, փարաքարցի:

Ռհան Մարտիրոսյանն այժմ ծառայում է ՆՂմիրաճնում Այգեգործական ընկերության գրասենյակում, վորպես հաշվետար:

Շուշիկ Մանուկյան

2 հունիսի 1931 թ.

№ 4. ԲԱԶՄԱՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ալլանվերդու ԵՐԶԱՆԻ Ժողդասարանին

Դեղ գյուղացի Հակոբ
Աբշավրի Մադոսյանից

Համադյուղացի այրի Յեղսո Համբարձումի Մելքոնյանը հայց է հարուցել Ձեր դատարանում իմ դեմ, վորպես թե ինձ հետ ունեցած սեռային հարաբերությունից հղիացել և ծնել է մի զավակ: Մրանով հայտնում եմ, վոր հիշյալ Յեղսոն մեր դյուղում ուրիշների հետ ևս սեռային կենսակցություն է ունենում և շատ հավանական է, վոր նրանցից լինի հղիացած: Այդ անձնավորությունները հետևյալներն են.

1. Մարկոս Ռհաննեսի Շառոսյանը.

2. Բաղդասար Հարությունի Մողդոսյանը:

Խնդրում եմ նրանց ևս դատական պրոցեսին հրավիրեք, վորպես պատասխանողներ:

Հակոբ Մադոսյանի անգրադիտության պատճառով
ստորագրեցի Սուրեն Հայրապետյան
Հաստատում և ոչուղխորհուրդը (կնիք):

10 ոգոստոսի 1931 թ.

№ 5. ՓԱՍՏԱԿԱՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՄԱՐԱԳՐՆԼՈՒ ՄԱՍԻՆ

Արթիկ գյուղի խորհրդին կից Զագսի սեղանին

Սոֆիկ Մանվելյանից և
Գալուստ Մանուկի Հովակիմյանից
(Արթիկի կոմսիտի
№ 12 զենքի բնակիչներ)

Դ ի մ ու մ

Ստորագրյալներս փոխադարձ համաձայնությամբ Ձ
ամսից ի վեր փաստական ամուսնությամբ կենակցում
ենք: Խնդրում ենք տոմարագրել մեր ամուսնությունը և
տալ մեզ համապատասխան վկայական:

Սոֆիկ Մանվելյան
Գալուստ Հովակիմյան

13 հոկտեմբերի 1931 թ.

Արթիկ

№ 6. ՓԱՍՏԱԿԱՆ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Շամբարդինի օրումնի ժողովուրդին

Շամբարդինցի Մարգո Մարգարի
Հովհաննեսյանից

Հ ա յ ց ա խ ն գ ի բ

Մոտ վեց ամիս յես փոխադարձ համաձայնությամբ
ապրում եմ համազուգացի Միսակ Մանուկի Զարգարյանի
հետ, վոր մեր դուրսում գրադվում ե վարսավիրությամբ:
Իմ հիվանդությունից դժգոհ Զարգարյանն այլևս չի
ցանկանում ինձ հետ ապրել և արդեն մի շաբաթ
ե, վոր ինձ տանից դուրս ե արել, չտալով ինձ վորևե
ապրուստի միջոց:

Խնդրում եմ դատական կարգով ճանաչել մեր փաստա-

կան ամուսնութեանը և նրանից բռնադանձել իմ ողտին ապրուստի միջոց մեկ տարի տնտեսութեամբ Կից՝ ներկայացնում եմ բժշկական վկայական իմ աշխատանքի անընդունակ լինելու մասին:

Խնդրում եմ ինձ տալ ժամանակավոր ապրուստ մինչև գործի վերջնական լուծումը:

Մարդ Հովհաննեսյանի անդրադատութեան պատճառով նրա խնդրանք ստորագրեցի
Կարո Հակոբյան

4 հունիսի 1931 թ.

№ 7. ԱՄՈՒՄՆԱՂՈՒԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԾԽԻ ԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նվճիր գյուղի դատարանին

Հոսում Ռհանի Սերոբյանից

Հ ա յ ց ա խ ն դ ի ր

1928 թվից յես ամուսնացել եմ համադյուղացի Մկրտիչ Տեր-Սիմոնյանի հետ և աշխատել եմ նրա տնտեսութեան մեջ: Մեր ամուսնութեանից ծնվել են յերկու յերեխաներ, մեկը՝ աղջիկ Գնարիկ 2 տարեկան, իսկ մյուսը՝ Միսակ 6 ամսական: Մոտ տասն ուր ե, վոր հիշյալ Տեր-Սիմոնյանը ինձ տանից դուրս ե արել, յերեխաներին խլելով ինձնից և ինձնից վերցրել ե իմ շորերս ու զարդեղեններս: Յես այժմ մնացել եմ անապաստան և ապրուստի միջոցներից զուրկ: Հայտնելով Ձեզ այդ մասին, խնդրում եմ.

1. Լուծել մեր ամուսնութեանը.
2. Յերկու յերեխաներին հանձնել իմ խնամքին.
3. Կատարել ծխաբաժանք և իմ ու յերեխաների շնչաբաժինը հանձնել ինձ.
4. Իմ հագուստեղենս և զարդեղենը բռնադանձել և
5. Յերեխաների ողտին բռնադանձել ապրուստի միջոց:

Անհրաժեշտ եմ համարում հայտնել, վոր իմ ամուսինը մտադրված լինելով ինձ հեռացնել և զրկել ծխի գուլքից, իր հոր հետ վերջերս կատարել է կեղծ բաժանք: Ամուսինս բացի դուրս գալու և սուղ թղթից զրադվում է նաև յերկրագործութեամբ:

Հոռոմ Սերոբյան

2 հունվարի 1931 թ.

Ն Ց. ՏՈՄԱՐԱԳՐՎԱԾ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՅԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՅԵՎ ՏՆԱՅԻՆ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեհիճակաճի Միացյալ ժողգասարանին

Լուսիկ Արքահայանից.
Փողոց № 23, սուն № 18

Հ ա յ ց ա խ ն դ ի ր

Մտա մեկ տարի առաջ Չագսի միջոցով ամուսնացել եմ Տեքստիլի յինթավարպետներից Կարապետ Սարաֆյանի հետ, վորն ստանում է գործարքային աշխատավարձ՝ ամսական միջին հաշվով 220 ռուբլի: Անհամաձայնութեան պատճառով նա ինձ մեկ շաբաթ է, վոր հեռացրել է տանից և յես ժամանակավորապես տեղավորվել եմ նույն տանն ապրող իմ հեռավոր ազգական Մանուկյանի ընտանիքում: Խնդրում եմ անմիջապես ցուցակագրել մեր տան մեջ յեղած գուլքը, վորի մեծագույն մասը ձեռք է բերված մեր ամուսնութեան ընթացքում, և ինձ հատկացնել կես մասը, նաև իմ անձնական շորերը, վորոնց ցուցակը կից ներկայացնում եմ: Յես ինքս նույնպես աշխատում եմ Տեքստիլում և հետևաբար ապրուստի հացի չեմ առաջադրում:

Խնդրում եմ մեր միասին զրադեցրած սենյակը հատկացնել ինձ, քանի վոր ամուսինս քաղաքում ունի ծնողներ, վորոնց մտա նա կարող է տեղավորվել, հակառակ

դեպքում նա կարող է սենյակի վարձել, քանի վոր ստանում է բավարար աշխատավարձ:

Է. Լուսինի Արքահամյան

14 փետրվարի 1931 թ.

№ 9. ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ, ՅԵՐԵԽԱՆՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

Յերեվանի միացյալ ժողդատարանին

Ազգային Սերբիկ Սանատարյանից.
Ալազիսի թիվ. №18

Հ ա յ ց ա խ ն դ ի ր

1922 թվից Չազտով ամուսնացել եմ Յերևանի վերաբնակիչ Էլոն Հակոբի Թորոսյանի հետ, վորպիսի ամուսնությունից կա մի աղջիկ՝ Անթառամ անունով 6 տարեկանը Լ'նտանեկան անախորժությունների պատճառով մեր կենակցությունն այլևս չի կարող շարունակվել: Խնդրում եմ հետևաբար՝ 1) լուծել մեր ամուսնությունը, 2) Անթառամին հանձնել իմ խնամքին, բռնադանձել իմ և յերեխայի ողտին ապրուստի միջոց, 3) սենյակը հատկացնել ինձ և յերեխային և բաժանել սնային դույքը, վորը ձեռք է բերված ամուսնության ընթացքում, և վորի ցուցակը կից ներկայացնում եմ: Ամուսինս աշխատում է Ժողանոնդում հաշվապահի պաշտոնով, ստանում է աշխատավարձ ամսական 250 ռուբլի: Բացի այդ եղմիածնում ծնողների ունեցած այդուց մաս ունի: Խնդրում եմ նշանակել ժամանակավոր ապրուստի միջոց: Յես աշխատանքի ընդունակ եմ: Բայց չեմ կարող աշխատանքի անցնել, քանի վոր իմ բացակայության յերեխային խնամող ընտանիքի այլ անդամ չկա:

Ազգային Սանատարյան

1930 թիվ, ոգոստաի 12,

Յերևան

№ 10. ՆԱԽԱՊԵՍ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՊՐՈՒՍՏԻ
ԶԱՓՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վորոնցովկա գյուղի գյուղդատարանին

Հ ա յ ց ա խ ն դ ի ը

Վորոնցովկայի շրջանի նախկին ժողդատարանի 1929 թվի վերջումով իմ նախկին ամուսին համադյուղացի Սերբ Բուռնազյանից բռնազանձվում ե իմ խնամքին հանձնելիս՝ փոքրահասակ Նմմայի ոգտին ապրուստի միջոց ամսական 10 ռուբլի: Նկատի առնելով այն հանդամանքը, վոր այդ վճռի ժամանակ հիշյալ Բուռնազյանը աշխատավարձ ստանում եր ամսական 75 ռուբլի, իսկ այժմ նա աշխատում ե սպառկոտպի № 2 խանութում վորպես վարիչ և ստանում ե ամսական 140 ռուբլի, խնդրում եմ ավելացնեք յերեխայի ապրուստի միջոցը, դարձնելով այդպիսին առնվազն ամսական 30 ռուբլի:

Մաշո Խաչատրյան

10 սեպտեմբերի 1931 թ.

Վորոնցովկա

№ 11. ՆԱԽԱՊԵՍ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՋՈՑԻ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համամուղ դյուղի բնակիչ

Հովակիմ Զաքարի Բաբուղարյանից

Հ ա յ ց ա խ ն դ ի ը

Համամուղի շրջանի նախկին ժողդատարանի վորոշումով ինձնից բռնազանձվում ե ամսական 30 ռուբլի իմ յերեխայի ոգտին, վոր գտնվում ե իմ նախկին կին՝ Աբուսյակ Մարկոսյանի խնամքի տակ: Մոտ յերկու ամիս

ե, վոր յես հիվանդության պաճառով չեմ ծառայում և ստանում եմ դանձարկղից ընդամենը ամսական 25 ռուբլի նպաստ: Նկատի առնելով այս հանգամանքը, նաև այն, վոր յերեխայի մայրն արդեն անցել է աշխատանքի, ծառայում է Ղարաքիլիսայի սպանկոտպի գրասենյակում վորպես գործավար, ստանում է ամսական 75 ռուբլի, խնդրում եմ ինձ ազատել յերեխայիս ապրուստ տալու պարտավորությունից:

Հովակիմ Բարխուղարյան

№ 12. ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ
ՏԱՆ ԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեւնիացյալ ժողդուստրանին

Վաղգանուշ Հարությունյանից
փող. 18, տուն № 28

Հ ա յ ց ա խ ն դ ի ր

Յես և իմ նախկին ամուսին Ղազար Մարտիրոսյանը փոխադարձ համաձայնությամբ Չազսի միջոցով բաժանված ենք իրարից: Յես հիշյալից ստացել եմ ինձ հասանելիք անձնական և տնային իրերը, բայց Մարտիրոսյանը չէ ուզում հոժարակամ ինձ բաժին հանել ամուսնության ընթացքում գնված տնից, վորտեղ այժմ ապրում ենք մենք:

Ոնդրում եմ, հետևաբար, դատական կարգով բաժանեք հիշյալ տունը, կես մասը հանձնեք իմ տիրապետությանը: Ներկայացնում եմ հոմոնալ բաժնից տեղեկանք այն մասին, վոր տունը գնված է անցյալ տարի, իսկ մեր ամուսնությունը, ինչպես պարզվում է կից Չազսի տեղեկանքից, տեղի յե ունեցել 1928 թվին, իսկ ապահարզանը՝ սույն թվի ոգոստոսի 28-ին:

Նկատի առնելով այն հանգամանքը, վոր յես այժմ
ճառայում և ստանում եմ ընդամենը 60 ռուբլի, խնդրում
եմ միտանական պետական տուրքից ինձ ազատել:

Տունը կոմունալ տնտեսութեան կողմից գնահատված
է 1200 ռուբլի:

Վազգանուշ Հարությունյան

12 սեպտ. 1931 թ.

Լենինական

**№ 13. ՊԱՊԻՑ ԹՈՌԱՆ ՈԳՏԻՆ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՋՈՑ
ԲՌԷԱԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Մուլագյոկչա գյուղի դատարանին

Նույն գյուղացի Աբրիզա
Տեր-Աստվածատրյանից

Հ ա յ ց ա խ ն դ ի ը

Մուլագյոկչայի շրջանի նախկին ժողդատարանի վորո-
շումով իմ նախկին ամուսին Սիրոբ Դավթի Աբրահա-
մյանը պետք է ամսական 15 ռուբլի ապրուստի միջոց
վճարեր ինձ՝ իմ խնամքին հանձնված 2 տարեկան Պողոսի
համար: Մոտ 4 ամիս է, վոր յես այդ ապրուստը չեմ
ստացել, քանի վոր հիշյալ Աբրահամյանը գտնվում է Կար-
միր բանակում և տնտեսապես չքավոր է: Հիշյալ Աբրա-
համյանի բաժան հայրը՝ Պողոս Տեր-Աստվածատրյանը մեր
գյուղում համարվում է ունևոր տնտեսություն, ունի գյու-
ղում դարձնի արհեստանոց և կարող է իր թոռնիկի հա-
մար ապրուստի միջոց ապա:

Խնդրում եմ, հետևաբար, պարտավորեցնել հիշյալ
Պողոս Տեր-Աստվածատրյանին իմ խնամքին հանձնված

Պողոսիկին առ ապրուստի միջոց, ամսական 20 ուրլուց
վոչ պահանք:

Արիզա Տեր-Աստվածատրյանի
անդրադիտության պատճառով և նրա
խնդրանքը ստորագրելի Մացակ
Հակոբյան

19 մայիսի 1931 թ.
Մուսաղյուզա

**№ 14. ԱՄՈՒՄԻՆՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՏԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ
ՋԱԳՍՈՎ ԱՊԱՀԱՐՋԱՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Մաքսուճու գյուղխորհրդին

Նույն դուրացի արդար Հովհաննեսի Սարաֆյանից

Դ ի մ ու մ

Յես այլևս չեմ ցանկանում ապրել իմ կլին Թաղուհու
հետ. ինչպես եմ Ջազսի միջոցով մեզ ապահարզանել:
Արդար Սարաֆյան

10 մայիսի 1931 թ.
Մարտունի

**№ 15. ԱՄՈՒՄԻՆՆԵՐԻ ՓՈՒՍԴԱՐՁ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅԱՄԲ
ՋԱԳՍԻ ՄԻՋՈՅՈՎ ԱՊԱՀԱՐՋԱՆՄԱՆ ՅԵՎ ՅԵՐԵՆԱՅԻ
ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՊՐՈՒՄՏԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՄԱ-
ՋԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նոր Բայազետի ֆողխորհրդին կից Ջազսին

Ն.-Բայազետի վերաբնա-
կիչ Սոնյա Սեդրոսյանից
և Մարդար Սեդրոսյանից

Դ ի մ ու մ

Մենք փոխադարձ համաձայնություն մը ուզում ենք լու-
ծել մեր ամուսնությունը, լիզը ստամարադրված և Յերե-

վանի Զաղսում 1929 թվին: Կից ներկայացնում ենք Զաղսի վիայակհանր:

Մեր ամուսնությունից ծնվել է մի աղջիկ զավակ Ստելլա անունով, վոր այժմ 8 ամսական է: Փոխադարձ համաձայնությամբ Ստելլան հանձնվում է մոր խնամքին, վորի ապրուստի համար մեզանից Մարգար Սեղբոսյանը պարտավորվում է տալ իր ոտճիկի 25⁰/₀: Մարգարը ծառայում է 7-ամյա դպրոցում և ստանում է այժմ ամսական 170 ուրբլի:

Յնդրում ենք տոմարագրել մեր այս հայտարարությունը և տալ անհրաժեշտ վիայակհան:

Մոնյա Սեղբոսյանը սրանից հետո պիտի կրի իր նախկին ազգանունը—Հարությունյան:

Մոնյա Սեղբոսյան
Մարգար Սեղբոսյան

18 սեպտ. 1931 թ.

Ն.-Բոթաղեա

№ 16. ԶԱՎԱԿԻՑ ԾՆՈՂԻ ՊԱՀԱՆՁԱԾ ԱՊՐՈՒՍԻ ՄԱՍԻՆ

Գորիսի Երզանի ժողգոստրամին

Գորիսի վերաբնակիչ
Մարիամ Ոհաննեսի Ադունցից,
փողոց № 20, տուն № 64

Հ ա յ ց ա խ ն դ ի ը

Յես 60-ամյա անաշխատունակ կին եմ, ապրուստի միջոցներից իսպառ գուրկ: Ունեմ յերկու զավակ, վորոնք ծառայում են, բայց ինձ անհրաժեշտ ապրուստի միջոց չեն ուզում տալ: Նրանցից մեկը՝ Հակոբ Ադունցը ծառայում է Ղափանի Կարլ Մարքսի անվան հանքերում վորպես տեխնիկ և ստանում է ամսական 225 ուրբլի,

իսկ փոքրը՝ Մանկասարը ծառայում և Գորիսի շրջաօրծկոմում վերսկսեա ավագ հաշվետար, ամսական 150 ուռլլի աշխատավարձով:

Խնդրում եմ նրանցից բռնադանձեկ իմ ողտին ապրուստի միջոց վոչ պակաս ամսական 60 ուռլլուց:

Մարիամ Աղունց

12 հոկտ. 1931 թ.

Գորիս

№ 17. ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Յեռեվանի միացյալ ժողդատարանին

Իլլիչի անվան բնակիչնկոտայի վարչության
նախագահ Սերբոյան Գանուշից

Ալլահվերդյան փող., № 41.

Հ ա յ ա ր ա ր ու թ յ ու ն

Մեր Բնակիչնկոտայի հիշյալ տան բնակիչներից Հայրապետյան Մարգարը և նրա կին Արուսյակը միանգամայն անխնամ են թողնում իրենց մանկահասակ յերեխային, վորը ընդամենը 5 տարեկան է: Հաճախ նրանք թողնում են յերեխային անտեր և անոգնական և դնում իրենց անձնական հաճույքին: Մարգարը հաճախ տուն է վերադառնում գինով դրության մեջ, ծեծում է ու տանջում յերեխային. մայրը կինոյից և թղթախաղից ժամբնակ չունի յերեխային խնամելու և դաստիարակելու: Մանկահասակ կիզան արդեն իսկ հյուժված և հիվանդկախ դրության մեջ է. ծնողները չեն մտահոգվում նույնիսկ նրան մանկապարտեզ ուղարկելու մասին: Մեր վարչության, ինչպես և հարեվաններին խորհուրդները վոչ մի հետևանք չեն ունենում:

Կարծում ենք, վոր յերեխայի շահերը պահանջում են

նման ծնողներին գրկել իրենց ծնողական իրավունքներից,
Լիգային հանձնել պետական մսուր և բռնազանձել հայր՝
Մարգար Հայրապետյանից անհրաժեշտ ծախսու: Վերջինս
ծառայում է Ջրային անտեսության մեջ վորպես հաշվապահ
և ստանում է ամսական 250 ռուբլի աշխատավարձ:

Դանուշ Սերոբյան

**№ 18. ԱՆԱՇԽԱՏ ՅԵԿԱՄՏՈՎ ԱՊՐՈՂԻՑ ԱՊՐՈՒՍՏԻ
ՀԵՏԱԳՍ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեմմիոցյալ ժողդատարունիմ

Վարդուհի Հայրապետի
Ազոյանից
Փողոց № 9, տուն № 87

Հ ա յ ա ր ա ր ու թ յ ու ն

Իմ նախկին ամուսին Կարո Նազարյանը, վորը ապրում
է վորդ. № 18, տուն № 31-ում և վորը պարտավոր է, հա-
մաձայն դատարանիդ վորոշման, ամսական 60 ռուբլի
ապրուստ վճարելու իմ խնամքին հանձնված յերկու գա-
վակների համար, կամենում է ծախել իր սեփական հի-
շյալ տունը, վորտեղ նա ապրում է, և հեռանալ Հայաստա-
նից: Նկատի առնելով այն հանգամանքը, վոր հիշյալ
Նազարյանը նախկին առևտրական է, այժմ անգործ, և
տան վաճառքից հետո յես հնարավորությունն չպիտի
ունենամ ապրուստի միջոց ստանալու և յերեխաներին
խնամելու, խնդրում եմ Ձեր կարգադրությունը՝ արգելել
հիշյալ տան վաճառքը, մինչև վոր նա ինձ կապահովի
համաձայն գործող որենքների: Խնդրում եմ անմիջապես
արգելանք դնել հիշյալ տան վրա:

Վարդուհի Ազոյան

№ 19. ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՋՈՑ ՏԱԼՈՒՑ ՉԱՐԱՄՏՈՐԵՆ
ԽՈՒՍԱՓԵՆԼՈՒ ՀՄՄՐ ՔՐ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒ-
ԹՅԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Յերեվանի միացյալ ժողդատարանին

Յեկզինե Ղուկասյանից
Ապահարյան փող. № 75

Հ ա յ ց ա խ ն դ ի ր

Դատարանիդ 10 փետր 1930 թվի վորոշումով հաստատվել է իմ ապահարգանք նախկին ամուսնուս՝ Դրաստամատ Ղուկասյանի հետ և մեր ամուսնությունից ծնված յերկու յերեխաները՝ Ռոզիկ 12 տարեկան և Նորիկ 3 տարեկան հանձնված են իմ խնամքին, վորոնց, համաձայն դատարանի վորոշման, հայրը պետք է ապրուստի միջոց վճարեր ամսական 60 ուրլի: Հակառակ նրան, վոր յերեխաների հայրը ամսական միջին հաշվով 200 ուրլի վաստակում է, վորպես մամնավոր դերձակ, բայց ապրուստի միջոցը խիստ անկանոն է վճարում և այդպիսով զրկում է ինձ յերեխաների ապրուստի և դաստիարակության անհրաժեշտ միջոցներէց:

Նկատի առնելով, վոր Դրաստամատ Ղուկասյանը չարամտորեն խուսափում է ապրուստի իր պարտավորությունից, խնդրում եմ նրան յենթարկել ջրեհական պատասխանատվության և արգելք դնել նրա խանութի և տան մեջ գտնված գույքի վրա՝ վեց ամսից ավելի կուտակված ապրուստի գումարի բռնագանձումն ապահովելու համար:

Յեկզինե Ղուկասյան

12 ոգոստոսի 1931 թ.
Յերեան

№ 20. ՎՈՐԳԵԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեւեալստրհրդին

Լեւինականի վերաբնակիչ
Սմբատ Սարուբանի Ալեք-
սանյանից

Փող. № 16, տուն № 192

Դ ի մ ու մ

Չունենալով վոչ մի դավակ, յես կնոջս՝ Արուսյակի հետ համաձայնութեամբ ուզում ենք վորդեղրել Լեւեալստրհրդի № 12 փողոցի № 28 տան բնակիչ այրի Սիրուշ Հայրապետայանի յերկու տարեկան աղջկան՝ Ռոզային: Հիշյալ Հայրապետայանը ծառայում ե հիվանդանոցում վորպես մաքրող, ընտանիքում վոչ վոր չունի և հնարավորութեանից զուրկ ե յերեխային խնամելու և դաստիարակելու: Կից ներկայացնում ենք նրա զբավոր համաձայնութեանը՝ հաստատված Չ-րդ հիվանդանոցի վարչութեան կողմից:

Յես այժմ ծառայում եմ Լեւնարդում վորպես եկոնոմիստ և ստանում եմ 250 ռուբլի աշխատավարձ: Կինս ունի միջնակարգ կրթութեան և զբաղվում ե առանին աշխատութեամբ: Խնդրում ենք Ձեր շուտափութ վորոշումը: Մեքատ Ալեքսանյան

№ 21. ՇՌԱՅԼՈՂԻ ՎՐԱ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Յերեվանի Բաղխտրհրդին

Մաննիկ Քոչարյանից
Ռուբենի փող. № 66

Դ ի մ ու մ

Մոռսինս, Բագրատ Քոչարյանը, վոր ապրում ե առանձին բնակարանում (Սպանդարյան փող. № 24 տուն) վերջին ամիսներս շոայլում ե իր ստացած աշխատավարձը՝

ամսական 250 ուրբլին կերուխումի միջոցով, առանց մտածելու յերեխաների ապրուստի և դպրոցական ծախսերի մասին: Իմ և բարեկամների խորհուրդներն անցնում են առանց հետևանքի: Հիմնարկութեան տեղկումի կողմից կատարված նախազգուշացումը նույնպես վոչ մի ազդեցութեուն չի գործում:

Հայտնելով այս մասին՝ խնդրում եմ Ձեզ, վորպես խնամակալութեան և հոգաբարձութեան մարմնի, խնամակալութեան տակ առնել հիշյալ Բազբաս Գոչարյանին, միաժամանակ նրա աշխատավարձի 50⁰/₁₀-ը հատկացնել ինձ, յերեխաների կարիքների համար:

Մաննիկ Գոչարյան

№ 22. ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴԻՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՏԱԿ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեհեադիտրիդի

Լեհեադիտրիդի
Մարզար Սմբատյանից
Փող. № 16, տուն № 27

Հայտարարութեուն

Իմ տան վարձակալներից մասնավոր առհեստավոր Բենիկ Կարապետյանը (32 տարեկան) վերջին ժամանակներս ցույց է տալիս հոգեկան հիվանդի նշաններ. հիվանդութեունը գնալով ուժեղանում է. նա միայնակ է և հսկող ու խնամող չունի. տան բնակիչները, մասնավոր յերեխաները, սարսավի մեջ են:

Հայտնելով այս մասին՝ խնդրում եմ բժշկական քննութեան յենթարկել հիշյալ Կարապետյանին և ի հարկին նրա վրա նշանակել խնամակալ:

Մարզար Սմբատյան

№ 23. ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴԻՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՅ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Յերեվանի Քաղաքապետի

Գյուլիստատուտի գերեզմանից

Գ ի մ ու մ

Մեր ինստիտուտի առաջին կուրսի ուսանող Վարդան Մամիկոնյանը, 20 տարեկան, բնիկ շուշեցի, վորպես հողեկան հիվանդ վեց ամսից ի վեր սեզավորված և հողբուժական հիվանդանոցում: Վերջին յերկու ամիսները նա արդեն հավասարակշռվել և և վոչնչով չի արտաճատում իր աննորմալությունը: Ըստ խնամող բժշկի կարծիքի Մամիկոնյանին արդեն առողջացած կարելի յե համարել:

Խնդրում ենք բժշկական հանձնաժողովի միջոցով վերջնական քննության յենթարկել նրան, ազատել նրան խնամակալությունից և հնարավորություն տալ նրան ուսուցը շարունակելու:

Դերեկտոր՝ Բշտունի Ղարիբյան

18 հոկտ. 1931 թ.

Յերեան





Յ Ը Ն Կ

Գլուխ Ա. ՆԱԽԱԲԱՆ	62
Գլուխ Բ. ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ	3
	5

1. Յեկեղեցականի փոխարեն քաղաքացիական ամուսնություն (5), 2. Տոմարազրված ամուսնությունը և նրա նշանակությունը (8), 3. Փաստական ամուսնությունը և նրա իրավական նշանակությունը (12), 4. Ամուսնության համար պահանջվող պայմաններ (16):

ա. Տարիք կամ ամուսնական շափահասություն (17), բ. Առողջություն (22), գ. Մոտ ազգականների ամուսնության արգելքը (26), զ. Ամուրիություն (27), հ. Փոխադարձ համաձայնություն (30):

5. Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները (36):

ա. Անձնական փոխհարաբերություններ (36), բ. Ամուսինների ստացվածքային փոխհարաբերությունները (41):

Գլուխ Գ. ԸՆՏԱՆԻՔ	68
------------------	----

1. Ամուսնական և արտամուսնական զավակների իրավական դրությունը (68), 2. Հայրություն ճանաչման կարգը (71), 3. Ծնողների և զավակների անձնական փոխհարաբերությունները (75), 4. Ծնողների և զավակների ստացվածքային փոխհարաբերությունները (82), 5. Այլ ազգականների փոխհարաբերությունը (88):

Գլուխ Դ. ՎՈՐԴԵԳՐՈՒԹՅՈՒՆ	90
-------------------------	----

1. Խորհրդային իշխանության վերաբերմունքը վորդեգրության նկատմամբ (90), 2. Վորդեգրման

կարգը (96), 3. Վորդեգրվածի և վորդեգրողի անձնական և ստացվածքային հարաբերությունները (101):

Գլուխ Ե. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐ-
ՉՈՒԹՅՈՒՆ 103

1. Լնամտկալության և հոգաբարձության ընդհանուր սկզբունքները (103), 2. Խնամակալների և հոգաբարձուների իրավունքներն և պարտականությունները (111), 3. Խնամակալության և հոգաբարձության վերաբերող գործերի քննություն կարգը (117), 4. Հողեկան հիվանդներին և տկարամիտներին բժշկական քննություն յենթարկելու մասին (120):

Գլուխ Զ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ
ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 122

1. Ծնունդների տոմարագրումը (122), 2. Մահվան դեպքերի տոմարագրությունը (124), 3. Ամուսնություն և ապահարգանի տոմարագրությունը (125):

ՀԱՎԵԼՎԱԾ. ՎԵՃԵՐԻ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱ-
ԲԵՐՅԱԼ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՅՑԱՊԱ-
ՀԱՆՋՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ 128

Խմբագիր Պ. Թորոսյան
Սրբազորի Լ. Արսվյան
Լամձնված է առաջադրյաճ 19 հոկտեմբերի 1933 թ.
Ստորագրված է սպազորելու 15 դեկտեմբերի 1933 թ.
Գլավիկո 7776 (թ). Հրատ. № 139.
Պատվեր № 53. Տիրած 1500. 180.000 տղ. ԵԵ.
Կուսերաօի սպարաճ. Յեղեկաճ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038267

(604)
ԳԻՆԸ 1 ք. 20 Կ.

A $\frac{\text{II}}{38267}$

Դ. ԳԱԼԻԿՅԱՆ

Երաժշտական և ընտանեկան իրավունք